

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

ՎԱՐԿ N 2752-ARM (SF)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՏՐԱՆՇ-1 (ԵՐԵՎԱՆԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ ԵՎ ԱՐՏԱՇԱՏԻ
ԽՃՈՒՂԻ)

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՕՏԾ - 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՕՂԱԿԱԶԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարկ No. 2752-ARM

ԲՖԳ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ, ՏՐԱՆՇ 1



ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԹԻՎ 1 ԾՐԱԳԻՐ

Ենթածրագիր 2-ի Արշակունյաց պողոտա և Արտաշատի խճուղու հատվածներ

Խորհրդատու



**Ֆինանսավորող
գործակալություն**



Ասիական զարգացման բանկ

**Իրականացնող
գործակալություն**



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ԱԵԸ	Ազդեցության ենթարկված ընտանիք
ԱԵՏՏ	Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄԳ	Անկախ մոնիտորինգի գործակալություն
ԱՄՆ դոլար	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար
ԱՆՍՌԱ	Աղքատության նվազեցման և սոցիալական ռազմավարության ամփոփագիր
ԱՍՀՆԳ	Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում
ԱԲՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ԳՄ	Գործադիր մարմին
ԵՔ	Երևանի քաղաքապետարան
ԻԳ	Իրականացնող մարմին
ԾԻԳ	Ծրագրի իրականացման գրասենյակ
ԾԿԻԱԽ	Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատու
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԾՆՏԱ	Ծրագրի նախապատրաստման տեխնիկական աջակցության
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՕՏՇ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՄՆՇՎԽ	Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատու
ՄԶՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՊՇ	Պարտավորությունների շրջանակը
ՍՏՀ	Սոցիալ-տնտեսական հետազոտություն

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ազդեցության ենթակա անձ/անձինք (ԱԵԱ)՝ Բոլոր անձինք, ովքեր Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության են ենթարկվում հողամասի օտարման, վերաբնակեցման կամ եկամտի կորստի հետևանքով՝ ներառյալ ցանկացած անձ, տնային տնտեսություն (երբեմն կոչվում են Ծրագրի ազդեցությանը ենթակա ընտանիք), ընկերություն կամ հասարակական կամ մասնավոր հաստատություն: Հետևաբար, ԱԵԱ-ների թվին են պատկանում՝ 1) մարդիկ, ովքեր ուղակիորեն ենթակա են ճանապարհային միջանցքի, օտարման գոտիների, աշտարակի կամ սյուների հիմքերի կամ շինարարական աշխատանքների ազդեցությանը, 2) մարդիկ, որոնց գյուղատնտեսական հողամասը կամ այլ արտադրական սեփականությունները, ինչպես օրինակ՝ ծառերն են կամ մշակաբույսերը, ենթարկվում են շինարարական աշխատանքների ազդեցությանը, 3) մարդիկ, որոնց ձեռնարկատիրական գործունեությունն ենթարկվում ազդեցության, և ովքեր Ծրագրի ազդեցության հետևանքով կարող են ունենալ եկամտի կորուստ, 4) մարդիկ, ովքեր աշխատանք են կորցնում Ծրագրի իրականացման հետևանքով, 5) մարդիկ, ովքեր Ծրագրի հետևանքով զրկվում են համայնքային ռեսուրսներից/գույքից:

Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն (ԱԵՏՏ)՝ Մեկ տանիքի տակ բնակվող բոլոր անդամները, որոնք գործում են որպես մեկ տնտեսական միավոր: Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը կարող է բաղկացած լինել մեկ հիմնական ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքային խմբից: Սա փոխհատուցում/վերականգնում ստացող կարևորագույն միավոր է:

Փոխհատուցում՝ Օտարված կամ Ծրագրի ազդեցությանը ենթակա ակտիվների փոխարինման արժեքի վճարում կանխիկով՝ ընթացիկ շուկայական արժեքի հիման վրա:

Կասեցման օր՝ Այն օրը, որից հետո մարդիկ փոխհատուցում ստանալու իրավունք չեն ունենա, այսինքն՝ նրանք ներառված չեն լինի ԱԵԱ-ների համապատասխան ցանկում: Կասեցման օրից հետո կատարված բարելավումներն ենթակա չեն փոխհատուցման:

Իրավունքներ՝ Փոխհատուցում, եկամտի վերականգնում, վերաբնակեցման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթարկված անձանց՝ կախված նրանց կորուստների բնույթից՝ նրանց տնտեսական և սոցիալական հիմքերը վերականգնելու համար:

Հյուրընկալող բնակչություն՝ Այն տարածքին մոտ գտնվող համայնքը, ուր ծրագրի շահառուները, որպես ծրագրի մաս, պատրաստվում են կամավոր կերպով վերաբնակվել:

Բարելավումներ՝ Անձի, տնտեսության, հաստատության կամ կազմակերպության կողմից կառուցված շինություններ (բնակարան, ցանկապատ, ծածկ, գոմ, հաղորդողիներ, համայնքային հարմարանքներ, խանութներ, պահեստներ, ասֆալտապատ մակերևույթներ և այլն) և ցանված մշակաբույսեր:

Հողի օգտարում՝ Միջոցառումների շրջանակ, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում սեփականության օտարման, օտարվող սեփականության դիմաց համարժեք փոխհատուցման տրման գործընթացներն իրականացնելու նպատակով:

Վարձակալություն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված քաղաքացիա-իրավական ինստիտուտ, որի շրջանակներում կնքվող վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի

Ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: **Վարձակալ** – Այն ԱԵԱ-ն, ում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնվել է գույքը:

Օրինական կարգավիճակի ստացում՝ Այն շինությունը, որն ՀՀ օրենսդրության սահմանված կարգով չի հանդիսանում կադաստրային միավոր, բայց կարող է ստանալ օրինական կարգավիճակ: Օրինական կարգավիճակի ստացման համար ԱԵԱ-ները պետք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործընթաց իրականացնեն՝ Երևանի քաղաքապետարանի և / կամ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ:

Մարզ-Համայնք՝ Հայաստանի Հանրապետությունը բաժանված է 10 մարզերի: Մարզերից յուրաքանչյուրը ղեկավարվում է մարզպետի կողմից, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Յուրաքանչյուր մարզ բաղկացած է համայնքներից, որոնք ինքնակառավարվող են և բաղկացած են մեկ կամ ավելի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են որպես քաղաք կամ որպես գյուղ: 2007 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կա 915 համայնք, որոնցից 49-ը համարվում են քաղաքային և 866-ը՝ գյուղական: Երևանը, որը նախկինում մարզի կարգավիճակ ուներ, ներկայումս ունի համայնքի կարգավիճակ և ղեկավարվում է ընտրովի քաղաքապետի կողմից:

Օրինականացման ոչ ենթակա՝ Որպես այսպես կոչված «կարմիր գոտիներ» դասակարգված տարածքները (այն տարածքները, որոնք պաշտոնապես պահված են որոշակի հասարակական օգտագործման նկատառումներով, ինչպես օրինակ՝ ռազմական տարածքները, հիվանդանոցների, դպրոցների տարածքները կամ բնակավայրերի համար պիտանի չեղող տարածքները՝ գետի հուները, ռադիոակտիվ տարածքները կամ այլ վտանգավոր կամ էկոլոգիապես անպիտան հողամասերը):

Վերականգնում՝ Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում տրամադրված փոխհատուցում, որը չի ենթադրում օտարված գույքի փոխարինման արժեքի վճարում:

Վերաբնակեցում՝ ԱԵԱ-ի/ԱԵՏՏ-ի ֆիզիկական տեղահանումն այն վայրից, որը հանդիսանում էր նրա բնակավայրը նախքան Ծրագրի իրականացումը:

Փոխարինման արժեք՝ Այն արժեքը, որը գնահատվում է որպես հողամասի համար արդարացի փոխհատուցում՝ հիմնվելով դրա բերքատվության պոտենցիալի, շենքերի և շինությունների փոխարինման արժեքի (շինանյութերի և աշխատուժի տվյալ պահի շուկայական իրական գինը առանց ամորտիզացիոն մասհանումների կամ փրկված շինանյութի համար մասհանումների), ինչպես նաև բնակելի տարածքների, բերքի, ծառերի և այլ ունեցվածքի շուկայական արժեքի վրա:

Տարաբնակեցում՝ Բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են մեղմացնելու համար ԱԵԱ-ների սեփականության և (կամ) ապրուստի վրա Ծրագրի թողած բացասական որևէ ազդեցությունը, ներառյալ՝ փոխհատուցումը, վերաբնակեցումը, եթե այն անհրաժեշտ է, և վնասված/քանդված ենթակառուցվածքների ու սարքավորումների վերականգնումը:

Զգալի ազդեցություն՝ Զգալի ազդեցությունն այն է, երբ 200 կամ ավելի մարդիկ ենթարկվում են խոշոր ազդեցությունների, որոնք ներառում են՝ 1) ֆիզիկական տեղահանումը, կամ 2) արտադրական (եկամտաբեր) գույքի տասը կամ տասից ավել տոկոսի կորուստը:

Սոցիալապես խոցելի տնային տնտեսություններ՝ Դրանք այն տնտեսություններն են, որոնք՝ 1) հաշվառված են Խոցելի ընտանիքների գնահատման համակարգում (ԽԸԳՀ) և ստանում են ընտանեկան նպաստ, 2) որոնք ղեկավարվում են միայնակ կանանց կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) այլ չափահաս,

աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները, 3) որոնք ղեկավարվում են տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից, որտեղ կայուն եկամուտ ունեցող (առնվազն նվազագույն ամսական աշխատավարձի չափով) չափահաս, աշխատունակ տարիքի անձ չկա՝ բացառությամբ զինծառայություն անցնող կամ քսաներեք տարին չլրացած ցերեկային ուսուցմամբ սովորողները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ	8
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	20
1.1 Ընդհանուր տեղեկություններ	20
1.2 Ծրագրի տեղակայվածությունը	20
1.3 Ծրագրի նկարագրությունը	21
1.4 Ենթածրագիր 2. Շիրակի փողոց և Արշակունյաց պողոտա-Արտաշատի խճուղի քաղաքային ճանապարհային հանգույց	23
1.4.1 Տեղակայվածությունը և նկարագրությունը	23
1.4.2 Ենթածրագրի իրականացման ժամանակացույցը	23
1.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1 –ի մշակումը	23
1.6 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի շրջանակը և կարգավիճակը	24
1.7 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի նպատակը	24
1.8 Հողի օտարում և տարաբնակեցում. ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները	25
1.9 Փաստաթղթի հրապարակումը.....	26
1.10 Ծրագրի կասեցման օրը	27
2. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ	28
2.1 Ընդհանուր տեղեկություններ	28
2.2 Հետազոտության մեթոդաբանությունը	28
2.3 Ազդեցություն հողամասի վրա	29
2.3.1 Հողի դասակարգումը՝ ըստ ՀՀ հողային օրենսգրքի.....	29
2.3.2 Հողամասի կորուստ	30
2.4 Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա	32
2.4.1 Բնակելի կառույցներ.....	32
2.4.2 Ոչ բնակելի կառույցներ.....	32
2.4.3 Ցանկապատեր և բարելավումներ.....	42
2.4.4 Ազդեցությունը շենքերի/շինությունների վրա և վերաբնակեցման ռազմավարությունը	43
2.5 Ազդեցությունը մշակաբույսերի վրա	51
2.6 Ազդեցությունը ծառերի վրա.....	51
2.7 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և եկամտի վրա	53
2.8 Ազդեցությունը զբաղվածության վրա	55
2.9 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների և ազդեցության ենթակա անձանց տվյալների ամփոփում	56
2.9.1 Զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններ.....	58
2.9.2 Ազդեցությունը աղքատների և խոցելի խմբերի վրա	59
2.9.3 Ազդեցության ենթակա անձանց սեռը	60
2.9.4 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը	60
Աղյուսակ 2.21 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը	60
3. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ	61
3.1 Ընդհանուր տեղեկություններ	61
3.2 Հետազոտության մեթոդաբանությունը	61
3.3 Ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը.....	62
3.3.1 Ընտանիքի կազմը և սոցիալ-տնտեսական դասակարգումը.....	62
3.3.2 Սեռը.....	62
3.3.3 Տարիքը	63
3.3.4 Կրթությունը	63

3.3.5	Զբաղվածության և եկամտի աղբյուրները	64
3.3.6	Եկամուտներ և ծախսեր	65
3.3.7	Ծրագրի ընկալումը	66
4.	ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ	68
4.1	Ընդհանուր տեղեկություններ	68
4.2	Հանրային լսումներ	68
4.3	Տեղեկատվության հրապարակումը	71
5.	ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	73
5.1	Ներածություն	73
5.2	Բողոքների լուծման ընթացակարգը	73
5.3	Տեղեկատվության և բողոքների լուծման ծառայությունների մատչելիությունը	74
6.	ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	76
6.1	ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրություն	76
6.1.1	Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրությունը	76
6.1.2	Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները	77
6.1.3	Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը	77
6.1.4	Սույն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հողամասի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները	79
6.2	Իրավասությունը	79
6.3	Փոխհատուցման իրավունքները	80
6.4	Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում	86
6.5	Հարկադիր օտարման պայմանները	87
6.6	Օրինականացման պայմանները և մեխանիզմը	87
7.	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԵԿԱՄՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ	88
7.1	Ընդհանուր տեղեկություններ	88
7.2	Եկամտի վերականգնման միջոցառումներ	89
7.2.1	Բնակավայրից վերաբնակեցում	90
7.2.2	Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեություն	91
7.2.3	Ազդեցության ենթակա եկամուտ	93
8.	ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ	95
8.1	Ընդհանուր տեղեկություններ	95
8.2	Ֆինանսավորման աղբյուրները և բաշխումը	95
8.3	Օտարվող հողի դիմաց փոխհատուցումը	96
8.3.1	Գնահատման մոտեցումը	96
8.3.2	Հողի օրինական սեփականատերերի փոխհատուցումը	96
8.3.3	Փոխհատուցումը հողամասի վարձակալներին	97
8.4	Փոխհատուցում շենքերի, շինությունների և բարելավումների համար	98
8.4.1	Գնահատման մոտեցումը	98
8.4.2	Բնակելի շինություններ	99
8.4.3	Ոչ բնակելի շինություններ	99
8.4.4	Ցանկապատեր և բարելավումներ	106
8.5	Մշակաբույսերի և ծառերի փոխհատուցումը	107
8.5.1	Մշակաբույսեր	107
8.5.2	Մրգատու ծառեր	108
8.5.3	Փայտանյութ տվող ծառեր	110
8.5.4	Դեկորատիվ ծառեր	111

8.6	Փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության և եկամտի կորստի դիմաց	
	112	
8.6.1	Ձեռնարկատիրական գործունեության կորուստներ.....	112
8.6.2	Եկամտի կորուստներ.....	113
8.7	Նպաստներ	114
8.7.1	Զգալի ազդեցության նպաստ	114
8.7.2	Նպաստներ խոցելի խմբերի համար	114
8.7.3	Վերաբնակեցման նպաստ	114
8.8	Գրանցման ծախսերը	116
8.9	Բյուջեի ամփոփում	118
9.	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	120
9.1	Ընդհանուր տեղեկություններ	120
9.2	Հիմնական գործակալություններ և կազմակերպություններ	120
9.2.1	Ասիական զարգացման բանկ	120
9.2.2	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	120
9.2.3	Երևանի քաղաքապետարանը և ծրագրի իրականացման գրասենյակը	120
9.2.4	Խորհրդատուներ.....	121
9.3	Այլ գործակալություններ և հաստատություններ	122
10.	ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 1-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ	
	ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....	123
10.1	Ներածություն	123
10.2	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի պատրաստման գործողությունները	123
10.3	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի իրականացման փուլերը	124
10.4	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի իրականացման ժամանակացույցը.....	125
11.	ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	128
11.1	Ընդհանուր տեղեկություններ	128
11.2	ՆԵՐՔԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	128
11.3	ԱՐՏԱՔԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ.....	129
11.3.1	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման կարճաժամկետ մոնիտորինգ և գնահատում	129
11.3.2	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերականգնողական միջոցառումների արդյունքների երկարաժամկետ գնահատում	130

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

- Հավելված 1 ՀՕՏԾ 1 Ծրագրի տեղեկատվական բրոշյուր
- Հավելված 2 ՄՁՀ, մարդահամար, ՍՏՀ և գնահատման մեթոդաբանություն
- Հավելված 3 Հարցաշար աշխատողների համար
- Հավելված 4 Հարցաշար փոքր և միջին բիզնեսի համար
- Հավելված 5 Հարցաշար խոշոր բիզնեսի համար
- Հավելված 6 Հարցաշար մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության համար
- Հավելված 7 Հանրային լուծումների ընթացքում ԱԵԱ-ներին տրամադրված Ծրագրի տեղեկատվական բրոշյուր
- Հավելված 8 Հանրային լուծումների ընթացքում ԱԵԱ-ներին տրամադրված գնահատման մեթոդաբանության բրոշյուր
- Հավելված 9 Ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցությունը և փոխհատուցումը
- Հավելված 10 Բնակության վրա ազդեցությունը և փոխհատուցումը
- Հավելված 11 ԱԵԱ-ների ցուցակը՝ համապատասխան կորուստներով

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Ծրագրի պատմությունը

1) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում Ծրագիր 1-ը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով՝ իրականացվելով ՀՀ Էկոնոմիկային նախարարության (ԷՆ) կողմից, որը հանդիսանում է որպես Գործադիր մարմին (ԳՄ), և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից, որը հանդիսանում է որպես Իրականացնող մարմին (ԻՄ)՝ անմիջապես աշխատելով ԾԻԳ-ի միջոցով: Ծրագրի հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օդակի բացակայող ճանապարհային հանգույցները Երևան քաղաքում:

2) Ծրագիրը ներառում է երկու Ենթածրագրեր՝ 1) Արգավանդի մայրուղի – Շիրակի փողոցի արևմտյան հատված (Ենթածրագիր 1), 2) Շիրակի փողոց – Արտաշատի խճուղի, ներառյալ՝ Արշակունյաց պողոտայի լայնացումը (Ենթածրագիր 2):

3) Ծրագիրը պահանջում է հողի զգալի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ)՝ ավելի քան 200 ազդեցության ենթակա անձանցով (ԱԵԱ): Համաձայն ԱԶԲ ուղեցույցների՝ այն դասակարգվել է որպես Ա կատեգորիա:

4) Ողջ Ծրագրի ՀՕՏԾ իրականացմանը նպաստելու նպատակով՝ Ծրագրային տարածքը բաժանվեց հետևյալ երեք մասերի, որոնց համար կմշակվեն առանձին ՀՕՏԾ-եր.

ա. ՀՕՏԾ 1 – Արշակունյաց պողոտայի հատված և Արտաշատի խճուղու հատված

բ. ՀՕՏԾ 2 – Արգավանդի մայրուղու հատված

գ. ՀՕՏԾ 3 – Նոր Շիրակի փողոցի հատված

5) ՀՕՏԾ 1-ն անդրադառնում է Ենթածրագիր 2-ի ՀՕՏ ազդեցության մի մասին, որի մնացած մասը ներառված է ՀՕՏԾ 3-ում: Այն հիմնված է մանրամասն նախագծի վրա, որն իրականացվել է 2012թ. նոյեմբերից մինչև 2013թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում: Շինարարությունը նախատեսում է երկու գոյություն ունեցող ճանապարհների լայնացումը, ինչպես նաև արագընթաց ճանապարհի չափանիշներով նոր ճանապարհային հանգույցի կառուցում, որը կկապի գոյություն ունեցող Շիրակի փողոցն ու Արշակունյաց պողոտան Արտաշատի խճուղու հետ: Մեկ հիմնական փոխհատում կբարելավվի՝ ներառելով ուղեանցեր երկու երկաթուղային գծերի համար, ինչպես նաև կապահովվեն մուտքեր դեպի տեղական ճանապարհները: Ընդհանուր առմամբ, Ենթածրագիրը ներառում է 4.8կմ քաղաքային ճանապարհի կառուցում:

2. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի նպատակն ու շրջանակը

6) ՀՕՏԾ 1-ի հիմնական նպատակն է բացահայտել Ենթածրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձանց և աջակցել նրանց՝ վերականգնելու իրենց կենսամակարդակը: ՀՕՏԾ 1-ը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրին:

7) ՀՕՏԾ 1-ի շրջանակը ներառում է՝ 1) ԱԵԱ-ների պրոֆիլը, 2) ազդեցության ենթակա ամբողջ գոյքի մանրամասն չափագրման հետազոտություն (ՄԶՀ), 3) տեղեկատվության հրապարակում և ԱԵԱ-ների հետ հանրային լուծման կազմակերպում, 4) վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը, 5) բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը, 6) տարաբնակեցման բյուջեն, 7) ինստիտուցիոնալ

շրջանակը 8) ՀՕՏԾ իրականացման ժամանակացույցը և 9) ՀՕՏԾ իրականացման մոնիտորինգը:

3. Ազդեցությունների ամփոփում

8) ԱԵՏՏ/ԱԵԱ մարդահամարի հետազոտությունն ու ազդեցության ենթակա ողջ գույքի ՄՉՀ-ն իրականացվել է 2012 թվականի դեկտեմբերից մինչ 2013 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում:

9) ՀՕՏԾ 1-ի շրջանակում բացահայտվել են 114 հողամասեր, որոնցից

ա. 3 -ը հանդիսանում են 3 ԱԵՏՏ-ների սեփականությունը,

բ. 2 հողամասեր ԵՔ-ից վարձակալված են 2 ԱԵՏՏ-ների կողմից,

գ. ԵՔ սեփականություն հանդիսացող 102 հողամասեր ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվում են 99 ԱԵՏՏ-ների կողմից,

դ. 6 հողամասեր (հանդիսանում են ԵՔ սեփականությունը) անմիջապես օգտագործվում են համայնքի կողմից,

ե. 1-ը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը:

10) Համայնքի կողմից օգտագործվող 6 հողամասերից և ՀՀ սեփականություն հանդիսացող 1 հողամասից բացի, ՀՕՏԾ 1-ի Ծրագիրը ազդեցության է ենթարկում 35,257.53 մ² հողամաս, ներառյալ՝

ա. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 90 հողամասեր՝ որպես գյուղատնտեսական հող (25,155.23 մ²),

բ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 3 (1,450.71 մ²) և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով օգտագործվող թվով 1 (409.70) բնակելի հողամասեր,

գ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 7 (1,543.56 մ²), և սեփականության իրավունքով տնօրինվող 1 հողամաս (90 մ²) և 2 վարձակալված (617.18 մ²) առևտրային հողամասեր.

դ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 2 (273.46 մ²) և սեփականության իրավունքով տնօրինվող թվով 1 (191.17 մ²) արդյունաբերական հողամասեր:

11) Ընդհանուր առմամբ, 38 շենքեր և շինություններ (2005.94 մ²) կքանդվեն, որից 30-ը ոչ բնակելի են (1545 մ²), իսկ 8-ը՝ բնակելի (460.94 մ²): Արդյունքում, 3 ԱԵՏՏ-ներ կտեղահանվեն իրենց բնակության վայրերից: Ի լրումն, ազդեցության ենթակա 3 կառույցներ կվերանորոգվեն, և 19 ապամոնտաժման ենթակա տաբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կտեղափոխվեն: Ընդհանուր առմամբ, 19 հողամասերի վրա 4,359.64 մ² բարելավում կենթարկվի ազդեցության, ինչպես նաև 40 հողամասերի վրա՝ 996.24 գմ և 373.63 մ² ցանկապատ/պատ:

12) Ազդեցության կենթարկվեն 805 մ² մշակաբույսեր, 3,568 մրգատու ծառեր, ինչպես նաև 61 փայտանյութ տվող և 168 դեկորատիվ ծառեր: Թվով տասնմեկ ձեռնարկատիրական գործունեություն կենթարկվեն ազդեցության, որից 5-ը՝ մշտապես, իսկ 6-ը՝ ժամանակավոր: Ազդեցության կենթարկվեն 10 աշխատողներ, որոնցից 3-ը կկրեն մշտական ազդեցություն:

13) Մարդահամարի արդյունքում բացահայտվեցին 115 ընտանիքներ, ներառյալ՝ սեփականատերեր, վարձակալներ և հողամասերի/շինությունների օգտագործողներ, ձեռնարկատերեր՝ ընդհանուր առմամբ 597 անդամներով: Դրանցից 85 ԱԵՏՏ-ներ կենթարկվեն զգալի ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելին: Երեք

ընտանիքներ, որոնք բնակելի տարածքի կորստի հետևանքով ենթակա են զգալի ազդեցության, ներառված են այս թվում:

14) Ազդեցությունների ամփոփ աղյուսակը ներկայացնում է ազդեցության մանրամասները և ԱԵՏՏ-ների ու ԱԵԱ-ների համապատասխան թվերը:

Աղյուսակ 1. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի

Ազդեցության տեսակը	Ընդամենը			Նշումներ
	Ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	
	Ազդեցության ենթակա միավորը	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը	
	No /մ/ մ²			
ա. Ազդեցությունը հողի վրա՝ ըստ զբաղեցման կարգավիճակի				
1. Սեփականատերեր	3	3	8	
2. Համայնք	-			
ա. Ուղղակի օգտագործում	6	-	-	
բ. Վարձակալություն	2	2	5	
գ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	102	99	533	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործող 2 ԱԵՏՏ-ներ հանդիսանում են այլ հողատերերի սեփականատերեր, որոնք ներկայացված են 1.1-ում 1 ԱԵՏՏ, որը ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործող է, հանդիսանում է մեկ այլ հողամասի վարձակալ, որը ներկայացված է 1.2(2)-ում
3. Պետական հողամասեր	1	-	-	
Միջանկյալ ընդհանուր	114	101	540	
բ. Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա				
1. Բնակելի շենքեր	8	3	18	Ազդեցության ենթակա միավորը շենքերի/շինությունների թիվն է (No)
2. Ոչ բնակելի շենքեր	30	16	72	
3. Ապամոնտաժման ենթակա տարրեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ	19	15	89	
4. Ցանկապատեր	996.24 գմ 373.63 մ²	35	190	
Միջանկյալ ընդհանուր	-	47	248	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1 –ում, բացի 5 ԱԵՏՏ-ներից, ովքեր կորցնում են միայն կառույցներ
գ. Ազդեցությունը ծառերի/մշակաբույսերի վրա				
1. Մրգատու ծառեր	3,568	90	485	Ազդեցության ենթակա միավորը

Ազդեցության տեսակը	Ընդամենը			Նշումներ	
	Ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ		
	Ազդեցության ենթակա միավորը	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը		
	No /մ/ մ²				
2. Փայտանյութ տվող ծառեր	61	21	93	ծառերի թիվն է	
3. Դեկորատիվ ծառեր	168	20	102		
4. Մշակաբույսեր	805	11	11	Ազդեցության ենթակա միավորը մշակաբույսերի համար մ² –ն է:	
Միջանկյալ ընդհանուր	-	95	515	Բոլոր ԱԵՏՏ/ԱԵԱ-ները ներառված են 1-ում	
դ. Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա					
1. Մշտական՝ հարկային հայտարարագրով	3	3	14	Միավորը՝ ձեռնարկատիրական գործունեության քանակն է No	
2. Մշտական՝ առանց հարկային հայտարարագրի	2	2	12		
3. Ժամանակավոր՝ հարկային հայտարարագրով	3	3	9		
4. Ժամանակավոր՝ առանց հարկային հայտարարագրի	3	3	23		
Միջանկյալ ընդհանուր	11	11	58	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1 –ում, բացի 1 ԱԵՏՏ-ից, ովքեր կորցնում են միայն իրենց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունը	
ե. Ազդեցությունը զբաղվածության վրա					
1.Զբաղվածության մշտական կորուստ	3	3	12	1 ԱԵՏՏ ներառված է 1-ում	Ազդեցության ենթակա միավորը աշխատողների թիվն է (No)
2. Զբաղվածության ժամանակավոր կորուստ	7	7	28	1 ԱԵՏՏ ներառված է 1-ում	
Միջանկյալ ընդհանուր	10	10	40	Երկու ԱԵՏՏ- ներառված են 1-ում	
զ. Խոցելիությունը					
Զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններ	-	85	468	Ներառված են վերաբնակեցվող 3 ԱԵՏՏ-ներ	
Խոցելի ԱԵՏՏ-ներ	-	20	70		
Միջանկյալ ընդհանուր	-	90	483	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1–ում, բացի 2 խոցելի ԱԵՏՏ-ներից (1 աշխատող և 1 ԱԵՏՏ, որոնք միայն կորցնում են շինությունները	
Ընդամենը (առանց		115	597	Ընդամենը՝ ներառյալ 1 գումարած	

Ազդեցության տեսակը	Ընդամենը			Նշումներ
	Ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	
	Ազդեցության ենթակա միավորը	Առանց կրկնահաշվարկի	Բացարձակ թիվը	
	No /մ/ մ²			
կրկնահաշվարկի) 1+2(5ԱԵՏՏ) +3(1ԱԵՏՏ) +4(8ԱԵՏՏ)				5 ԱԵՏՏ, որոնք միայն կորցնում են շինությունները՝ գումարած թվով 1 ձեռնարկատեր, որը կորցնում է ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունը + աշխատողները

15) Ազդեցության ենթակա ընտանիքների սոցիալ-տնտեսական հետազոտությունը (USՀ) իրականացվեց 2013 թվականի փետրվարի 23-ից մինչև 2013 թվականի մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում: Ընդհանուր 115 ԱԵՏՏ-ներից հետազոտության ենթարկվեցին 106-ը: Առկա են 20 խոցելի ԱԵՏՏ-ներ, ներառյալ՝ աղքատ, կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները:

4. Փոխհատուցման քաղաքականությունը և վերականգնման միջոցառումները

16) Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՀ) համաձայն, որը հիմնված է ՀՀ օրենսդրության և ԱԶԲ-ի ԱԲՀ վրա (2009), փոխհատուցման և/կամ առնվազն վերականգնման իրավասություն ունեցող ԱԵԱ-ներն են՝ 1) բոլոր ԱԵԱ-ները, ովքեր կորցնում են հողամասը՝ սեփականության իրավունքով կամ առանց օրինական կարգավիճակի, (2) վարձակալները՝ գրանցված կամ առանց գրանցման, 3) շենքերի, մշակաբույսերի, բույսերի կամ հողամասին ամրացված այլ օբյեկտների սեփականատերերը, 4) ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ները: Իրավունքների սխեման բերված է ստորև:

17) Փոխհատուցման իրավասությունը սահմանփակված է կասեցման օրով, որը Ծրագրի համար սահմանվել է 2012 թվականի ապրիլի 13-ը: Այն ԱԵԱ-ների կողմից գույքի նկարագրության արձանագրությունների ստորագրման օրն է ԾՆՏԱ փոխում:

Աղյուսակ 2. Իրավունքների սխեման

Կորստի/վերականգնման տեսակը	Նկարագրությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը՝ անկախ ազդեցության	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է): Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը

Կորստի/վերականգնման տեսակը	Նկարագրությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
	աստիճանից	Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	ԱԵԱ հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Հնարավորության դեպքում վարձակալը պետք է ստանա սեփականության իրավունք և փոխհատուցվի որպես լիարժեք սեփականատեր կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում, հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողամասի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողամասի արժեքի 25%
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵԱ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողամասի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով
2. Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողամասերը	Սեփականություն	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով
		Վարձակալ (համայնքից, պետությունից)	Հնարավորության դեպքում վարձակալը պետք է ստանա սեփականության իրավունք և փոխհատուցվի որպես լիարժեք սեփականատեր կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում, հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%
		Իրավական	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման

Կորստի/վե րականգնմ ան տեսակը	Նկարագր ությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող	նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով
3. Բնակելի կառույցներ		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող և իրավական գրանցման կարգավիճակ ստանալու ենթակա ինքնակամ կառույցներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքը (ոչ պակաս, քան շուկայական արժեքը) գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքային ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի 9 և 10 կետերում
4. Ոչ բնակելի կառույցներ /ակտիվներ		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքի (ոչ պակաս, քան շուկայական արժեքը) գումարած 15%-ի չափով՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքային ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ	Փոխհատուցումը կիրականացվի նշված սկզբունքով՝ կառույցի օրինականացման/գրանցման դեպքում
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի 9 և 10 կետերում
5. Ընդհանուր սեփականո ւթյան միջոցներ	Համայնքա յին/պետա կան գույք	Համայնք/պետություն	Համայնքի/պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած կառույցների վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում

Կորստի/վերականգնման տեսակը	Նկարագրությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
6. Բերք	Ազդեցության ենթարկված բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մեկ տարվա բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար
7. Ծառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Շուկայական գներով հաշվարկված դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա
8. Ճեռնարկատիրություն / գործարարություն	Ճեռնարկատերեր/ գործարարներ	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Անհատ ձեռնարկատեր ա) մշտական ազդեցության դեպքում՝ դրամական միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, բ) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի դրամական փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ / աշխատակիցներ. ա) մշտական ազդեցության դեպքում՝ վեց ամսվա կորցրած նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում, բ) ժամանակավոր

Կորստի/վե րականգնմ ան տեսակը	Նկարագր ությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			ազդեցության դեպքում մինչև վեց ամիս նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների համար:
9. Օժանդակ ություն Հական ազդեցությ ունների դեպքում	10% գյուղատն տեսական եկամտի կորուստ և վերաբնակ եցում	Հականորեն ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ՝ ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	1) ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ տարվա բերքի չափով միանվագ փոխհատուցում.
			2) 6 ամսվա վերաբնակեցման նպաստ վերաբնակեցման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով.
10. Օժանդակ ություն վերաբնակ եցման դեպքում	Տրանսպոր տային և տեղափոխ ումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ՝ ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում
11. Օժանդակ ություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ) տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ
12. Ժամանակ ավոր ազդեցությ ուն		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերականգման աջակցություն կտրամադրվի Ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար
13. ՀՕՏ չնախատես ված ազդեցությ ուններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ԵԲ-ն կանդիդատնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը՝ ըստ նշված պայմանների

5. Ծրագրի ինստիտուցիոնալ կառուցվածքը

18) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ) հանդիսանում է Գործադիր մարմին: Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) իրականացնող մարմինն է և Ծրագրի իրականացման համար կրում է ընդհանուր պատասխանատվություն, ներառյալ՝ ՀՕՏԻ մշակումն ու իրականացումը: ԻՄ-ն

կգործի Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով (ԾԻԳ), և որը կունենա սոցիալական անվտանգության և տարաբնակեցման մասնագետ:

19) Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ) կազմված է ԵԲ-ի, շահառու կողմ համարվող նախարարությունների ներկայացուցիչներից և ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից: Խորհրդի գործունեության հիմնական նպատակը Ծրագրերի իրականացման համար Ասիական զարգացման բանկի և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը համապատասխան համաձայնագրերի շրջանակներում տրամադրված միջոցների կառավարումն է, ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 892-Ա որոշմամբ հաստատված կանոնադրության համապատասխան որոշումներ ընդունելը: ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի թիվ 273-Ն որոշմամբ Ծրագրի կառավարման խորհրդին վերապահված են նաև լիազորություններ ԱԵԱ-ների բողոքները քննելու և իր իրավասության սահմաններում լուծելու իրավասությունը, որպես ևս մեկ օղակ ԱԵԱ-ների համար՝ մինչև ՀՀ դատական մարմիններ դիմելը:

20) Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուն (ՄՆՇՎԽ) ծրագրի համար մշակել է ՀՕՏԾ-ն և իրականացման ընթացքում կաջակցի ԾԻԳ-ին՝ հանրային լրումներին մասնակցության և փոխհատուցման բյուջեի ճշգրտման միջոցով:

21) Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուն (ԾԿԻԱԽ) կիրառարակի տեղեկատվական բրոշյուրներ և խորհրդատվություններ կիրականացնի ազդեցության ենթակա ընտանիքների և անձանց համար: ԾԿԻԱԽ-ը կաջակցի ԵԲ ԾԻԳ-ին ՀՕՏԾ-ն իրականացնելիս:

22) ԱԶԲ-ն կիրականացնի Ծրագրի պարբերական վերահսկողություն, բոլոր ՀՕՏԾ-ների դիտարկում և հստակություն կապահովի պայմանագրերի շնորհման և շինարարական աշխատանքների նախաձեռնման առնչությամբ:

6. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացումը

23) Իրականացնող մարմինը կսկսի ՀՕՏԾ-ի իրականացումը ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից վերջինիս հաստատումից անմիջապես հետո: Այն սահմանված կարգով կձևնուցի ԱԵԱ-ներին՝ հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի մեկնարկի մասին: ԾԻԳ-ը կստորագրի սեփականության օտարման պայմանագրեր ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող գույքի համար՝ նոտարական վավերացմամբ կամ առանց վերջինիս, և փոխհատուցման համաձայնագրեր՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող գույքի և նպաստների/օժանդակության համար: ԱԵԱ-ներից չի պահանջվի տեղափոխվել այլ բնակարան ամբողջական փոխհատուցման հատկացումից հետո՝ նախքան 30 օրը լրանալը:

24) Ստորև բերված աղյուսակում ներկայացված ժամանակացույցը ցույց է տալիս ՀՕՏԾ 1-ի մշակման հստակ փուլերը, վերջնականացումը և իրականացումը:

Աղյուսակ 3. Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի վերջնականացման և իրականացման ժամանակացույց

Առաջադրանքը / գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
ՀՕՏԾ 1 - Ի վերջնականացում			
Վերահսկողության խորհրդատուի վարձում	ԾԻԳ		01.09.2012

Առաջադրանքը / գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբը	Ավարտը
Ճանապարհի ծրագծի վերջնականացում	ՄՆՇՎԽ	01.10.2012	01.02.2013
ԱԶԲ-ի կողմից ՀՕՏԾ 1-ի հաստատումը	ԱԶԲ	16.08.2013	23.08.2013
ՀՀ կառավարության կողմից ՀՕՏԾ 1-ի հաստատումը	ՀՀ կառավարություն	14.10.2013	
ՀՀ կառավարության կողմից ՀՕՏ բյուջեի հաստատումը	ՀՀ կառավարություն	14.10..2013	
Հաստատված ՀՕՏԾ փաստաթղթի տեղադրումը ԱԶԲ-ի և ԵԲ-ի կայքէջերում	ԱԶԲ և ԾԻԳ	06.09.2013	16.10.2013
Տեղեկատվական բրոշյուրի տարածում	ՄՆՇՎԽ /ԾԻԳ	16.10.2013	20.10.2013
ՀՕՏԾ 1-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ			
ՀՕՏ բյուջեի հատկացումը ԵԲ-ին	Ֆինանսների նախարարություն	21.10.2013	21.10.2013
Պոտենցիալ հարկադիր օտարման դեպքերի բացահայտում	ԾԻԳ	01.04.2013	18.06.2013
Պայմանագրերի նախագծերի ուղարկում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	15.10.2013	21.10.2013
Պայմանագրերի ստորագրում	ԾԻԳ	15.10.2013	21.01.2014
Փոխհատուցումների հատկացում	ԾԻԳ	25.10.2013	31.01.2014
Հարկադիր օտարման վերջնականացում, հարկադիր օտարման վերաբերյալ դատարանի որոշման ներկայացում	ԾԻԳ	31.01.2014	31.04.2014
ՀՕՏԾ Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԱՄԳ	01.09.2013	05.02.2014
ԱԶԲ –ի կողմից ՀՕՏԾ Համապատասխանության հաշվետվության հաստատումը	ԱԶԲ	25.02.2014	25.02.2014
Շինհրապարակի հանձնումը կապալառուին	ԾԻԳ	25.02.2014	25.02.2014
Շինարարական աշխատանքների մեկնարկը	Կապալառու	25.02.2014	25.02.2014
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ			
Մոնիտորինգ	ԱՄԳ / ԱԶԲ	-	-
Բողոքների լուծում	ԾԻԳ	-	-

7. Հանրային լուծումներ և տեղակատվության հրապարակում

25) Հանրային լուծումների առաջին շրջանը կազմակերպվեց 2010 և 2012 թվականների ԾՆՏԱ փուլում: Ազդեցության ենթակա անձանց համար ՀՕՏԾ 1-ի հետագա հանրային լուծումները տեղի ունեցան 2013 թվականի մարտին: Հանրային լուծումների ընթացքում ներկայացվեց իրավունքների սխեման, բողոքների լուծման մեխանիզմը, գնահատման մեթոդաբանությունը, չափագրման հետազոտությունը, ծրագրի քարտեզը՝ իրական չափագրումով և ԱԵԱ-ների անուններով, ինչպես նաև ԱԵԱ-ների հետ առանձին դեպքերի քննարկումներ: 76 տնային տնտեսություններ ներկայացնող ԱԵԱ-ները (ընդհանուր ԱԵՏՏ-ների 66 %-ը) մասնակցեցին հանրային լուծումներին:

8. Բյուջեի ամփոփում

26) ՀՕՏԾ 1-ի իրականացման ընդհանուր բյուջեն, ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման նպաստը, ինչպես նաև ՀՕՏԾ-1-ի իրականացման վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը կազմում են **780,142.063.25 ՀՀ դրամ**, որը համարժեք է **1,902,785.52**

ԱՄՆ դոլարին: Բյուջեի միջոցները կտրամադրվեն 3 աղբյուրներից՝ 1) հողի փոխհատուցման և հողի օտարման այլ ծախսեր, ներառյալ՝ հարկերը, տուրքերը, վճարները և գործառնական ծախսերը, կվճարվեն ԵԲ-ի բյուջեից, 2) մնացած ակտիվների փոխհատուցումը, ներառյալ՝ նպաստները, կհատկացվեն վարկից, 3) հարկերը, վճարները և հողից բացի այլ կորուստների հետ առնչվող գործառնական ծախսերը, ներառյալ՝ նպաստների հետ առնչվող գործառնական ծախսերը կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման մասից: ՀՀ կառավարության կողմից Հողի օտարման և տարաբնակեցան սույն ծրագրի հաստատումից հետո Երևանի քաղաքապետարանը և ՀՀ ֆինանսների նախարարությունը համապատասխանաբար կապահովեն ՀՕՏԾ 1 բյուջեով նախատեսված ֆոնդերի ժամանակին հատկացումները Երևան համայնքի և ՀՀ պետական բյուջեի շրջանակներում տվյալ ծրագրով նախատեսված միջոցներից՝ անհարժեշտության դեպքում սահմանված կարգով կատարելով ներքին հոգվածային վերաբաշխում:

9. Բողոքների լուծման մեխանիզմ

27) Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի քանի կողմեր՝ 1) ԾԻԳ, 2) ԵԲ և 3) ԾԿԽ: ԱԵԱ-ների համար գործընթացը մատչելի դարձնելու նպատակով ԾԻԳ-ը հիմնեց դաշտային գրասենյակ՝ ՀՕՏԾ 1-ի մշակման ընթացքում ԱԵԱ-ների հետ շաբաթական հանդիպումներ կազմակերպելու համար: Վերջինս կգործի ՀՕՏԾ իրականացման փուլում: Անկախ հիմնված բողոքի լուծման մեխանիզմից և ընթացակարգից՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն իրենց հայցը ներկայացնել դատարան բողոքարկման գործընթացի ցանկացած պահին:

10. Մոնիտորինգ և գնահատում

28) ՀՕՏԾ 1-ի իրականացումը կենթարկվի թե՛ ներքին, թե՛ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից՝ ԾԿԽԱԽ-ի աջակցությամբ: Արտաքին մոնիտորինգը հանձնարարված է անկախ մոնիտորինգի գործակալությանը (ԱՄԳ)՝ վարձված ԵԲ-ի և հաստատված ԱԶԲ-ի կողմից: ԱՄԳ-ն մոնիտորինգի կենթարկի ՀՕՏԾ-ի իրականացումը և կպատրաստի Համապատասխանության հաշվետվություններ, որոնք պետք է հաստատվեն ԱԶԲ-ի կողմից՝ որպես շինարարական կապալի աշխատանքները սկսելու պայման:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ընդհանուր տեղեկություններ

29) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում Ծրագիր 1-ը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի Բազմափուլային ֆինանսական գործիքի (ԲՖԳ) միջոցով՝ իրականացվելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) կողմից, որը հանդիսանում է Գործադիր մարմին (ԳՄ), և Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) կողմից, որը հանդիսանում է Իրականացնող մարմին (ԻՄ)՝ անմիջապես աշխատելով ԾԻԳ-ի հետ: Այս ծրագիրը նպատակ ունի խթանել կայուն, ինտեգրված, սոցիալապես մատչելի և տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտային համակարգի զարգացումը: Կարճաժամկետ տեսանկյունից հիմնական նպատակն է լրացնել քաղաքային արևմտյան օդակի բացակայող ճանապարհային հանգույցները: Ծրագիրը ներառում է երկու ճանապարհների և մայրուղու վերականգնման ու կառուցման ենթածրագրեր: Երկու ենթածրագրերն էլ ենթադրում են տարաբնակեցման ազդեցություններ:

30) Նախագծային գործընթացին համապատասխանելու նպատակով՝ կներկայացվեն երեք առանձին ՀՕՏ-ներ:

ա. **Ենթածրագիր 1.** Արգավանդի մայրուղի – Շիրակի փողոցի արևմտյան հատվածը կհանդիսանա ՀՕՏ 2 –ի խնդրո առարկան:

բ. **Ենթածրագիր 2:** Շիրակի փողոց – Արտաշատի խճուղու, ներառյալ՝ Արշակունյաց պողոտայի լայնացումը բաժանվել է երկու ենթահատվածների, որոնց առնչությամբ ՀՕՏ 1-ը կանդրադառնա լայնացվող հատվածներին, իսկ ՀՕՏ 3-ը՝ նոր ծրագծին:

31) Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը (ՀՕՏ 1) մշակվել է Մանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուի (ՄՆՇՎԽ) կողմից Ծրագրի իրականացման գրասենյակի համար (Երևանի քաղաքապետարանի (ԵՔ) ԾԻԳ): Սույն ՀՕՏ-ն անդրադառնում է Ենթածրագիր 2-ի լայնացվող հատվածների հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններին:

1.2 Ծրագրի տեղակայվածությունը

32) Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) դեպի ծով ելք չունեցող երկիր է և տեղակայված է Սև ծովի և Կասպից ծովի միջև: Հյուսիսում այն սահմանակից է Վրաստանին, արևելքում՝ Ադրբեջանին, հարավում՝ Իրանին, իսկ արևմուտքում՝ Թուրքիային, ինչպես ցույց է տրված Նկար Նկար 1.1-ում: Երևանը ՀՀ-ի մայրաքաղաքն է և զբաղեցնում է 260 կմ² տարածք՝ տարածվելով 18 կմ դեպի հյուսիս-հարավ ուղղությամբ և 16 կմ արևելք-արևմուտք ուղղությամբ:

33) Ծրագրային տարածքը տեղակայված է Երևանի հարավ-արևմուտքում՝ Շենգավիթ և Մալաթիա վարչական շրջաններում, Երևան քաղաքի կենտրոնից մոտավորապես 6 կմ հեռավորության վրա: Ծրագրի հատակագիծը ցույց է տրված Նկար 1.3-ում: Այն ուրվագծում է Ենթածրագրեր 1 և 2-ը, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՕՏ-ի մշակման համար Ծրագրային տարածքները:

Նկար 1.1 Հայաստանի Հանրապետության և Երևանի տեղակայվածությունը



Աղբյուրը՝ Երևանի քաղաքապետարանի Գլխավոր
հատակագիծ, 2004

1.3 Ծրագրի նկարագրությունը

34) Ծրագիրը բաժանված է երկու ենթածրագրերի:


ա. Ենթածրագիր 1. Արգավանդի մայրուղի – Շիրակի փողոցի արևմտյան հատված հանգույցի կառուցում՝ մոտավորապես 1.3 կմ երկարությամբ: Ծրագիծն անցնում է Կարմիր բլուր կոչվող հնագիտական վայրով և ներառված է ՀՕՏԾ 2-ի շրջանակում:

բ. Ենթածրագիր 2. 3.7 կմ ծրագիծն ընդգրկում է Արշակունյաց պողոտայի լայնացումը, Արտաշատի խճուղու – Շիրակի փողոց նոր հանգույցը և Արտաշատի խճուղի - Նորազավիթի 1-ին փողոց հատվածի լայնացումը: ՀՕՏ ուսումնասիրությունների նպատակով ներկայացվել են առանձին ՀՕՏ փաստաթղթեր լայնացվող հատվածների (ՀՕՏ 1) և նոր ծրագծի համար (ՀՕՏ 3):

35) Երկու ենթածրագրերն էլ կապահովեն երկու՝երկկողմանի, կամ երեք՝ երկկողմանի երթևեկության գոտիներով երթևեկելի մասեր:

36) Ծրագիրը նաև ներառում է՝ 1) Արգավանդի մայրուղու փոխհատման բարելավում, 2) Հրազդան գետի վրայով կամրջի կառուցում, 3) Արշակունյաց պողոտայի և Նոր Շիրակի փողոցի միջև տարբեր մակարդակների վրա գտնվող փոխհատման կառուցում, 4) Շիրակի փողոց և Արտաշատի խճուղու հատման կետում նույն մակարդակի վրա գտնվող օղակաձև հանգույցի կառուցում և 5) դեպի տեղական ճանապարհներ մուտքերի և հանգույցների կառուցում:

Նկար 1.2 Ծրագրի տեղակայվածության քարտեզը



1.4 Ենթածրագիր 2. Շիրակի փողոց և Արշակունյաց պողոտա-Արտաշատի խճուղի քաղաքային ճանապարհային հանգույց

1.4.1 Տեղակայվածությունը և նկարագրությունը

37) Քանի որ սույն ՀՕՏ-ն Ենթածրագիր 2-ի շրջանակում է, այս փաստաթղթում ենթածրագիրը նկարագրված է առավել մանրամասնորեն:

38) Ենթածրագիր 2-ի տեղամասը գտնվում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանում՝ ՀՀ մայրաքաղաքի կենտրոնից 6 կմ հարավ-արևմուտք: Այն կարելի է բաժանել երեք ենթամասերի:

ա. **Շիրակի փողոցի երկարացումը.** Ճանապարհի այս հատվածը կլինի 4 երթևեկության գոտիներով՝ բաժանված կենտրոնական բաժանիչ գոտիով: Նախագիծը ներառում է գոյություն ունեցող Շիրակի փողոցի ուղղաձիգ ծրագծի փոփոխություն՝ համապատասխանեցնելով Արշակունյաց պողոտա-Շիրակ փողոցների միջև տարբեր մակարդակների վրա գտնվող փոխհատմանը, ինչպես նաև երկաթգծի ուղեանցին և Նորագավիթի 1-ին փողոցին:

բ. **Արշակունյաց պողոտայի լայնացումը.** Գոյություն ունեցող 2 երթևեկության գոտիներով ծրագիծը կլայնացվի՝ վերափոխվելով 4-6 երթևեկության գոտիներով՝ ճանապարհի՝ կենտրոնական բաժանիչ գոտիով: Այն ավարտվում է Շիրակի փողոցի հետ ապագա փոխհատումով:

գ. **Արտաշատի խճուղու լայնացումը.** Արտաշատի խճուղին կլայնացվի մինչև Նորագավիթի 1-ին փողոցը՝ 2-ից վերածվելով 4 երթևեկության գոտիների՝ կենտրոնական բաժանիչ գոտիով:

39) Բացի Արտաշատի խճուղու հարավային կողմի երկայնքով նոր սպասարկման ճանապարհից (Նորագավիթ համայնքին հարակից, որտեղ լրացուցիչ սպասարկման ճանապարհի նախագիծը հորիզոնական հիմնական ծրագծի ուղեկցությամբ տեղափոխվում է շենքերից հեռու) ծրագիծն անցնում է նախկինում սահմանված օտարման գոտիով (“կարմիր գիծ”) և ծրագծով, ինչպես նշված է Գլխավոր հատակագծում:

1.4.2 Ենթածրագրի իրականացման ժամանակացույցը

40) Կկազմակերպվեն երկու առանձին շինարարական մրցույթներ՝ մեկը Արշակունյաց պողոտայի լայնացման համար, իսկ մյուսը՝ Ծրագրի մնացած մասի: Մրցութային գործընթացն առաջին մասի համար կմեկնարկի 2013թ. հոկտեմբերին: Արշակունյաց պողոտայի 1.3 կմ հատվածի համար Պայմանագրի ստորագրումը Կապալառուի հետ նախատեսվում է 2013 թվականի վերջին: Ծրագրի մնացած հատվածների համար մրցութային փաստաթղթերը պատրաստ կլինեն 2013 թվականի նոյեմբերին: Մնացած հատվածների համար հնարավոր կապալառուի հետ պայմանագրի ստորագրումը նախատեսվում է 2014 թվականի մարտին: Ծրագիրը երկու մասերի բաժանելը հիմնականում պայմանավորված էր ծրագրային տարածքում հնագիտական վայրի առկայությամբ, որը պահանջում է լրացուցիչ հնագիտական հետազոտության իրականացում, որը կարող է բացասականորեն ազդել Աշխատանքների ռազմավարության վրա:

41) ՀՕՏ 1-ի իրականացումը կսկսվի 2013 թվականի սեպտեմբերին և ամբողջությամբ կավարտվի մինչև 2013 թվականի դեկտեմբերի վերջը: Շինհրապարկի հանձնումը Կապալառուին նախատեսվում է 2014 թվականի հունվարին:

1.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1 –ի մշակումը

42) Ողջ ծրագրի համար ՀՕՏ-ն մշակվում է փուլերով: Որպես ենթածրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրության մաս՝ 2010 թվականի Գործադիր մարմինը

պատրաստեց երկու ՀՕՏ նախագծեր՝ ԾՆՏԱ խորհրդատուի աջակցությամբ: Դրանցից մեկը Շիրակի փողոց և Արշակունյաց պողոտա - Արտաշատի խճուղու հատվածի համար էր, իսկ մյուսը՝ Արգավանդի մայրուղի և Շիրակի փողոց քաղաքային ճանապարհային հանգույցի: ՀՕՏ երկու նախագծերն էլ հիմնված էին ՀՕՏ և ԱԶԲ-ի ԱՔՀ վրա: ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ուսումնասիրության հիման վրա, որտեղ ճանապարհի նախնական ծրագծի երկայնքով նշված են ազդեցության ենթակա տարածքները, ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մայիսի 26-ին ընդունվեց թիվ 990-Ն որոշումը, որով սահմանվեցին բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքները: ՀՕՏ նախագծային տարբերակները թարմացվեցին ԾՆՏԱ խորհրդատուի կողմից 2012 թվականին՝ նախնական նախագծի հիման վրա:

43) Մանրամասն նախագծի փոփոխությունների արդյունքում առաջացած ազդեցության փոփոխությունների, ինչպես նաև կադաստրային քարտեզների և ՀՕՏ թարմացումների հիման իրականացված ազդեցության ենթակա ակտիվների գնահատման հնացած տվյալների պատճառով ՄՆՇՎԽ-ն իրականացրեց ամբողջովին նոր ՄՀՀ, մարդահամար և գնահատման հետազոտություններ:

44) Իրականացման համար պատրաստ սույն ՀՕՏ 1-ը պատրաստվել է Ենթածրագիր 2-ի Արշակունյաց պողոտայի և Արտաշատի խճուղու հատվածների համար (տես Նկար 1.3):

1.6 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի շրջանակը և կարգավիճակը

45) ՀՕՏ 1-ը հիմնված է 2013 թվականի հուլիս ամսին ավարտված 2-րդ ենթածրագրի մանրամասն նախագծի վրա: Այն վերջնական է և պատրաստ է իրագործման: Սույն ՀՕՏ-ն ավարտելու համար նախաձեռնվել են հետևյալ քայլերը.

- ա. ԱԵՏՏ-ների, ԱԵԱ-ների մարդահամարի և կորուստների գույքագրման իրականացում,
- բ. Ազդեցության ենթակա հողամասերի, շենքերի, կառույցների և այլ ակտիվների մանրամասն չափագրման, նկարագրության և գնահատման իրականացում,
- գ. 92% ընտրանքով սոցիալ-տնտեսական հետազոտության իրականացում,
- դ. ԱԵԱ-ների հետ հանրային լուսմների իրականացում,
- ե. Բոլոր տեսակի կորուստների համար փոխհատուցման մանրամասն բյուջեի պատրաստում:

1.7 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի նպատակը

46) ՀՕՏ 1-ի հիմնական նպատակն է բացահայտել Ենթածրագրի արդյունքում ազդեցության ենթակա անձանց և աջակցել նրանց՝ վերականգնելու իրենց կենսամակարդակն ու կյանքի որակը՝ բերելով այն առնվազն նախքան Ծրագիրն ունեցած մակարդակին: ՀՕՏ 1-ը գնահատում է ԱԵԱ-ների վրա Ենթածրագրի հողի օտարման և տարաբնակեցման ազդեցությունը՝ համաձայն ԱԶԲ ԱՔՀ-ի և ՀՀ օրենսդրության՝ մասնավորապես ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի թիվ 273-Ն որոշման:

47) Այս նպատակներն իրագործելու համար ՀՕՏ 1-ը ներկայացնում է մանրամասներ, որոնք անհրաժեշտ են փոխհատուցման, տարաբնակեցման և վերականգնման համար՝ սահմանելով.

- ա. ԱԵԱ-ի պրոֆիլը,
- բ. Ենթածրագրի ազդեցությունը և կորուստների չափը,
- գ. տեղեկատվության հրապարակում, հանրային լուսմները և մասնակցությունը,

- դ. վերականգնման և փոխհատուցումների վճարման քաղաքականությունը և շրջանակը,
- ե. բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմը,
- զ. տարաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը, ներառյալ՝ կորցրած ակտիվների, վերաբնակեցման և վերականգնման գնահատումն ու փոխհատուցման չափը,
- է. տարաբնակեցման ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ շրջանակը և
- ը. ՀՕՏԾ-ի իրականացման մոնիտորինգը:

1.8 Հողի օտարում և տարաբնակեցում. Ծրագրի իրականացմանն առնչվող պայմանները

48) ԱԶԲ անվտանգության պահանջների և ԲՖԳ Ծրագրի համաձայն յուրաքանչյուր տրանշի հաստատումը/իրականացումը հիմնված է հետևյալ պայմանների վրա.


ա. **ԲՖԳ/Առաջին տրանշի գնահատում.** պայմանավորված է՝ 1) ԱԶԲ-ի և Կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ ամբողջ ԲՖԳ-ի համար ՀՕՏԾ-ի պատրաստում/ներկայացում, 2) Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում (ԱՍՀՆԳ) և 3) ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության համար ընդունելի ՀՕՏԾ-ների պատրաստում/ներկայացում Ծրագրի յուրաքանչյուր տրանշի համար, որը պահանջում է ՀՕՏ,

բ. **Պարբերական ֆինանսավորման հայտի (ՊՖՀ) հաստատում հետագա տրանշների համար:** Պայմանավորված է՝ 1) ՀՕՏԾ-ի վերանայում/փոփոխում/ներկայացում, 2) Աղքատության նվազեցման և սոցիալական ռազմավարության ամփոփագրի պատրաստում (ԱՆՍՌԱ), գ) յուրաքանչյուր տրանշի համար, որն ունի ՀՕՏ, պատրաստել/ներկայացնել ՀՕՏԾ-ներ ԱԶԲ-ի և կառավարության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ, ինչպես նաև փոփոխված ՀՕՏԾ-ին համահունչ,

գ. **Պայմանագրի ստորագրումը.** պայմանավորված է՝ 1) ՀՀ կառավարության և ԱԶԲ կողմից ՀՕՏԾ 1-ի հաստատմամբ, 2) իրականացման համար պատրաստ փաստաթղթի և տեղեկատվական բրոշյուրի ներկայացմամբ հանրությանը, 3) Անկախ մոնիտորինգի գործակալության վարձմամբ:

դ. **Շինարարական աշխատանքների մեկնարկը.** պայմանավորված է ՀՕՏԾ 1-ի ամբողջական իրականացմամբ, որն արձանագրված կլինի ԱԶԲ-ի համար ընդունելի ԱՄԳ-ի կողմից պատրաստված Համապատասխանության հաշվետվությունում:

Նկար 1.3 Ենթածրագիր 2-ի Արշակունյաց պողոտայի և Արտաշատի խճուղու հատվածները



1.9 Փաստաթղթի հրապարակումը

49) Վերջնական թարմացված իրականացման համար պատրաստ ՀՕՏԾ-ն թարգմանվել է հայերեն և տեղադրվել ԵԲ-ի պաշտոնական կայքէջում: Անգլերեն լեզվով ՀՕՏԾ-ն տեղադրվել է ԱԶԲ-ի պաշտոնական կայքէջում: ՀՕՏԾ-ի ամփոփ տեղեկատվական բրոշյուրը թարգմանվել է հայերեն և ԱԵԱ-ներին տրամադրվել ՀՕՏԾ-ի հաստատումից հետո:

1.10 Ծրագրի կասեցման ամսաթիվը

Աղյուսակ 21. Ազդեցության աստիճանը

Ազդեցության աստիճանը	Արշակունյաց պողոտա	Արտաշատի խճուղի	Ընդամենը
	ԱԵՏՏ	ԱԵՏՏ	ԱԵՏՏ
	No	No	No
ա) ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10% -ը	22	63	85
բ) Վերաբնակեցվող ԱԵՏՏ-ներ (ընդգրկված են նաև ա)-ում	3	0	3
Ընդամենը	22	63	85

2.9.2 Ազդեցությունը աղքատների և խոցելի խմբերի վրա

96) Համաձայն ՔԿԶՆԾ ՀՕՏՀ-ի լրացման՝ “խոցելիությունը” սահմանվում է հետևյալ կերպով:

“Ընտանեկան նպաստի համակարգում (ԸՆՀ) գրանցված անձինք, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: Սոցիալապես խոցելի անձինք այն տնային տնտեսություններն են, որոնք ղեկավարվում են ընտանիքը կերակրող կանանց կամ ծերության կենսաթոշակ ստացող անձի կողմից և չեն ներառում այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ՝ կայուն աշխատանքով, որն առնվազն ապահովում է նվազագույն ամսական աշխատավարձ, բացի պարտադիր զինծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարեկան ցերեկային ուսուցմամբ սովորողները:

97) 8 ԱԵՏՏ-ներ գրանցված են ԸՆՀ-ում²: 13 ԱԵՏՏ-ներ ղեկավարվում են կին և 8-ը՝ տարեց ԱԵԱ-ների կողմից: Որոշ ԱԵՏՏ-ներ, որոնք գրանցված են ԸՆՀ-ում, նույնպես ղեկավարվում են կանանց/տարեցների կողմից: Ընդհանուր առմամբ, 20 ԱԵՏՏ-ներ կփոխհատուցվեն որպես խոցելի ընտանիքներ և կստանան վերականգնման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Այսպիսի ընտանիքներին նույնպես առաջնահերթություն կտրվի Ծրագրի հետ առնչվող աշխատատեղերում ընդգրկվելիս:

Աղյուսակ 22. Ազդեցությունը աղքատների և խոցելի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա

Տեսակը	Արշակունյաց պողոտա		Արտաշատի խճուղի		Ընդամենը	
	ԱԵՏՏ	ԱԵԱ	ԱԵՏՏ	ԱԵԱ	ԱԵՏՏ	ԱԵԱ
	No	No	No	No	No	No
ԸՆՀ-ում գրանցված ԱԵՏՏ-ները	3	9	5	28	8	37
Կանանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ները	6	15	7	29	13	44
Տարեցների կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ները	2	4	6	20	8	24
խոցելի ԱԵՏՏ-ների ընդհանուր թիվը՝ առանց կրկնահաշվարկի	6	15	14	55	20	70

98) ՀՕՏՀ-ն նախատեսում է հատուկ ընթացակարգ՝ բացահայտելու ազդեցության ենթակա աղքատ տնային տնտեսություններին: ՀՕՏՀ-ի համաձայն՝ մարդահամարի հետազոտության ընթացքում աղքատ ընտանիքները պետք է բացահայտվեն իրենց մասին տեղեկացնելով: Ստացված տեղեկությունները պետք է ստուգվի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում: ԸՆՀ-ում գրացվելու իրավասություն ունեցող և ԸՆՀ նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքները ստուգումներից հետո իրավունք կունենան Ենթածրագրի ներքո, որպես խոցելի ընտանիքներ, ստանալ փոխհատուցում:

99) Հետևելով գոյություն ունեցող ընթացակարգին՝ աղքատ ԱԵԱ-ների ընդհանուր ցուցակը կուղարկվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Շենգակիթի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն՝ ստուգելու «աղքատությունը» համաձայն ՀՀ օրենքների եւ սոցիալական քաղաքականության: Ստուգման արդյունքում 1 ԱԵՏՏ գրանցվեց ԸՆՀ-ում և ընդգրկվեց խոցելի ԱԵՏՏ-ների ցուցակում: Ընդհանուր առմամբ, սույն ՀՕՏՀ-ում կան 20 խոցելի տնային տնտեսություններ:

2.9.3 Ազդեցության ենթակա անձանց սեռը

100) Մարդահամարը ցույց է տալիս ազդեցության ենթակա ընտանիքների կազմությունն ըստ սեռի՝ 301 (50.4%) արական և 296 (49.6%) իգական սեռի ներկայացուցիչներ: Այս բացահայտումը սերտորեն արտացոլում է Հայաստանի ազգաբնակչության պատկերը՝ 48% արական և 52% իգական սեռի ներկայացուցիչներ:

Աղյուսակ 23. Ազդեցության ենթակա անձանց սեռը

Սեռը	No	Ամբողջի %
Արական	301	50.4
Իգական	296	49.6
Ընդամենը	597	100

2.9.4 Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը

101) ԱԵԸ-ների մեծամասնությունը հայեր են՝ 87.3%: Կան 12.6% եզդիներ և 0.1% ռուսներ: Եզդիները քուրդ ժողովուրդն են, ովքեր լիովին ընդգրկված են հայ հասարակության մեջ և համարվում են հայաստանյան ազգաբնակչության հավասար անդամներ, քանզի նրանք ևս կիսել են եղեռնի բախտը Հայաստանի բնակչության մեծամասնության հետ միասին: Եզդիները համարվում են հավասար քաղաքացիներ հայ ժողովրդի կազմում: Նրանք խտրականության չեն ենթարկվում և չունեն խոցելիության նկարագիր՝ համաձայն տեղաբնիկների վերաբերյալ ԱԶԲ-ի սահմանման: Հետևաբար, ԱԶԲ-ի համապատասխան քաղաքականությունը չի կիրառվի Ծրագրում:

Աղյուսակ 24. Ազդեցության ենթակա անձանց էթնիկ ծագումը

Ազգությունը	ԱԵՏՏ անդամներ	
	No	Ամբողջի %
Հայ	521	87.3
Եզդի	75	12.6
Ռուս	1	0.1
Ընդամենը	597	100

3. ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1 Ընդհանուր տեղեկություններ

102) Սույն գլխում ներկայացվում են ազդեցության ենթակա բնակչության և համայնքի սոցիալ - տնտեսական հիմնական առանձնահատկություններին առնչվող եզրակացությունները, որոնք պատրաստվել են առկա երկրորդական տվյալներից, սոցիալ - տնտեսական հարցումների միջոցով հավաքագրված տվյալներից, ինչպես նաև ՀՕՏԾ 1-ի տարածքում ընդգրկված Ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում ձեռնարկված մարդահամարի տվյալներից: Հարցումների հիմնական նպատակն է հասկանալ Ծրագրի տարածքում ազդեցության ենթակա մարդկանց և ընտանիքների առկա սոցիալ-տնտեսական միջավայրը և խոցելիությունը, օգտագործել տվյալները ՀՕՏԾ 1-ի բյուջեի նախապատրաստման համար և բացահայտել աջակցության լրացուցիչ կարիք ունեցող խմբերին և անձանց:

3.2 Հետազոտության մեթոդաբանությունը

103) Ծրագրի տարածքում սոցիալ-տնտեսական հետազոտությունն ավարտվել է մի քանի փուլերով: Սոցիալ-տնտեսական հետազոտությունների երկու փուլերն ավարտվել են ՀՕՏԾ-ի երկու նախնական տարբերակի (նախագծերի) պատրաստման ընթացքում: Առաջին փուլը ներառել է ազդեցության ենթակա անձանց 25%-ը, իսկ երկրորդ հարցումն ընդգրկել է ազդեցության ենթակա բնակչության 90%-ը: Այնուհանդերձ, ՀՕՏԾ-ի նախնական տարբերակից հետո անցած ժամանակի, առանձին ՀՕՏԾ-երի համար ճանապարհային հատվածների փաթեթների փոփոխությունների, ինչպես նաև մանրամասն նախագծման փուլում կազմված ճանապարհային ծրագծի փոփոխությունների պատճառով, 2013 թ.-ին նոր հարցում է իրականացվել՝ ազդեցության ենթակա անձանց սոցիալ-տնտեսական նկարագրի թարմացման նպատակով:

104) 2013 թ.-ի փետրվարի 23-ից մինչև 2013 թ.-ի մարտի 10-ը ՄՍՀ հարցում է իրականացվել՝ ազդեցության ենթակա ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանները նորացնելու նպատակով: Բոլոր ազդեցության ենթակա անձինք, այդ թվում՝ ազդեցության ենթակա հողամասերի և շենքերի սեփականատերերը, վարձակալները և օգտագործողները, մշտապես ազդեցության ենթարկված անհատ ձեռնարկատերերը և այն ազդեցության ենթակա անձինք, ովքեր մշտապես կորցնելու են իրենց աշխատանքը, հարցվել են հարցաթերթիկների և հեռախոսի միջոցով (հարցաթերթիկների համար տե՛ս հավելվածներ 3, 4, 5, 6):

105) Յուրաքանչյուր հարցաթերթիկի լրացման համար 30-40 րոպե է պահանջվել: Հավաքագրված տվյալները մշակվել են՝ օգտագործելով վիճակագրական փաթեթ ՍԳՎՓ 13-ը: Տարածքում 115 ազդեցության ենթակա տնային տնտեսություններ (որոնք 603 ազդեցության ենթակա անձինք են ներառվում) կան, որոնցից 106 տնային տնտեսություններն (565 ազդեցության ենթակա անձինք) են հարցվել:

106) ԻԳ-ի մտադրությունն էր ՀՕՏԾ 1-ի ՄՍՀ-ի համար 100% ընտրանք օգտագործել: Այնուհանդերձ, ընդհանուր 115 տնային տնտեսություններից 106 (92.2.4%) տնային տնտեսությունների անդամներն են հարցազրույցին մասնակցել: Մնացած 9-ը տնային տնտեսությունների անդամները հարցազրույցին չեն մասնակցել, քանի որ 1) նրանցից ոմանք հարցման ընթացքում հասանելի չէին, 2) նախագծում ուշ իրականացված փոփոխությունների (ՀՕՏԾ 1-ի ամփոփումից մի քանի օր առաջ) և 2) որոշ ազդեցության ենթակա անձանց ավելացման պատճառով, ովքեր մասնակի են ազդեցության ենթարկվել և փոխհատուցվել են ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 380-Ն որոշմամբ նախատեսված «Երևան քաղաքում ջերմատների կառուցման և զարգացման ներդրումային

ծրագրի» շրջանակներում: Արդյունքում, ազդեցության ենթակա բոլոր անձինք ներառվել են ազդեցության հետազոտություններում (մարդահամար), բայց ոչ USՀ-ում: Մեկ տնային տնտեսության անդամները USՀ-ի ընթացքում Հայաստանում չէին, իսկ գույքի մեկ սեփականատեր հարցման ընթացքում հրաժարվեց թիմի հետ շփումից: Բացի այդ, ազդեցության ենթակա մեկ անձ մեկուսացված է ապրում հասարակությունից և նրա դեմոգրաֆիական հատկանիշների վերաբերյալ միայն հիմնական տեղեկություններ են հավաքագրվել նրա հարևաններից: Ազդեցության ենթակա անձանց ընդհանուր թիվը ներառված է մարդահամարին վերաբերող տվյալներում:

3.3 Ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը

3.3.1 Ընտանիքի կազմը և սոցիալ-տնտեսական դասակարգումը

107) Ընդհանուր առմամբ, 106 հարցված տնային տնտեսություններում 565 անձինք են բնակվում: Միջին հաշվով 5.3 անձինք կան յուրաքանչյուր ազդեցության ենթակա տնային տնտեսությունում: 565 ազդեցության ենթակա անձանցից 278-ը (49.2%) տղամարդ են, իսկ 287-ը (50.8%) կին: ազդեցության ենթակա բոլոր չափահաս անձանցից 277-ը (63%) ամուսնացած են, 106-ը (24,1%) ամուրի, 42-ը (9,5%) այրիացած և 15-ը (3,4%) բաժանված:

108) Սոցիալական խմբավորման վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ ազդեցության ենթակա տնային տնտեսություններից 17-ում (16%) ընտանիքի ղեկավարը հաշմանդամ է, իսկ ազդեցության ենթակա անձանցից մի փոքր ավելի քիչ քան 13% - ը (45) ինչ-որ տեսակի հաշմանդամություն ունի: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ազդեցության ենթակա անձանց սոցիալական խմբավորումը՝ ըստ ՀՀ կառավարության դասակարգման՝

Աղյուսակ 25. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների սոցիալ-տնտեսական վիճակը

Սոցիալական խումբ	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ անդամ	
	Քանակը	%	Քանակը	%
Հաշմանդամ աշխատող, 1 - ին խումբ	1	1	3	0.5
Հաշմանդամ աշխատող, 2 -րդ խումբ	11	10.4	21	3.7
Հաշմանդամ աշխատող, 3 -րդ խումբ	5	4.7	16	2.8
Ի ծնե հաշմանդամ	0	0.0	5	0.9
Որբ երեխա	0	0.0	1	0.2
Միայնակ ծնող	2	1.9	4	0.7
Միայնակ թոշակառու	3	2.8	3	0.5
Նշվածներից ոչ մեկը	84	79.2	514	90.7
Ընդհանուր	106	100.0	567*	100.0
*Ծանոթություն՝ Երկու ԱԵԱ 2 կարգավիճակ ունի				

3.3.2 Սեռը

109) ՀՀ սահմանադրությունը և վերջինից ածանցյալ օրենքները կանանց ու տղամարդկանց շնորհում են հավասար իրավունքներ, այդ թվում՝ սեփականության իրավունքի, կրթության, առողջապահության, զբաղվածության, աշխատանքային պայմանների ու վճարման հավասար իրավունք և՛ պետական, և՛ մասնավոր հատվածի ձեռնարկություններում, ինչպես նաև հավասար անձնական իրավունքներ: Չկա իրավական տարբերակում գույքի, հողամասի զբաղեցման, ժառանգության և ձեռնարկատիրական գործունեության իրականացման իրավունքների միջև: ՀՀ օրենսդրությունը մի շարք դրույթներ է պարունակում, որոնք առնչվում են կանանց իրավունքների պաշտպանությանը և սեռական խտրականության դեմ պայքարին: Իրականում այս հոդվածները հազվադեպ են կիրառվում, և դրանք քիչ են հայտնի պրակտիկայով զբաղվող փաստաբանների շրջանում:

110) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կազմի վերաբերյալ մանրամասները՝ սեռի առումով, ներկայացված են Աղյուսակ 2.20-ում՝ Ազդեցության ենթակա գենդերային նկարագիր: Կին ղեկավար ունեցող տնային տնտեսությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 2.19-ում՝ Ազդեցության ենթակա աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա ազդեցությունը:

3.3.3 Տարիքը

111) ՀՕՏԾ 1-ի նպատակով հարցված բնակչության տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ 18-35 տարիքային խումբը ամենաներկայացվածն էր (32.4%, տե՛ս ստորև աղյուսակը): Երիտասարդական համայնքի նկարագիրն անգամ ավելի է արտահայտված, եթե երկու տարիքային խմբերը (0-17 եւ 18-35) համակցվում են: Նման համեմատությունը ցույց է տալիս, որ բնակչության ավելի քան կեսը 35-ից փոքր է: Միայն շուրջ 10% - ն է 65 տարեկանից մեծ: «Տնային տնտեսության ղեկավար» տարիքային բաշխումը ցույց է տալիս տարիքային կարգերի երեք վիճակագրական օրինակ՝ 46-55, 56-65 և 66-ն անց: Սույն տարիքային փակագծերի միջև բաշխման տարբերություններն էական չեն:

Աղյուսակ 26. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների տարիքային բաշխումը

Տարիքը	Ազդեցության ենթակա տնային տնտեսության ղեկավար		Ազդեցության ենթակա տնային տնտեսության անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
0 - 17	-	-	128	22.7
18 - 35	5	4.7	184	32.4
36 - 45	12	11.4	59	10.5
46 - 55	33	31.1	89	15.8
56 - 65	26	24.5	49	8.7
66 կամ անց	30	28.3	56	9.9
Ընդհանուր	106	100.0	565	100.0

3.3.4 Կրթությունը

112) Հետևյալ աղյուսակում երևում է, որ տնային տնտեսությունների ղեկավարների մոտ 80%-ը կրթության առնվազն միջնակարգ մակարդակ ունի: Գրագիտության բարձր մակարդակ (75%-ը առնվազն միջնակարգ կրթություն ունի) է նաև արձանագրվում ընտանիքի անդամների միջև: Տնային տնտեսությունների ղեկավարների շուրջ 18%-ը բարձրագույն կրթություն ունի, մինչդեռ ընտանիքի անդամների միջև համալսարանական կրթության տոկոսը որոշ չափով ցածր է (11%): Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների միայն մի փոքր տոկոսն (2.8%) ունի նախնական կրթություն (3 տարվա կրթությամբ):

Աղյուսակ 27. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների կրթությունը

Կրթական կարգավիճակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Տարրական	3	2.8	41	7.3
Միջին դպրոց	18	17.0	100	17.7
Միջնակարգ (10 տարի)	34	32.1	155	27.4
Ավագ դպրոց (12 տարի)	-	-	8	1.4
Միջնակարգ մասնագիտական	30	28.3	124	21.9
Համալսարանի ուսանող (լրիվ դրույքով)	-	-	6	1.1
Համալսարանի ուսանող (հեռակա)	-	-	8	1.5
Համալսարանի դիպլոմ	19	17.9	63	11.2
Հետրուիական	-	-	1	0.2
Թերի բարձրագույն կրթություն	2	1.9	6	1.1

Ոչ կիրառելի	-	-	51	9.0
Այլ	-	-	1	0.2
Ընդհանուր	106	100.0	565	100.0

3.3.5 Զբաղվածության և եկամտի աղբյուրները

113) Տնային տնտեսությունների ղեկավարների կեսից շատը (52,5%) աշխատում են: Տնային տնտեսությունների աշխատող ղեկավարների և ընտանիքի այլ աշխատող անդամների (46.5%) չափաբաժնի միջև տարբերությունը վիճակագրական նշանակություն չունի: Հարկ է նշել, որ թոշակառուների մեկ երրորդն ունի նաև որևէ այլ աշխատանք: Գործազրկության ցուցանիշը տնային տնտեսությունների (5.0%) ղեկավարների միջև շատ ավելի ցածր է, քան ընտանիքի անդամների (13.4%) շրջանում: Տնային տնտեսությունների՝ գործազուրկ և աշխատանք չփնտրող ղեկավարների քանակն ավելի բարձր է, քան գործազուրկ և աշխատանք փնտրող ղեկավարների քանակը:

114) Հարցումը ցույց է տալիս, որ աշխատանք ունեցող ազդեցության ենթակա անձանցից ավելի քան 80%-ը մշտական և կայուն աշխատանք ունի: Մոտ 20%-ը (13 տնային տնտեսություն) դրամական փոխանցումներ են ստանում արտասահմանից կամ Հայաստանի այլ վայրերում աշխատանք ունեցող ընտանիքի անդամներից: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների առնչությամբ՝ զբաղվածության տվյալները ներկայացված են հետևյալ աղյուսակներում:

Աղյուսակ 28. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ղեկավարների և անդամների զբաղվածության կարգավիճակը

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Աշխատանք ունեցող	63	52.5	204	46.5
Թոշակառու	39	32.5	59	13.4
Գործազուրկ և աշխատանք չփնտրող	7	5.8	83	19
Գործազուրկ և աշխատանք փնտրող	6	5.0	59	13.4
Բանակային ծառայող	0	0.0	7	1.6
Հաշմանդամ	4	3.4	22	5.0
Բանտում	1	0.8	5	1.1
Ընդհանուր	120 (106)	100%	439	100%
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Ազդեցության ենթակա 13 տնային տնտեսությունների ղեկավարները կենսաթոշակ, ինչպես նաև այլ աշխատանքից եկամուտ են ստանում: Ազդեցության ենթակա 1 տնային տնտեսության ղեկավարը հաշմանդամ և թոշակառու է:				

Աղյուսակ 329. Զբաղվածության տեսակը

Զբաղվածության տեսակը	ԱԵՏՏ ղեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Քանակը	%	Քանակը	%
Քաղաքացիական ծառայող	21	29.6	44	20.28
Մասնավոր հատվածի աշխատող	18	25.4	82	37.79
Ինքնագրաված, ձեռնարկատեր	9	12.6	22	10.14
Գործատու	4	5.6	16	7.37
Գյուղատնտեսության բնագավառում աշխատանք ունեցող	19	26.8	53	24.42
Ընդհանուր	71	100	217	100

115) Վերը ներկայացված աղյուսակից երևում է, որ ազդեցության ենթակա 19 տնային տնտեսությունների անդամները գյուղատնտեսության բնագավառում են աշխատում: Դրանցից 6-ը ներգրավված են անասնաբուծության մեջ: Նրանք իրենց ֆերմերներ են համարում, բայց հիմնականում նրանք ոչխարներ/միս պահելու և վաճառելու վերջին օղակն են շղթայում: Գյուղատնտեսության բնագավառում աշխատող ազդեցության ենթակա վեց տնային տնտեսությունների ղեկավարները

թոշակառու են, և նրանց համար գյուղատնտեսական գործունեությունը եկամտի լրացուցիչ միջոց է: Ընդհանրապես, գյուղատնտեսությունը եկամտի առաջնային աղբյուր չէ այս տարածքում, քանի որ տարածքը քաղաքային է: Ընդհանուր առմամբ, ազդեցության ենթակա անձանց ճնշող մեծամասնությունը (80%) աշխատում է և ունի մշտական և կայուն աշխատանք:

3.3.6 Եկամուտներ և ծախսեր

116) Հարցված ընտանիքներն ինքնուրույն են հաղորդել եկամուտների և ծախսերի մասին տվյալները: ԱԵԱ-ները չափազանց շատ են հետազոտվել՝ սկսելով ԾՆՏԱ-ի փուլից և հիմնվելով հարցազրուցավարների դիտարկումների վրա. հարցազրույցների ընթացքում նրանք հակված չէին բացահայտելու իրենց իրական եկամուտները: ԱԵԱ-ների իրական եկամուտները պաշտոնական աղբյուրներից ստուգելու տարբերակ չկա: Որոշ հարցվողներ չեն նշել իրենց եկամուտները: Ընտանիքի միջին ամսական եկամուտը տարածքում կազմում էր 233.113 ՀՀ դրամ կամ շուրջ 575 դոլար: Ազդեցության ենթակա տնային տնտեսություններում հիմնական եկամուտների տրամադրողներն ընտանիքների ղեկավարներն են (62 հոգի, կամ 58,5%):

Աղյուսակ 30. Ազդեցության ենթակա տնային տնտեսության եկամուտների աղբյուրները

Եկամուտների տեսակը	Միջին եկամուտը
	ՀՀ դրամ / ամսական
Աշխատավարձ	173,337
Տարիքային կենսաթոշակ	46,573
Թոշակի այլ տեսակ	21,356
Սոցիալական նպաստ	21,818
Արտասահմանից ստացվող դրամական օգնություն	80,600
Կրթաթոշակ	5,000
Հայաստանի տարածքում իրականացվող դրամական օգնություն	115,500
Ընդհանուր	233,113

117) Ընտանիքների միջին ամսական ծախսերը կազմում էին մոտ 194.000 ՀՀ դրամ (480 ԱՄՆ դոլար), որից մեծ մասը (39,83%) ծախսվում էր սննդամթերքի և ըմպելիքների վրա, և նշանակալից գումարներ ծախսվում էին կոմունալ հաշիվների վճարումների համար (12.37%): Մասնավոր կամ հանրային տրանսպորտի, հագուստի և առողջապահության հետ կապված ծախսերում մեծ տարբերություններ չկան: Յուրաքանչյուր նման պարագայում մարդիկ ծախսում են ամսական եկամտի 5 և 6%-ը: Այնուհանդերձ, մարդիկ ինչ-որ առումով ավելի շատ են ծախսում կրթության նպատակով, քան բջջային հեռախոսների հաշիվների կամ հասարակական ժամանցների համար: Ամսական ծախսերի տվյալներն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 31. Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների միջին ամսական ծախսերը

Ինքնահայտարարագրած ամսական ծախսերը	Ամսական եկամտի %-ը
Սննդամթերք և ըմպելիքներ	39.83
Մասնավոր տրանսպորտ / ներառյալ բենզինը /	5.41
Հանրային տրանսպորտ	5.30
Հագուստ	5.39
Առողջապահություն (դեղեր, ծառայություններ)	5.95
Կրթություն (ուսման վարձեր, գրենական պիտույքներ)	3.67
Բջջային հեռախոսի հաշիվներ	3.60
Քաղաքային հեռախոսի հաշիվներ	0.87
Հասարակական ժամանցներ/պարտականություններ	3.19
Էլեկտրաէներգիա, գազ, ինտերնետ և	12.37

Ինքնահայտարարագրած ամսական ծախսերը	Ամսական եկամտի %-ը
Կենցաղսպասարկման այլ ծախսեր	
Գույքի վարձակալություն / վարձակալման դեպքում	0.44
Կենցաղային սարքավորումներ (հեռախոս, համակարգիչ, հեռուստացույց)	2.32
Այլ / ընթացիկ ծախսեր	11.67
Ընդհանուր	100.00

3.3.7 Ծրագրի ընկալումը

118) Հարցված ազդեցության ենթակա տնային տնտեսություններից շատերը (96%) նախկինում լսել էին Ծրագրի մասին: Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ Ծրագիրը կհանգեցնի իրենց եկամուտների նվազմանը (74.3%) և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն կունենա (78.3%): Միևնույն ժամանակ 51.9%-ը ծրագիրը դիտարկում է որպես նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն, իսկ 44%-ը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության հնարավորություն: Մարդկանց կարծիքով Ծրագրի հիմնական առավելություններն են դեպի քաղաքի այլ թաղամասեր ավելի հեշտ մուտքի հնարավորությունը (77.4%) և հասարակական վայրերի ավելի լավ տեսքը (75.5%): Հարցված ԱԵՏՏ-ներից միայն մեկում են կարծում, որ ծրագրից օգուտներ չեն լինի:

Աղյուսակ 32. Ծրագրի ընդհանուր նկարագրությունը

Ազդեցության տեսակը	Այո		Ոչ	
	Քանակը	%	Քանակը	%
Ծրագրի թերությունները				
Տարաբնակեցում	49	46.2	52	49.1
Եկամտի նվազում	78	74.3	22	21
Երթևեկության ընդհատում	23	21.7	77	72.6
ճանապարհային անվտանգության վատթարացում, ճանապարհատրանսպորտային պատահարների ավելացած ռիսկ	53	50	50	47.2
Անշարժ գույքի գների ավելացում	35	33.3	62	59
Շրջակա միջավայրի վրա ազդեցություն	83	78.3	21	19.8
Առևտրականացում	47	44.8	48	45.7
Սոցիալական ցանցի կորուստ	21	19.8	80	75.5
Համայնքային տարածքների կորուստ	63	60	37	35.2
Թերություններ չկան	3	30	7	70
Այլ թերություններ	1	100	-	-
Ընդհանուր	456	558	456	495
Ծրագրի առավելությունները				
Նոր աշխատատեղերի հնարավորություններ	55	51.9	43	40.6
Հնարավորություններ ձեռնարկատիրական գործունեության համար	44	41.5	53	50
Տարածքում / մարզում անշարժ գույքի գների ավելացում	37	34.9	60	56.6
Հասարակական վայրերի ավելի լավ տեսք	80	75.5	29	27.4
Նոր բնակիչների ներհոսք	29	27.4	64	60.4
Դեպի քաղաքի այլ թաղամասեր ավելի	82	77.4	18	17

Ազդեցության տեսակը	Այո		Ոչ	
	Քանակը	%	Քանակը	%
հեշտ մուտքի հնարավորություն				
Առավելություն չկա	1	0.9	8	7.5
Ընդհանուր	328	309	275	259

4. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

4.1 Ընդհանուր տեղեկություններ

119) Համաձայն ԱԲՀ-ի (2009) և ՀՕՏԾ-ի՝ ԱԵԱ-ները պետք է ամբողջական խորհրդատվություն ստանան, և նրանց պետք է ՀՕՏ-ի պլանավորմանը և իրականացմանը մասնակցելու հնարավորություններ ընձեռվեն: Նույն սկզբունքներով ԱԵԱ-ները պետք է համապատասխան կարգով և ժամանակին տեղեկացվեն պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՀՕՏԾ-ի իրականացման ժամանակացույցի և ընթացակարգերի մասին: Հանրային տեղեկատվության և խորհրդատվության քարոզարշավ պետք է իրականացվի ԻՄ-ի կողմից ՀՕՏ գործընթացի բոլոր փուլերում: ԻՄ-ն պետք է նաև կազմակերպի Տարաբնակեցման պլանի հրապարակումը: Բացի այդ, այն պետք է ԱԵԱ-ներին տեղեկացնի փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և վերաբնակեցման մասին:

120) Սույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային խորհրդատվության գործընթացի մեխանիզմները, ՀՕՏԾ-ի հրապարակումը՝ տեղեկատվական նյութերի բաշխման միջոցով, որպեսզի ազդեցության ենթակա անձանց միջև իրազեկություն ձևավորվի իրենց իրավունքների, փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և դժգոհությունների բավարարման մեխանիզմների մասին:

4.2 Հանրային լսումներ

121) 2010 թվականին ԾՆՏԱ փուլի ընթացքում, ԻՄ-ն հանդիպումներ և լայնածավալ հանրային լսումներ է իրականացրել ԱԵԱ-ների հետ՝ ի լրումն ոչ պաշտոնական տեղեկատվության ամենօրյա տարածմանը: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 990-Ն որոշման մեջ փոփոխությունների հրապարակումից հետո, որոնց շնորհիվ հողամասի օտարման ժամկետները փոփոխվեցին, պաշտոնական տեղեկացման նամակներ ուղարկվեցին Հանրային գերակա շահի ցուցակում ընդգրկված բոլոր ազդեցության ենթակա սեփականատերերին և վարձակալներին:

122) Հաշվի առնելով նախագծի և ճանապարհային ծրագծի՝ 2012 և 2013 թթ.-ներին կատարված փոփոխությունները և 2012 թ.-ի հուլիսին իրականացված ՀՕՏԾ-ի վերանայումը՝ ՀՕՏԾ 1-ի համար նոր հանրային լսումներ են պահանջվել: Այդ պատճառներից ելնելով՝ թարմ հանրային լսումներ են տեղի ունեցել 2013 թ. մարտի 28-ին Արշակունյաց պողոտա, իսկ 2013 թ. մարտի 29-ին Արտաշատի խճուղու ճանապարհային հատվածների համար: Հանրային լսումները կազմակերպվեցին Շենգավիթ թաղամասի թիվ 75 դպրոցում, որը հասանելի էր բոլոր ԱԵԱ-ներին: Բոլոր ԱԵԱ-ները հեռախոսազանգերի միջոցով տեղեկացվել էին հանրային լսումների ամսաթվի և վայրի մասին: ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը զանգահարել է յուրաքանչյուր ազդեցության ենթակա տնային տնտեսության ղեկավարին և հրավիրել նրան, ինչպես նաև ընտանիքի՝ մասնակցելու ցանկություն ունեցող ցանկացած այլ անդամի: Հանրային լսումներն իրականացվել են ԾԻԳ-ի կողմից՝ ՄՆՇՎ խորհրդատուների աջակցությամբ: Գնահատման ընկերության թիմի ղեկավարը ներկայացրեց ՄՉՀ-ի և գնահատման մեթոդաբանությունը: Անկախ մոնիտորինգի գործակալության ներկայացուցիչը կազմակերպել է մոնիտորինգի ներկայացում, որը տեղի կունենա իրականացման գործընթացում:

123) Մասնակիցների թիվը՝ ըստ մեկ հատվածի, ինչպես նաև ՀՕՏԾ 1-ի հանրային լսումների ամսաթվերն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

124) Ընդհանուր առմամբ, 76 ԱԵԱ-ներ (իրենց տնային տնտեսությունների ներկայացուցիչներ) են մասնակցել հանրային լսումներին երկու հատվածի համար, ինչը կազմում է բոլոր ազդեցության ենթակա տնային տնտեսությունների ընդհանուր թվի 64%-ը: 15 կին ԱԵԱ-ներից 12-ը ներկա էին հանրային լսումներին:

Աղյուսակ 33. Հանրային լսումներ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր 1-ի համար

Թիվ	Ազդեցության ենթակա հատված	Ամսաթիվ	Մասնակիցների քանակը		
			Տղամարդ	Կին	Ընդհանուր
1	Արշակունյաց պողոտա	2013 թ. մարտի 28	15	5	20
2	Արտաշատի խճուղի	2013 թ. մարտի 29	49	7	56
Ընդհանուր			64	12	76

125) Հանդիպումների ընթացքում ներկայացվել են տարաբնակեցման գործընթացների հիմնական փուլերը, այդ թվում՝ իրավունքների սխեման, փոխհատուցման մեխանիզմները, գնահատման մեթոդաբանությունը, չափագրման հետազոտությունը, ինչպես նաև ԱԵԱ-ների հետ քննարկված տարաբնույթ հատուկ դեպքերը: Բացի այդ, բոլոր ներկա ԱԵԱ-ներին յուրաքանչյուր հողամասի և դրա գույքի համար քարտեզ է ցուցադրվել՝ նշված հողամասերով, շենքերով և կառույցներով, որոնք պարունակում էին ԱԵԱ-ների անունները: Ընդհանուր առմամբ, մասնակցած ԱԵԱ-ները գոհ էին հանրային լսումների գործընթացից: Քննարկված հիմնական հարցերը և պատասխանները, ինչպես նաև առանցքային խնդիրները և մտահոգությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 34. Հարցեր և պատասխաններ – Արշակունյաց պողոտա և Արտաշատի խճուղի

Հարց / Մտահոգություն	Պատասխան
Մարդիկ, ում գույքը բացառիկ՝ գերակա հանրային շահի պատճառով սահմանափակման տակ են, սակայն դրանք ազդեցության չեն ենթարկվել այս նոր նախագծով, ցանկանում են իմանալ, թե ե՞րբ կկարողանան օգտագործել / վաճառել կամ կառուցել շենքն իրենց հողամասերի վրա:	ԾԻԳ-ը կխորհրդակցի Երևանի քաղաքապետարանի հետ և մարդկանց կիրազեկի հնարավոր ամսաթվերի և ընթացակարգերի մասին:
Կադաստրային կամ շուկայական արժեքը կօգտագործվի՞ հողամասերի գնահատման ընթացքում:	Բացատրվել է, որ հողամասերը կգնահատվեն՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնահատման համեմատական մեթոդը, շուկայական գնի հաշվարկներից: Այն դեպքերում, երբ կադաստրային գինը գերազանցում է շուկայական գինը, կօգտագործվի կադաստրային գինը:
Ե՞րբ է սկսվելու պայմանագրերի ստորագրումը:	Փոխհատուցման ընթացակարգը սկսվելու է չափագրման և գնահատման աշխատանքների ավարտից հետո: Այնուհետև, փաստաթղթերը կուղարկվեն ԱԶԲ և ՀՀ կառավարություն՝ հաստատման նպատակով: Ազդեցության ենթակա անձինք պաշտոնապես գնային առաջարկ կստանան Նախնական պայմանագրի հետ: Ընդհանրապես, ակնկալվում է, որ ընթացակարգը կսկսվի սույն տարվա հուլիսին:
Եթե որևէ մեկը բանկային վարկ ունի և վարկը մարելու համար հույսը դրել է ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասից	Բանկերը, անշուշտ, վարկը տվել են՝ հաշվի առնելով ԱԵԱ-ի՝ այլ գործողություններում ներգրավվածությունը, քանզի հողամասի ոչ օրինական օգտագործումը բավարար չէ բանկային վարկերի հաստատման համար: Բացի այդ, այս դեպքում վարկը վերցվել է գների ամրագրման ամսաթվերից հետո, երբ ԱԵԱ-ները տեղեկացված էին Ծրագրի և հողամասի օտարման մասին:

Հարց / Մտահոգություն	Պատասխան
մրգային բերքի շահույթի վրա, արդյո՞ք դա կհատուցվի:	
Որո՞նք էին սոցիալական հարցումների նպատակները:	Սոցիալական հարցումները նպատակամղված էին ԱԵԱ-ների սոցիալ - տնտեսական պայմանների նկարագրությանը և ապրուստի վերականգնողական ծրագրերի մշակմանը: Օրինակ՝ եթե կան ընտանիքներ, որոնք գրանցված չեն «Փարոս» համակարգում, և ակնհայտ է, որ նրանց ապրուստը կարելի է համարել աղքատության սահմանագծից ցածր, ապա այդ ընտանիքների վերաբերյալ մանրամասն տվյալները փոխանցվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ քննարկման և համապատասխան լուծման նպատակով:
Ինչու՞ էր ամբողջ հողամասը չափվում և ինչու՞ էին ծառերը / կառույցները նկարագրվում:	Որպեսզի բացահայտենք ծանր ազդեցության ենթակա անձանց, ովքեր կորցնում են իրենց գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10% - ը, մեզ տեղեկություններ են հարկավոր բոլոր ծառերի / ամբողջ գույքի մասին:
Հնարավոր է՞ ձեռք բերել ամբողջ սեփականությունը, եթե դրա միայն մի մասն է ազդեցության ենթարկվում:	Ելնելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ եթե ԱԵԱ-ն ցանկանում է, որ ամբողջ գույքը ձեռք բերվի, ապա ԱԵԱ-ն պետք է իր որոշման մասին տեղեկացնի 60 օրվա ընթացքում, Հանրային գերակա շահի մասին ՀՀ որոշման ուժի մեջ մտնելուց հետո: Սույն հնարավորությունից կարող են օգտվել միայն օրինական հոդօգտագործողները: Տրամաբանական է, որ համայնքային հողամասերն անօրինական կերպով օգտագործող ԱԵԱ-ներին հնարավոր չէ առաջարկել նույն պայմանները, քանզի նրանց օգտագործած հողամասը նրանց չի պատկանում:
Սեփականություն համարվող հողամասի մի մասի օտարման դեպքում հնարավոր է փոխհատուցում ստանալ սեփականության կողքին գտնվող այլ հողամասի տեսքով՝ դրամական փոխհատուցման փոխարեն:	Սույն ծրագրի շրջանակներում միայն դրամական փոխհատուցում է նախատեսվում: Ազդեցության ենթակա հողամասերի կողքին կամ մոտակայքում ազատ հողամաս չկա, որպեսզի տրամադրվի սեփական հողամաս կորցնող ԱԵԱ-ներին:
Ո՞ր կառույցն է սահմանվում որպես ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ և ինչպե՞ս դա կփոխհատուցվի:	Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններն են այն կառույցները, որոնք կարող են տեղափոխվել առանց դրանց ֆունկցիոնալ նպատակներին վնաս հասցնելու: Վերաբնակեցման նպաստները քննարկվում են՝ հաշվի առնելով ծախսերը, որոնք կառաջանան բնակելի և ոչ բնակելի շենքերից և կառույցներից կահույքի կամ այլ ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինությունների տեղափոխումից: Տրանսպորտային ծախսերը սահմանվում են՝ ըստ շուկայում առկա բեռնափոխադրումներ իրականացնող մի շարք կազմակերպությունների առաջարկած ծառայությունների միջին արժեքի: Այն հաշվարկվում է այնպես, որ ԱԵԱ-ին հնարավորություն ընձեռվի գույքը տեղափոխել 20 կմ շառավղի շրջանակներում, և ներառում է մի շարք երթուղիներ, որոնք անհրաժեշտ են տեղափոխման ենթակա գույքի ցանկացած քանակություն տեղափոխելու համար: Այն հաշվի է առնում նոր տարածքի գտնվելու վայրի հարկը, վերելակի առկայությունը և սահմանում է գույքի մեկ կտորի առավելագույն չափսը:

Հարց / Մտահոգություն	Պատասխան
Գրքույկներին ծանոթանալուց հետո ե՞րբ և ինչպե՞ս կարող են ԱԵԱ-ները տալ իրենց հարցերը:	ԱԵԱ-ները կարող են օգտագործել գրքույկում նշված բոլոր կոնտակտները: Յուրաքանչյուր հինգշաբթի ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը ներկա կլինի իրենց տեղանքային գրասենյակում և կկարողանա պատասխանել բոլոր հարցերին:
Ճանապարհի մոտ որոշ կոմունալ կառույցներ կան: Արդյո՞ք դրանք կփոխարինվե՞ն:	Կոմունալ կառույցների տեղափոխման նախագիծը պատրաստվել է: Բոլոր կոմունալ կառույցները կվերականգնվեն մինչև նախաձրագրային պայմանների մակարդակը:
Շինարարական աշխատանքներն ինչպիսի՞ ազդեցություն կունենան ճանապարհի կողքին բնակվող մարդկանց առօրյա կյանքի վրա:	Շինարարական աշխատանքների ընթացքում շինհրապարակներ են հիմնվում, այսինքն՝ այդ տարածքն առանձնացվում է: Փոշու կուտակման դեպքում ջրցան ցիստեռններ կօգտագործվեն փոշին նվազեցնելու համար:
Արդյո՞ք փոխհատուցման ընթացակարգը կիրականացվի՝ ըստ ՀՀ օրենսդրության:	Փոխհատուցման հատկացման ընթացակարգը կիրականացվի՝ ըստ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ-ի ՀՕՏ քաղաքականության:

4.3 Տեղեկատվության հրապարակումը

126) Մարդահամարի և ՄՏՀ-ի ընթացքում հայերեն լեզվով իրավունքների տպագիր սխեմա է բաժանվել բոլոր ԱԵԱ-ներին: Հանրային լուսմների ընթացքում ԾԻԳ-ը հետևյալ բրոշյուրներն է բաժանել հայերեն լեզվով, որոնց օրինակները ներկայացված են հավելված 7-ում և 8-ում:

ա. Գնահատման մեթոդաբանության բրոշյուր, որը ներառել է հողամասի և կառույցների (ըստ տեսակի) միջին սակագները,

բ. Ծրագրի մասին տեղեկատվության նորացված բրոշյուր իրավունքների սխեմայով, որտեղ ներկայացվել են Ծրագրի նկարագրությունը, բողոքների բավարարման մեխանիզմը, իրավունքներն ու փոխհատուցումները, ինչպես նաև հաճախակի տրվող հարցերի պատասխանները:

127) Ծրագրի պլանավորման, իրականացման և մոնիտորինգի ընթացքում տեղեկատվության հրապարակման հետևյալ գործողություններն են նախատեսվել.

ա. ազդեցության ենթակա տարածքում բողոքների արագ և արդյունավետ լուծման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման նպատակով տարածքային գրասենյակ ստեղծել, որտեղ ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը կաշխատի սահմանված օրերին,

բ. ստեղծել և հրապարակել հատուկ էլեկտրոնային փոստի հասցե՝ ուղղված ԱԵԱ-ի հետ արդյունավետ հաղորդակցության խթանմանը,

գ. հրապարակել ԾԻԳ-ի հասցեն (ԱԵԱ-ների հետ առերես հանդիպումների համար) և ԾԻԳ-ի կոնտակտային հեռախոսահամարները,

դ. ԱԶԲ տարաբնակեցման կայքէջում տեղադրել ՀՕՏ-ի անգլերեն տարբերակը,

ե. ՀՕՏ-ի հայերեն օրինակները տարածել Շենգավիթի տեղական համայնքային իշխանությունների գրասենյակներում,

զ. ԾԻԳ-ի ինտերնետային կայքէջ մշակել հայերեն ՀՕՏ-ի և ՀՕՏ-ին առնչվող բոլոր փաստաթղթերի հրապարակման համար և

է. ՀՕՏ-ի վերջնական հաստատումից անմիջապես հետո բոլոր ԱԵԱ-ներին ծրագրի մասին վերջնական տեղեկատվական բրոշյուր ուղարկել, որը կներկայացնի ազդեցությունների ամփոփագիրը,

իրականացման միջոցառումները, ինչպես նաև ՀՕՏ-ի փոխհատուցման քաղաքականությունը,
(Հավելված 1):

5. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

5.1 Ներածություն

128) ՀՕՏԾ 1-ն իր շրջանակում ներառում է արձագանքող, դյուրամատչելի և մշակույթին հարիր բողոքների և դժգոհությունների լուծման մեխանիզմի հիմնում, որը կկարողանա ստանալ ազդեցության ենթակա անձանց մտահոգություններն ու դժգոհությունները Ծրագրի ֆիզիկական, սոցիալական և տնտեսական ազդեցությունների վերաբերյալ և դրանց տալ լուծումներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերի վրա ազդեցություններին: ԱԵԱ-ն հնարավորություն կունենա բողոքարկելու կամ հարցում կատարելու ՀՕՏ ցանկացած ասպեկտի վերաբերյալ: Սահմանված բողոքարկման մեխանիզմի ներքո ԱԵԱ-ները կարող են բողոքարկել ցանկացած որոշում, գործելակերպ կամ գործողություն՝ կապված չափազանց, հողամասի կամ այլ ակտիվների գնահատման, դրանց օտարման և փոխհատուցման հետ: Բոլոր հնարավոր ուղիները հասանելի կլինեն ԱԵԱ-ների համար՝ ներկայացնելու իրենց դժգոհությունները: ԾԻԳ-ը կապահովի, որ հողամասի օտարման ցանկացած ասպեկտի, փոխհատուցման և տարաբնակեցման առնչությամբ բողոքներին ու դժգոհություններին լուծումները տրվեն ժամանակին և արդյունավետորեն:

129) Բողոքների լուծման մեխանիզմի առանցքային խնդիրներն են՝

ա. Ձեռք բերել փոխհամաձայնեցված լուծումներ, որոնք կբավարարեն երկուսին էլ՝ Ծրագրին և ԱԵԱ-ներին, ինչպես նաև տեղում լուծելու տարաբնակեցման հետ կապված որևէ դժգոհություն՝ խորհրդակցելով տուժած կողմի հետ,

բ. Նպաստել ՀՕՏ-ների իրականացմանը, մասնավորապես՝ կրճատել երկարատև դատական գործընթացները և կանխել Ծրագրի իրականացման ձգձգումները,

գ. Ժողովրդավարացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում՝ միաժամանակ ապահովելով թափանցիկություն և ազդեցության ենթակա անձանց հանդեպ սահմանելով պատասխանատվություն:

130) Բոլոր ԱԵԱ-ները լիարժեք տեղեկացվել են իրենց իրավունքների և բողոքների հասցեագրման ընթացակարգերի մասին հանրային լուծումների ընթացքում, նախքան մանրամասն չափազանցումները, ակտիվների գույքագրումը, օտարման ենթակա գույքի հաշվառումը և գնահատումը: Սա նույնպես ապահովվեց ՀՕՏԾ 1-ի իրականացումը մանրակրկիտ մշակելու միջոցով՝ ապահովելով բոլոր ԱԵԱ-ների լիարժեք մասնակցությունը և խորհրդակցությունները, ինչպես նաև ընդհանուր առմամբ ստեղծելով լայնածավալ հաղորդակցություն և համակարգում ԱԵԱ-ների, ԾԻԳ-ի և տեղական իշխանությունների միջև:

5.2 Բողոքների լուծման ընթացակարգը

131) Բողոքների և դժգոհությունների լուծումը ժամանակին, թափանցիկ և բավարար կերպով ապահովելու, ինչպես նաև ԱԵԱ-ների համար իրենց դժգոհություններն արտահայտելու բոլոր հնարավոր ուղիներն ապահովելու նպատակով ստեղծվեց սույն մեխանիզմը: Բողոքի լուծման ֆորմալ մեխանիզմում կընդգրկվեն մի շարք կողմեր և ուղիներ, ինչպես օրինակ՝ ԵԲ-ն, ԾԻԳ-ը և ԾԿԻ-ն: Ջանքեր կգործադրվեն տեղական մակարդակով լուծել ներկայացված բողոքները: Այնուամենայնիվ, տարաբնակեցման փուլում ստացված բողոքներն ու դժգոհությունները կլուծվեն հետևյալ քայլերի և գործողությունների միջոցով:

Քայլ 1

132) Բողոքներն ընդունող մարմին է հանդիսանում ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը (ՏՄ): Բողոքը կատորագրվի ԱԵԱ-ի կողմից, և այն կներառի հետևյալ տվյալները՝ 1) բողոքի բնույթը, 2) վայրը և 3) դիմողի ամբողջական հասցեն: Եթե ՏՄ-ն չկարողանա լուծել խնդիրը, կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ վերաբնակեցման առաջարկով, ապա գործը կուղարկվի ԾԻԳ-ի այլ մասնագետներին՝ վերանայման և հնարավոր լուծումների համար:

133) ԾԻԳ-ը կիրապարակի պաշտոնական պատասխան դաշտային ՏՄ-ի կողմից բողոքը ստանալուց ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: Այս պատասխանը կենթադրի կա՛մ դիմողին փոխհատուցման առաջարկ, կա՛մ խնդրի հետագա քննարկում առանձին հանդիպման ընթացքում, կա՛մ էլ՝ բողոքը մերժելու վերաբերյալ բացատրություն: Եթե բողոքը չի կարող լուծվել այս մակարդակում, կամ եթե ԱԵԱ-ն բավարարված չէ լուծումով, ապա բողոքը կներկայացվի ԵԲ-ին:

Քայլ 2

134) Եթե ԱԵԱ-ն համաձայն չէ ԾԻԳ-ի փոխհատուցման առաջարկին կամ բողոքի մերժման պատճառներին, ապա նա պետք է իր բողոքով դիմի ԵԲ-ին: ԱԵԱ-ն բողոքը պետք է ներկայացնի ԾԻԳ-ից պատասխանը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում: Բողոքը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն այս փուլում: ԵԲ-ն պետք է արձագանքի բողոքին 15 օրվա ընթացքում: Եթե որևէ վճիռ չի կայացվել, ԵԲ-ն պետք է գործը փոխանցի ԾԿԽ՝ստանալու վերջինիս որոշումը: ԾԿԽ-ն կքննարկի բողոքը նիստում: ԾԿԽ որոշումը պետք է համահունչ լինի ՀՕՏԾ դրույթներին:

Քայլ 3

135) Եթե դիմողը բավարարված չէ ԾԿԽ կայացրած որոշումով, և անձը մտադիր է շարունակել գործընթացը, ապա նա կարող է հանձնել գործը համապատասխան ընդհանուր իրավասության դատարան, որի որոշումը կլինի վերջնական:

136) Այնուհանդերձ, դժգոհությունների վերոնշյալ մեխանիզմը և գործընթացները չեն սահմանափակում քաղաքացու՝ գործը ընդհանուր իրավասության դատարան ներկայացնելու իրավունքը դժգոհության քննարկման գործընթացի ցանկացած պահին: Բոլոր ջանքերը կգործադրվեն ԾԻԳ-ի մակարդակում խնդիրները կարգավորելու համար՝ խորհրդակցելով համայնքների հետ: Եթե հնարավոր չէ, ապա պետք է փորձել լուծել խնդիրը ԵԲ/ԾԿԽ մակարդակում հնարավորինս խուսափելով/կանխելով ձգձգումները: Բոլոր բողոքներն ու լուծումները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն ԾԻԳ-ի կողմից և հասանելի կլինեն դիտարկումների, մոնիտորինգի և գնահատման նպատակներով: Բողոքների լուծման գործընթացն ամփոփ ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

137) Բոլոր ստացված և դիտարկված բողոքները կփաստաթղթավորվեն՝ անկախ արդյունքներից: Մշակվել է բողոքի գրանցման ձևաթուղթ, և այն հասանելի է ԱԵԱ-ներին՝ բողոքը ներկայացնելիս:

5.3 Տեղեկատվության և բողոքների լուծման ծառայությունների մատչելիությունը

138) Ազդեցության ենթակա համայնքների համար թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելու նպատակով, ինչպես նաև ապահովելով տեղեկատվության, աջակցության և բողոքների լուծման ծառայությունների մատչելիությունը ԱԵԱ-ների համար, ԾԻԳ-ը նախատեսել է նաև հետևյալ լրացուցիչ միջոցները:

ԾԻԳ-ի դաշտային գրասենյակը

139) ԱԵԱ-ների համար առավել մատչելիություն ապահովելու նպատակով ՀՕՏԾ մշակման փուլում ԾԻԳ-ի կողմից հիմնվեց դաշտային գրասենյակ տեղի դպրոցներից մեկում: Հանրային լուսմների ժամանակ ԱԵԱ-ները տեղեկացվեցին դաշտային գրասենյակի վերաբերյալ: ՀՕՏԾ-ի պատրաստման պահից սկսած՝ ԱԵԱ-ների հետ կազմակերպվեցին շաբաթական հանդիպումներ:

ԾԻԳ-ի կայքէջը

140) ԾԻԳ-ը կստեղծի և կվարի ինտերնետային կայքէջ: Ծրագրին առնչվող փաստաթղթերը հասանելի կլինեն կայքէջում և կանոնավոր կերպով կթարմացվեն: Շահառուները և համայնքային լայն

հասարակության անդամները կկարողանան տեղադրել հարցեր, կարծիքներ և առաջարկություններ, ստանալ իրենց հարցերի պատասխանները և ձեռք բերել Ծրագրի վերաբերյալ տեղեկություններ: ԾԻԳ-ը կայքէջը կստեղծի մինչև 2013թ. սեպտեմբերի վերջը:

Հատուկ էլեկտրոնային փոստ

141) Լայն հասարակության և ԱԵԱ-ների համար, ովքեր գերադասում են էլեկտրոնային հաղորդակցությունը, Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի դարձնելու նպատակով ԾԻԳ-ը ստեղծեց հատուկ նախատեսված էլ.փոստի հասցե, որպեսզի լայն հասարակությունը ուղարկի իր դժգոհությունները, առաջարկությունները/կարծիքը/հարցերը և այլն (verabnaketsum@yerevan.am):
Էլ.փոստի հասցեն Ծրագրի ընթացքում կմնա ակտիվ վիճակում, ներառյալ՝ Թերությունների մասին ծանուցման ժամանակահատվածում: Էլ.փոստի հասցեի տվյալներն ԱԵԱ-ներին տրվել են հանրային լուսմների ընթացքում տեղական իշխանությունների կողմից Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և տեղեկատվության տարածման այլ հասանելի միջոցներով: Հաշիվն արդեն գործում է:

Դեմառդեմ հանդիպումներ

142) Եթե ԱԵԱ-ները չկարողանան օգտագործել հասանելի ուղիներից որևէ մեկը, ապա նախատեսված են դեմառդեմ հանդիպումներ ԾԻԳ-ի նշանակված աշխատակցի հետ: Դեմառդեմ հանդիպում նշանակելու նպատակով ԱԵԱ-ների համար հասանելի են հետևյալ կոնտակտային տվյալները.

ԾԻԳ-ի հեռախոսահամարը՝ (010) 52-09-73
Հասցեն՝ Փ. Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 0010 Երևան,
Հայաստանի Հանրապետություն

Փոստային բողոքներ

143) ԱԵԱ-ները, շահառուները և լայն հասարակությունը հնարավորություն կունենան ուղարկել նամակներ՝ իրենց դժգոհություններով, մտահոգություններով, կարծիքներով և առաջարկություններով՝ ԾԻԳ-ի հետևյալ հասցեով.

«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ
Փ. Բուզանդի 1/3, 0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն

144) Հասանելի ուղիների վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի ազդեցության ենթակա անձանց հանրային լուսմների ընթացքում: Եթե հանրային լուսմների ընթացքում ԱԵԱ-ներն առաջարկեն իրենց կարծիքն ու մտահոգությունները լսելի դարձնելու առավել արդյունավետ միջոցներ, ապա նրանց առաջարկությունները կընդգրկվեն բողոքի լուծման մեխանիզմում՝ համապատասխանաբար տեղեկացնելով հանրությանը:

6. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

6.1 ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրություն

6.1.1 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

145) ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը: Համաձայն վերջինիս՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարումն ու դրա դիմաց փոխհատուցումը կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքի 102, 104 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (1998 թ.), 2006 թվ. նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:

146) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը որոշում կընդունի բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին՝ համապատասխան պետական մարմիններից ստացված պահանջի համաձայն: Գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումով սահմանվում է.

ա. գերակա և բացառիկ հանրային շահը, որի համար կիրականացվի սեփականության օտարում,

բ. օտարված գույքը ձեռքբերող կողմը,

գ. օտարված գույքի բաղկացուցիչ մասերը (հասցեներ, տեղակայում և/կամ այլ տեղեկատվություն, որը տվյալ գույքը տարբերակում է մյուս ակտիվներից) և

դ. օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը:

147) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվում են սեփականության օտարման ընթացակարգերը և հողամասի գրանցված և անշարժ գույքի սեփականատերերի փոխհատուցում ստանալու իրավունքները՝ հանրային նպատակով դրանց օտարման դեպքում: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո իրավասու մարմնի կողմից պետք է կազմվի արձանագրություն, որտեղ կնկարագրվի օտարված սեփականությունը՝ կառավարության կողմից սահմանված ընթացակարգերի և վերջնաժամկետների համաձայն, ձեռք բերող կողմը, սեփականատերերը կամ օտարված սեփականության նկատմամբ սեփականության իրավունք ունեցողները կարող են իրենց մասնակցությունը ցուցաբերել նման արձանագրության կազմման գործընթացում, եթե այդ արձանագրությունը չի կազմվել նաև սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը կազմելուց հետո ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում պետք է պատշաճ կարգով ծանուցվի սեփականատիրոջը կամ սեփականության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց, ովքեր իրավասու են բողոքարկել այն իրավասու մարմնին և/կամ դատարանում արձանագրությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

148) Հողամասի/սեփականության օտարման հարցը լուծվում է ՏԿՆ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց պաշտոնական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի

առնելով վերջինիս շուկայական արժեքը և կորուստները, այդ թվում՝ նաև դրանից բխող հետևանքային վնասները և կարող է ներառել հողամասի/սեփականության փոխարինումը: Պատշաճ փոխհատուցում կվճարվի սեփականատիրոջը՝ իր գույքի օտարման դիմաց: Պատշաճ է համարվում օտարված սեփականության շուկայական արժեքին 15%-ով վրադիր գումարի վճարումը:

149) Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գնահատումը պետք է իրականացվի՝ 2005 թ. հոկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման մասին ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն:

6.1.2 Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները

150) Հարկադիր տարաբնակեցման ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

ա. խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:

բ. Փոխհատուցման/վերականգնման դրույթները կապահովեն ԱԵԱ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:

գ. ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված կամ խորհրդակցված լինեն ՀՕՏ փոխհատուցման տարբերակների մասին:

դ. Հարկ է հնարավորինս օժանդակել/աջակցել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային ինստիտուտներին:

ե. Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարազոր դիտարկմամբ:

զ. Սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:

է. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, ինչպես օրինակ՝ տեղաբնիկներն են, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց վիճակը բարելավելու համար:

ը. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես Ծրագրի մի մաս, իսկ ողջ արժեքի փոխհատուցումը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի և օգուտների շրջանակներում:

թ. փոխհատուցումը ու տարաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի օտարման գոտու հողամասի հարթեցման և քանդման իրավունքի տալը:

6.1.3 Հողի օտարման և տարաբնակեցման վերավերբյալ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը

151) ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունն ու տարբերությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 35. Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատություն

ՀՀ օրենսդրություն	ԱԶԲ ԱԲՀ
Հողի փոխհատուցում, միայն սեփականության	Սեփականության վկայականի բացակայությունը

վկայական ունեցող հողի սեփականատերերին:	խոչընդոտ չէ փոխհատուցման և/կամ վերականգնման համար: Առանց վկայականի հողի սեփականատերերը նույնպես ստանում են վերականգնման նպաստ:
Բոլոր տները/շինությունները փոխհատուցվում են Ծրագրի շրջանակներում վնասված/քանդված շինությունների համար՝ բացառությամբ չգրանցված առևտրային շինությունների:	ԱԶԲ քաղաքականությունը ներառում է փոխհատուցում նաև չգրանցված առևտրային շինությունների համար:
Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է միայն ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ հողամասը տնօրինող սեփականատերերին:	Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ-ներին:
Հողի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական արժեք + գնահատված արժեքի 15%:	Հողի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական գնի/փոխարինման արժեքի վրա:
Նախքան գնահատումը հարկ է ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին ներկայացնել ազդեցությունների քանակի և արժեքի, փոխհատուցման գումարների և ֆինանսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվություն:	Նույնն է:
Ոչ մի դրույթ չկա զգալի ազդեցություն կրած ԱԵԱ-ների և խոցելի խմբերի եկամտի/ապրուստի վերականգնման միջոցառումների, նպաստների կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ:	ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ապրուստի վերականգնում, լուրջ կորուստների, ինչպես նաև վերաբնակեցման գործընթացի շրջանակներում ԱԵԱ-ների կողմից կրած ծախսերի համար:

152) Ընդհանուր առմամբ, ՀՀ օրենսդրությունն ու ԱԶԲ քաղաքականությունը ՀՕՏ-ի վերաբերյալ սկզբունքորեն չեն տարբերվում: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքներն ու կանոնակարգերն այնքան էլ հստակ չեն սահմանում, թե ԱԵԱ-ների վերականգնումն ինչ ճանապարհով պետք է իրականացվի: Մեկ այլ խնդիր է, որ ԱԶԲ-ն փոխհատուցման կամ նվազագույնը վերականգնման համար իրավասու է ճանաչում սեփականության վկայական ունեցող կամ առանց վկայականի սեփականատերերին կամ գրանցված և չգրանցված օգտագործողներին: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության միջև այս անհամապատասխանությունները համաձայնեցնելու նպատակով ԵԲ-ն Ծրագրի համար պատրաստեց ՀՕՏՆ նախագծային տարբերակը, որն ապահովում է փոխհատուցում փոխարինման ողջ արժեքով բոլոր տարրերի համար և նվազագույնը փոխհատուցում՝ անօրինական/առանց սեփականության վկայականի բնակվողների և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության համար: ՀՕՏՆ-ն նախատեսում է նաև վերականգնման փաթեթներ խոցելի և զգալի ազդեցության ենթակա ԱԵԱ-ների համար, որոնք պետք է վերաբնակեցվեն:

153) Առաջին հերթին պետք է փորձել սեփականության իրավունքով տնօրինող հողամասն օտարել ազդեցության ենթակա մարմինների հետ առանձին բանակցությունների հիման վրա: Բանակցությունների ձախողման դեպքում կգործի հանրային գերակա շահի օրենքը և կնախաձեռնվի հարկադիր օտարման վարույթ: Բանակցության հիման վրա վաճառքի դեպքում, ԱԶԲ-ն պահանջում է հավուր պատշաճի ապահովել, որ ԱԵԱ-ներին առաջարկվի արդար գին, տեղեկատվություն և սակարկելու բավարար սահման, ինչպես նաև, որպեսզի նրանց դեպքը մոնիտորինգի ենթարկվի

արտաքին անկախ գործակալության կողմից: Այս պայմանները լիովին երաշխավորվում են արտաքին անկախ գործակալության և, ՀՀ կառավարության փորձի համաձայն, գույքի փոխհատուցման դրույքաչափերը սահմանելու համար հողի անկախ գնահատողի ներգրավմամբ:

6.1.4 Սույն Բազմափուլ ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները

154) ՀՀ օրենքների և ԱԶԲ Սոցիալական անվտանգության քաղաքականության (ՍԱՔ) հայտարարագրի (2009թ.) հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները.

ա. Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:

բ. Անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սահմանափակ ժամկետներով ՀՕՏԾ (ինչպես՝ սույն ՀՕՏԾ-ն), և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ նվազագույն դեպքում նախքան Ծրագրի իրականացումը վերջիններիս ունեցած կենսամակարդակը վերականգնելու համար:

գ. Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը և ենթաձրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև մոնիթորինգի միջոցառումներին մասնակցելու միջոցով:

դ. Խոցելի և զգալի ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:

ե. ԱԵԱ-ները՝ մասնավորապես՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները կամ որևէ ազատ տարածք ինքնակամ զավթած անձինք, կամ էլ այն ԱԵԱ, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալներ առկա չեն (օր.՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողից բացի այլ կորուստների դիմաց:

է. ԱԵԱ-ների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները սահմանված կարգով կգրանցվեն և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողի կորստի դիմաց:

ը. Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:

թ. ՀՕՏԾ-ն կներկայացվի ԱԵԱ-ներին հայերենով:

ժ. Փոխհատուցման, վերաբնակեցման օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն, նախքան կապալառուն ֆիզիկապես կստանա հողամասը, կամ նախքան որևէ փաթեթի շրջանակներում որևէ շինարարական աշխատանքի նախաձեռնումը:

ի. Մշակված է ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմ:

6.2 Իրավասությունը

155) Ծրագրի ներքո փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավասություն ունեցող ԱԵԱ-ներն են.

ա. հողամասը կորցնող բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ունեն հողամասի սեփականության իրավունք կամ չունեն իրավական կարգավիճակ,

բ. Անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործողները՝ անկախ նրանից գրանցված են թե ոչ,

գ. շինությունների, բերքի, մշակաբույսերի կամ հողամասին ամրագրված այլ օբյեկտների սեփականատերերը և

դ. ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ները:

156) Փոխհատուցման իրավասությունը սահմանափակված է կասեցման օրով՝ 2012թ. ապրիլի 13-ը, որը ԱԵԱ-ների մարդահամարի և ՄՁՀ (նկարագրության արձանագրությունների պատրաստում) սկիզբ է հանդիսանում: ԱԵԱ-ները, ովքեր կհաստատվեն ազդեցության ենթակա տարածքներում կասեցման օրից հետո, փոխհատուցման իրավասություն չեն ունենա: Այնուամենայնիվ, նրանց կանխավ կներկայացվի համապատասխան ծանուցում, որով վերջիններիս կխնդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները, նախքան Ծրագրի իրականացումն սկսելը: Նրանց ապամոնտաժված կառույցներն ու նյութերը չեն առգրավվի, նրանք տուգանքներ չեն վճարի կամ սանկցիայի չեն ենթարկվի:

6.3 Փոխհատուցման իրավունքները

157) Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխհատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի՝ ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱԶԲ քաղաքականությանը համապատասխան: Փոխհատուցման գումարը սահմանելու համար հիմք է հանդիսանում գույքի շուկայական արժեքը, իսկ այն դեպքերում, երբ գույքի կադաստրային արժեքը գերազանցում է շուկայական արժեքին, ապա որպես հիմք ծառայում է կադաստրային արժեքը: Իրավունքների ամփոփ սխեման ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 6. Իրավունքների սխեմա

Կորստի/վե րականգնմ ան տեսակը	Նկարագր ությունը	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
3. Ենթածրագիր 1-ը ներառում է Արգավանդի մայրուղու և Շիրակի փողոցի արևմտյան մասի միջև եղած հանգույցի շինարարությունը, որն ունի մոտ 1.3 կմ երկարություն: Ծրագիծն անցնում է Կարմիր Բլուր կոչվող հնագիտական վայրով: Ենթածրագիր 2-ը ներառում է երկու հիմնական պողոտաների՝ Արշակունյաց պողոտայի (1.4կմ) և Արտաշատի մայրուղու (1.5կմ) լայնացումը, որի արդյունքում կլայնանա ներկայիս 2 երթևեկելի գոտուց բաղկացած ծրագիծը՝ վերածվելով 4-6 երթևեկելի գոտու՝ կենտրոնական բաժանիչ գոտիով: Արտաշատի մայրուղուց դեպի Շիրակի փողոց 500 մ հեռավորությամբ նոր հանգույցը կլրացնի ենթածրագիր 2-ը:
4. Ծրագրի մյուս առանձնահատկություններն են՝ 1) Արգավանդի մայրուղու հանգույցի բարեկարգումը 2) Հրազդան գետի վրայով նոր կամրջի շինարարությունը, 3) տարբեր մակարդակների վրա գտնվող օղակաձև խաչմերուկ Արշակունյաց պողոտայի և նոր Շիրակի փողոցի փոխհատման կետում, 4) նույն մակարդակի վրա գտնվող օղակաձև խաչմերուկի շինարարություն Շիրակի փողոցում և Արտաշատի մայրուղու վրա և 5) հանգույցների շինարարությունը և մուտքը դեպի տեղական ճանապարհներ:
5. Սույն Ենթածրագիրը պահանջում է հիմնական հողի օտարում և տարաբնակեցում (ՀՕՏ): Սույն բրոշյուրը տեղեկություններ է ներկայացնում միայն Արշակունյաց պողոտայի և Արտաշատի մայրուղու հատվածների հողի օտարման և տարաբնակեցման մասին:

12. Ազդեցությունների ամփոփում

6. ՀՕՏԾ 1-ը ներկայացնում է 114 հոդամաս: Դրանցից՝
 - 1) 3-ը հանդիսանում են 3 ԱԵԱ-ների սեփականությունը,
 - 2) 2 հոդամասեր վարձակալված են ԵՔ-ի 2 ԱԵԱ-ների կողմից,
 - 3) ԵՔ-ի սեփականությունը հանդիսացող թվով 102 հոդամասեր, որոնք ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվում են թվով 99 ԱԵԱ-ների կողմից,
 - 4) 6-ը հանդիսանում են ԵՔ-ի սեփականությունը,
 - 5) 1-ը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) սեփականությունը:
7. Բացի 6 համայնքային հոդամասերից և ՀՀ-ի սեփականությունը հանդիսացող 1 հոդամասից՝ ՀՕՏԾ թիվ 1 Ծրագիրն ազդում է 35,257.53 մ2 ընդհանուր մակերեսով հոդամասերի վրա, ներառյալ՝
 - 1) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 90 գյուղատնտեսական հողեր (25,155.23 մ2),
 - 2) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 3 (1,450.71 մ2) և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ տնօրինվող թվով 1 (409.70) հոդամասեր:
 - 3) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 7 (1,543.56մ2), սեփականության իրավունքով տնօրինվող թվով 1 (90 մ2) և թվով 2 վարձակալված (617.18մ2) առևտրային նշանակության հոդամասեր, ինչպես նաև՝
 - 4) ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող թվով 2 (273,46մ2) և սեփականության իրավունքով տնօրինվող թվով 1 (191.17մ2) արդյունաբերական նշանակության հողեր:
8. Ընդհանուր առմամբ 38 շենքեր և շինություններ (2005.94մ2) կքանդվեն, որոնցից 30-ը բնակելի չեն (1545մ2) և 8-ը բնակելի են (460.94մ2): Արդյունքում 3 ԱԵՏՏ-ներ կտեղափոխվեն իրենց բնակավայրերից: Լրացուցիչ 3 շինություններ կվերանորոգվեն, և 19 ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կտեղափոխվեն:
9. Ազդեցությանը կենթարկվեն 805 մ2 մշակաբույս, 3,568 պտղատու, ինչպես նաև 61 փայտանյութ տվող և 168 դեկորատիվ ծառեր: Ազդեցության կենթարկվեն ձեռնարկատիրական գործունեությունները, որոնցից 5-ը մշտական, 6-ը՝ ժամանակավոր: Ազդեցության ենթակա աշխատողների թիվը 10 է, որոնցից 3-ը ժամանակավոր են:
10. Մարդահամարը սահմանել է 115 ընտախքներ, ներառյալ՝ սեփականատերեր, վարձակալներ, հոդամասերը/շենքերն օգտագործողներ, իրավաբանական անձինք/գործարարներ և աշխատողներ, որոնց անդամների ընդհանուր թիվը կազմում է 597: Դրանցից 85 ԱԵՏՏ-ները ենթարկվում են զգալի ազդեցության՝ կորցնելով գյուղատնտեսական եկամտի 10% կամ ավելին: Դրանցից 3 ընտանիք ենթակա է զգալի ազդեցության՝ կորցնելով նաև բնակելի տարածք: Ազդեցությունների ամփոփագիր աղյուսակը մանրամասներ է ներկայացնում ազդեցությունների և ԱԵՏՏ-ների ու ԱԵԱ-ների համապատասխան համարների մասին:

Աղյուսակ 1. Ազդեցության ենթակա տնտեսությունների/անձանց ամփոփագիրը՝ ըստ ազդեցության տեսակի

Աղյուսակ 65. Ազդեցության ենթակա տնտեսությունների/անձանց ամփոփագիրը՝ ըստ ազդեցության տեսակի

Ազդեցության տեսակը	Ընդամենը			Մեկնաբանություններ
	Ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	

	Ազդեցությանը ենթակա միավոր	Առանց կրկն ահաշվարկի	Բացարձակ No	
1. Հողի ազդեցությունը՝ ըստ օրինական գբադեցման				
1) Սեփականատերեր	3	3	8	
2) Համայնքային	-			
ա. Ուղղակի օգտագործում	6	-	-	
բ. Վարձակալություն	2	2	5	
գ. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	102	99	533	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործող ԱԵՏՏ-ներից 2-ը հանդիսանում են նաև 1.1-ում ներկայացված այլ հողամասերի սեփականատերեր: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործող ԱԵՏՏ-ներից 1-ը հանդիսանում է 1.2(2)-ում ներկայացված մեկ այլ հողամասի վարձակալը:
3) ՀՀ կառավարություն	1	-	-	
Միջանկյալ ընդհանուր՝	114	101	540	
2. Ազդեցությունը շենքերի և շինությունների վրա				
1) Բնակելի շենքեր	8	3	18	Ազդեցության միավորը շենքերի/կառույցների թիվն է:
2) Ոչ բնակելի շինություն	30	16	72	
3) Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ	19	15	89	
4) Ցանկապատեր	996.24 լ.մ. 373.63 մ2	35	190	
Միջանկյալ ընդհանուր՝	-	47	248	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1-ում՝ բացի 5 ԱԵՏՏ-ներից, որոնք կորցնում են միայն շինություններ
3. Ազդեցությունը ծառերի/մշակաբույսերի վրա				
1) Պտղատու ծառեր	3, 568	90	485	Ազդեցության միավորը ծառերի քանակն է:
2) Փայտանյութ տվող ծառեր	61	21	93	
3) Դեկորատիվ ծառեր	168	20	102	
4) Մշակաբույսեր	805	11	11	Ազդեցության միավորը բերքի համար մ2 է
Միջանկյալ ընդհանուր՝	-	95	515	Բոլոր ԱԵՏՏ/ԱԵԱ-ները ներառված են 1-ում:
4. Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա				
1) Մշտական՝ հարկային հայտարարագրով	3	3	14	Միավորը ձեռնարկատիրական գործունեության քանակն է:
2) Մշտական առանց հարկային հայտարարագրի	2	2	12	
3) Ժամանակավոր՝ հարկային հայտարարագրով	3	3	9	

Ազդեցության տեսակը	Ընդամենը			Մեկնաբանություններ		
	Ազդեցություն	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ			
		Ազդեցությանը ենթակա միավոր	Առանց կրկնահաշվարկի			Բացարձակ No
4) Ժամանակավոր առանց հարկային հայտարարագրի	3	3	23			
Միջանկյալ ընդհանուր`	11	11	58	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1-ում` բացի 1 ԱԵՏՏ-ից, որը միայն կորցնում է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորությունը:		
5. Ազդեցությունն աշխատանքի վրա						
1) Մշտական աշխատանքի կորուստ	3	3	12	1 ԱԵՏՏ ներառված է 1-ում	Ազդեցության միավորն աշխատողների թիվն է	
2) Ժամանակավոր աշխատանքի կորուստ	7	7	28	1 ԱԵՏՏ ներառված է 1-ում		
Միջանկյալ ընդհանուր`	10	10	40	2 ԱԵՏՏ-ներ ներառված են 1-ում		
6. Խոցելիություն						
Խիստ/զգալի ազդեցությանը ենթակա տնային տնտեսություններ	-	85	468	Ներառված են 3 վերաբնակեցված ԱԵՏՏ-ներ		
Խոցելի ԱԵՏՏ	-	20	70			
Միջանկյալ ընդհանուր`	-	90	483	Բոլոր ԱԵՏՏ-ները ներառված են 1-ում` բացի 2 խոցելի ԱԵՏՏ-ներից (1 աշխատող և 1 ԱԵՏՏ, որոնք միայն շինություն են կորցնում:		
Ընդամենը (առանց կրկնահաշվարկի) 1+2(5ԱԵՏՏ) +3(1 ԱԵՏՏ) +4(8 ԱԵՏՏ)		115	597	Ընդամենը` ներառյալ 1` գումարած 5 ԱԵՏՏ-ներ կորցնում են միայն շինություններ` գումարած 1 անհատ ձեռնարկատեր կորցնում է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորությունը + աշխատողներ:		

13. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

11. ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է սեփականության իրավունքների պաշտպանությունը: Համաձայն վերջինի՝ սեփականության իրավունքը կարող է դադարեցվել գերակա հանրային շահի ճանաչման բացառիկ դեպքերում՝ հիմնվելով ընդունված ընթացակարգի վրա և նախնական համապատասխան փոխհատուցման դիմաց: Հողի օտարման և փոխհատուցման վերաբերյալ դրույթները կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքի (2001 թվ.) 102, 104 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (1998թ.) 218 հոդվածով և 2006 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով:
12. Սեփականության օտարումն իրականացվում է ՏԿՆ-ի և ԱԵԱ-ների կամ նրանց ներկայացուցիչների միջև համապատասխան պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով գույքի շուկայական արժեքը և կորուստները, ներառյալ՝ վնասները:
13. Համարժեք փոխհատուցում կտրվի սեփականատիրոջը՝ իր օտարվող գույքի: համարժեք փոխհատուցում է համարվում օտարված սեփականության շուկայական արժեքին 15%-ով ավել գումարի վճարումը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գնահատումը պետք է իրականացվի արտոնյալ Գնահատողի կողմից՝ 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն:
14. Հարկադիր տարաբնակեցման անվտանգության վերաբերյալ ԱԶԲ դրույթները Սոցիալական անվտանգության քաղաքականության շրջանակում հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.
 - 1) Խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:
 - 2) Փոխհատուցման/վերականգնման դրույթները կապահովեն ԱԵԱ-ների այն կենսամակարդակը, որն ունեցել են նախքան Ծրագրի իրականացումը:
 - 3) ԱԵԱ-ները պետք է լիարժեք տեղեկացված կամ խորհրդակցված լինեն ՀՕՏ փոխհատուցման տարբերակների մասին:
 - 4) Հարկավոր է հնարավորինս օժանդակել ԱԵԱ-ների սոցիալ-մշակութային հաստատություններին:
 - 5) Փոխհատուցումը կիրականացվի կանանց և տղամարդկանց հավասարազոր դիտարկմամբ:
 - 6) Սեփականության իրավունքի գրանցման փաստաթղթի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:
 - 7) Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, ինչպես օրինակ՝ տեղաբնակների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններն են, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններիս՝ իրենց վիճակը բարելավելու համար:
 - 8) ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես նախագծի մի մաս, իսկ ողջ արժեքի փոխհատուցումը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի և օգուտների շրջանակներում:
 - 9) Փոխհատուցումը և վերաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ հատկացվեն նախքան օտարումը և քանդումը:
15. ՀՀ օրենքների ու կանոնակարգերի և ԱԶԲ անվտանգության քաղաքականության հայտարարագրի միջև անհամապատասխանություններին անդրադարձել է Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը, որը կարևորում է փոխհատուցման և իրավասության խնդիրներն այս ծրագրի համար (*տե՛ս ներքոհիշյալ համառոտ նկարագրությունը “Փոխհատուցման իրավասություններ և իրավունքներ” վերնագրով*): ՀՀ օրենքների և ԱԶԲ-ի ԱԲՀ (2009թ.) հիման վրա այս ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր/ոչ կամավոր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները⁷.

- 1) Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը: Անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սահմանափակ ժամկետներով ՀՕՏԾ, և ԱԵԱ-ներն աջակցություն կստանան՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու այն կենսամակարդակը, որն ունեին նախքան Ծրագրի իրականացումը:
- 2) Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդակցությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը և ենթածրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև մոնիտորինգի միջոցառումներին մասնակցելու միջոցով:
- 3) Խոցելի և խիստ ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:
- 4) ԱԵԱ-ները, մասնավորապես՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները կամ ազատ տարածք ինքնակամ զավթած անձինք, կամ էլ այն ԱԵԱ, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալները առկա չեն (օր.՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործողներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվի այլ կորուստների դիմաց՝ հողից բացի:
- 5) Այն ԱԵԱ-ների գույքը, որը տիրապետվում և օգտագործվում է առանց գույքի նկատմամբ իրավունքները ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ՝ կօրինականացվեն և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողի կորստի դիմաց:
- 6) Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:
- 7) ՀՕՏԾ-ն կներկայացվի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով:
- 8) Փոխհատուցման, վերաբնակեցման օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն, նախքան կապալառուն ֆիզիկապես կստանա հողամասը կամ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:
- 9) ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմի մշակում:

14. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

16. Բոլոր ԱԵԱ-ները, ովքեր բնակվում, աշխատում, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, մշակում են հողամասը ազդեցության ենթակա տարածքում, իրավասու են ստանալ փոխհատուցում իրենց ազդեցության ենթարկված գույքի դիմաց՝ հիմնվելով փոփոխված և վերջնականացված նախագծի, հերթական թարմացված մարդահամարի և կորուստների մանրամասն չափագրման հետազոտության վրա: Նաև կապահովվեն վերականգնողական միջոցառումներ, որոնք բավարար օժանդակություն կլինեն ԱԵԱ-ներին՝ բարելավելու կամ առնվազն վերականգնելու մինչև ծրագիրն ունեցած իրենց կենսամակարդակը, եկամուտ վաստակելու կարողությունը և արտադրական մակարդակը: Կորցրած գույքի նկատմամբ օրինական իրավունքների բացակայությունը կամ բացասական ազդեցություն կրած զբաղվածության կարգավիճակը կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակը չպետք է խախտեն ԱԵԱ-ի իրավասությունը փոխհատուցման, վերականգնողական միջոցառումների կամ վերաբնակեցման նպատակների նկատմամբ:
17. Կասեցման ամսաթվից հետո ազդեցության ենթակա տարածքներում բնակություն հաստատող կամ տներ/շինություններ կառուցող/ընդլայնող ԱԵԱ-ները փոխհատուցում ստանալու իրավասություն չեն ունենա: Սույն Ծրագրի կասեցման օր է սահմանվում 2012 թվականի ապրիլի 13-ը: Նրանք նախապես ծանուցում կստանան, և կներկայացվի խնդրանք, որպեսզի ազատեն շենքերն ու ազդեցության ենթակա շինությունները նախքան ծրագրի իրականացումը:
18. Ստորև բերված Իրավունքների սխեման սահմանում է կորուստների տեսակները և փոխհատուցման իրավունքները, ինչպես նաև նախատեսում է նպաստներ տարբեր խմբերի, ինչպես օրինակ՝ խիստ ազդեցության ենթարկված, աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող, տարեցների, կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների և այլնի համար:

Աղյուսակ 66. Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Կիրառում	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը՝ անկախ ազդեցության աստիճանից	Սեփականատերեր	Կանխիկով փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է): Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի՝ հիմք ընդունելով հողամասի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողի օգտագործող	ԱԵԱ-ների կողմից տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները պետք է պետական գրանցման գործընթաց անցնեն և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով
		Վարձակալ (համայնքից/ պետությունից)	Վարձակալը պետք է ստանա սեփականության իրավունք և փոխհատուցվի որպես լիարժեք սեփականատեր շուկայական դրույքաչափով կամ կադաստրային արժեքներով (որն ավելի բարձր է) կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից՝ նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողամասի շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%-ին համարժեք

Կորստի տեսակը	Կիրառում	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			փոխհատուցում, հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողամասի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողամասի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողամասի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողամասի արժեքի 25%:
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողամասի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով
2. Ոչ գյուղատնտեսական հողերի կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց առևտրային նշանակության կամ բնակելի հողերը	Սեփականատեր	Դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեք+15%՝ շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով
		Վարձակալ (համայնքից/ պետությունից)	Այս ԱԵՏՏ-ները պետք է ստանան սեփականության իրավունք և փոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր շուկայական դրույքաչափով կամ կադաստրային արժեքներով (որն ավելի բարձր է) կամ նրանց պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից՝ նրանք պետք է ստանան ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքը (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում, հետևյալ մասնաբաժիններով՝ 1)մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա ԱԵՏՏ-ներ	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով
3. Բնակելի շինություններ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում փոխարինման ամբողջ արժեքի չափով՝ (ոչ պակաս, քան շուկայական արժեքը) գումարած 15%-ի չափով առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ների համաձայնությամբ)
		Վերաբնակեցվող վարձակալներ	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի 9 և 10 կետերում
4. Ոչ բնակելի շինություններ/գույքեր		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում՝ դրամական փոխհատուցում՝ փոխարինման ամբողջ արժեքի

Կորստի տեսակը	Կիրառում	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ գումարած 15% -ի չափով առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար (ԱԵԱ-ների համաձայնությամբ)
		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող հողամասի վրա կառուցված անօրինական շինություններ/շենքեր ունեցող ԱԵՏՏ-ներ	Շինության կորստի դեպքում կանխիկով փոխհատուցում՝ փոխարինման ամբողջ արժեքի չափով (ոչ պակաս, քան շուկայական արժեքը)՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքային ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող հողամասի վրա անօրինական կառույցներ/շենքեր ունեցող ԱԵՏՏ-ներ	Վերականգնման նպատակով փոխարինման ամբողջ արժեքի չափով՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքային ծախսերի և ապամոնտաժված շինարարական նյութերի՝ հանած կառույցի օրինականացման ծախսերը, ինչը չպետք է գերազանցի շուկայական արժեքի 20 %-ը
		Վերաբնակեցվող վարձակալներ	Վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպատակով նշված սույն աղյուսակի 9-րդ և 10-րդ կետերում
5. Ընդհանուր սեփականության կորուստ	Համայնքային/պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքի/պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած շինությունների վերակառուցում և նրանց գործառնականության վերականգնում
6. Մշակաբույսերի կորուստներ	Ազդեցության ենթարկված մշակաբույսերի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Մեկ տարվա բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար
7. Ծառերի կորուստ	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Շուկայական գներով հաշվարկված կանխիկով փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա
8. Ձեռն. գործ. կամ զբաղվածության կորուստ	Ձեռն. գործ. /զբաղվածության կորուստ	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ	Ձեռնարկատեր/գործարար. 1) մշտական ազդեցության դեպքում դրամական միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, 2) ժամանակավոր ազդեցության դեպքում՝ զուտ եկամտի դրամական փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի

Կորստի տեսակը	Կիրառում	ԱԵԱ-ների սահմանումը	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		կարգավիճակ չունեցող բնակիչները)	Ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ն կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ -Աշխատանքի մշտական կորստի դեպքում 1) վեց ամսվա կորցրած ամսական միջին աշխատավարձի չափով գումարի միանվագ տրամադրում: 2) Աշխատանքի ժամանակավոր կորստի դեպքում մինչև վեց ամիս ամսական միջին աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:
9. Օժանդակություն խիստ ազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավել տոկոսի կորուստ ունեցող կամ վերաբնակեցման ենթակա ԱԵՏՏ-ները	Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները և վերաբնակեցվող վարձակալները	1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողամասի մեկ լրացուցիչ տարվա բերքի չափով փոխհատուցում ԱԵԱ-ին գյուղատնտեսական եկամտի կորստի դիմաց կամ (վերաբնակեցվողների համար) 2) 6 ամսվա վերականգնման նպաստ վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին նվազագույն աշխատավարձի չափով:
10. Վերբնակեցման նպաստ	Տրանսպորտային/ տեղափոխումների ծախսեր	Վերաբնակեցված բոլոր ԱԵՏՏ-ները, ներառյալ՝ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
11 Օժանդակություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ) տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ-ներ	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում և Ծրագրի իրականացման հետ կապված աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնահերթություն տալ:
12. Ժամանակավոր ազդեցություններ		Բոլոր ԱԵՏՏ-ները	Պատշաճ վարձակալություն և վերականգման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար
13. ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ԵԲ-ն կանդորդառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը՝ ըստ վերոնշյալ պայմանների

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունը

- 1) Իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերերը կստանան դրամական փոխհատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն:
- 2) Վարձակալը կստանա կանխիկով փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է)՝ գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպ՝ 1) մինչև 1

- տարի՝ հողի արժեքի 5%-ը, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, 4) 25 տարի և ավել՝ հողամասի արժեքի 25%-ը:
- 3) Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի քան 10%-ը, ԱԵԱ-ները (սեփականատերերը, վարձակալները և գույքն ապօրինի օգտագործողները) պետք է խիստ ազդեցության համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողամասից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:

Ազդեցություններ բնակելի շինությունների վրա

- 4) Բնակելի շենքերի/շինությունների համար փոխհատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին փոխարինման արժեքով (ոչ պակաս, քան շուկայական արժեքն է) + 15% օժանդակություն՝ անկախ ԱԵԱ-ի գրանցման կարգավիճակից: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի և փրկված նյութերի:

Ազդեցություններ ոչ բնակելի շինությունների վրա

- 5) Օրինական գրանցում ունեցող ԱԵՏՏ-ներ-Շենքի կորստի համար դրամական փոխհատուցում + 15% օժանդակություն փոխարինման արժեքով (ոչ պակաս, քան շուկայական արժեքն է)՝ առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի և փրկված նյութերի:
- 6) Սեփականության իրավունքով տնօրինվող հողամասի վրա կառուցած ապօրինի շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝ վերը նշված ձևով առանց 15% օժանդակության:
- 7) Այլ անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա կառուցած ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով շենքեր/շինություններ տիրապետող և օգտագործող ԱԵՏՏ-ներ՝ փոխարինման արժեքին համարժեք վերականգնման օժանդակություն (առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի և փրկված նյութերի)՝ հանած անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը, մինչև շուկայական արժեքի առավելագույն 20%: Այս շենքերը/շինությունները գրանցելու կարիք չկա:

Մշակաբույսերի վրա ազդեցությունները

- 8) Մեկ տարվա մշակաբույսերի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին (ներառյալ ներդրումները) համապատասխան լռելյայն դրամական փոխհատուցում:

Ծառերի վրա ազդեցությունները

- 9) Շուկայական դրույքաչափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, բերքատվության (բերքատու և փայտանյութ տվող ծառերի դեպքում) և վերարտադրության արժեքի (ոչ բերքատու ծառերի/տնկիների դեպքում) վրա:

Մշտական և ժամանակավոր ազդեցություններ ձեռնարկատիրական գործունեության վրա

- 10) Մշտական ազդեցության դեպքում անհատ ձեռնարկատերերը, ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 տարվա գնահատված եկամտի չափով, ինչպես նաև այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողերի վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:
- 11) Ժամանակավոր ազդեցության դեպքում փոխհատուցումը անհատ ձեռնարկատերերին, ովքեր ներկայացրել են հարկային հայտարարագիր, փոխհատուցվում է նույն ընթացակարգով, սակայն հաշվարկվում է ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակի հիման վրա: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատվածի շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում՝ առավելագույնը մինչև 12 ամիս:
- 12) Մշտական ազդեցության դեպքում անհատ ձեռնարկատերերը, ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն 1 /մեկ/ տարվա պաշտոնական նվազագույն աշխատավարձի չափով և այն բոլոր ծախսերի համար, որոնք կատարվել են պետական գրանցում ստանալու և օտարման ենթակա հողերի վրա գործունեություն ծավալելու լիցենզիա ստանալու նպատակով:

13) Մշտական ազդեցության դեպքում անհատ ձեռնարկատերերը, ովքեր չեն ներկայացրել հարկային հայտարարագիր, կփոխհատուցվեն՝ հիմնվելով պաշտոնական նվազագույն աշխատավարձի վրա (45,000 ՀՀ դրամ), ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամիսների քանակի համաձայն: Կիրառելի ամիսների քանակը հաշվարկվում է ճանապարհի տվյալ հատվածի շինարարական աշխատանքների ժամանակացույցի հիման վրա և հաշվարկվել է վեց ամիս: Եթե իրական դադարն ավելի երկար է, ապա ԱԵԱ-ն կստանա լրացուցիչ փոխհատուցում՝ առավելագույնը մինչև 12 ամիս:

Ազդեցությունն աշխատողների վրա

14) Կազմակերպության կամ ձեռնարկատիրական գործունեության մշտական կամ ժամանակավոր դադարեցման դեպքում աշխատողը կստանա միանվագ փոխհատուցում վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական աշխատավարձի չափով:

Վերականգնման նպաստ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողերի համար

15) ԱԵԱ-ները կստանան հողամասերի փոխարինման արժեքի 25% (շուկայական արժեքը կամ կադաստրային գինը. որն ավելի բարձր լինի):

Վերաբնակեցման նպաստ

16) Ի լրումն ազդեցության ենթարկված գույքի համար ամբողջական փոխհատուցմանը՝ ԱԵԱ-ներն իրենց տրանսպորտային ծախսերի համար կանխիկով կստանան հատուկ վերաբնակեցման նպաստ՝ գումարած 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (45,000 ՀՀ դրամ) և, քանի որ վերաբնակեցման ենթակա անձինք ևս խիստ ազդեցության ենթարկվող ԱԵՏՏ-ներ են, նրանք կստանան կենսապահովման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով (270,000 ՀՀ դրամ):

Խիստ ազդեցությունների ենթարկված տնային տնտեսություններ

17) Այն ԱԵՏՏ-ները, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերի 10 և ավել տոկոսը, կստանան խիստ ազդեցության նպաստ՝ լրացուցիչ բերքի փոխհատուցման չափով, որը հավասար է 1 տարվա բերքի արժեքին:

18) Այն ԱԵՏՏ-ները, որոնք որևէ բերք չեն ունեցել գույքագրման ժամանակ, սակայն ունեցել են բերք նախորդ տարում, կփոխհատուցվեն 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով (270,000 ՀՀ դրամ):

Նպաստներ խոցելի ԱԵՏՏ-ների համար

19) ԱԵՏՏ-ներին, որոնք գրանցված են Ընտանեկան նպաստի համակարգում, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին կտրամադրվի 6 ամսվա նպաստ՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափով (195,000 ՀՀ դրամ):

15. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

19. Բողոքների լուծման այս պաշտոնական մեխանիզմում կներգրավվեն մի քանի կողմեր, ինչպես օրինակ՝ ԵԲ-ն, ԾԻԳ-ը և ԾԿԽ-ն:

Քայլ 1

20. Բողոքներն ընդունող մարմին է հանդիսանում ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետը (ՏՄ): ԱԵԱ-ն կստորագրի իր բողոքը, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ 1) բողոքի բնույթը, 2) բողոքարկողի տեղանքը և 3) ամբողջական հասցեն: Եթե ՏՄ-ն չի կարողանում լուծել հարցը կամ ԱԵԱ-ն բավարարված չէ բնակեցման առաջարկով, տվյալ դեպքը կփոխանցվի ԾԻԳ-ի մյուս մասնագետներին՝ վերանայման և հնարավոր լուծման համար: ԾԻԳ-ը պաշտոնապես կուղարկի իր արձագանքը դաշտային ՏՄ-ի՝ բողոքը ստանալուց հետո ամենաուշը 30 օրվա ընթացքում: Եթե բողոքն այս մակարդակում լուծում չի ստանում կամ ԱԵԱ-ն բավարարված չէ տրված լուծմամբ, բողոքը կներկայացվի Երևանի քաղաքապետարան (ԵՔ):

21. ԾԻԳ-ի հետ կապ հաստատելու մի քանի տարբերակներ կան.

- 1) ԾԻԳ-ի դաշտային գրասենյակը. Շաբաթը մեկ անգամ ԱԵԱ-ների հետ հանդիպումներ են կազմակերպվում ՀՕՏԻ պատրաստման օրվանից: Հասցեն՝ Ներքին Շենգավիթ, N 75 դպրոց, հինգշաբթի, 15:00-17:00
- 2) ԾԻԳ-ի հասցեն՝ Փ. Բյուզանդ. 1/3, 0010, Երևան, Հայաստանի Հանրապետություն
- 3) ԾԻԳ-ի էլ. հասցեն՝ verabnaketsum@yerevan.am

Քայլ 2

22. ԱԵԱ-ն պետք է բողոքը ներկայացնի ԾԻԳ-ից արձագանք ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Այդ հայցը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն այս փուլում: ԵԲ-ն պետք է բողոքներին արձագանքի 15 օրվա ընթացքում: Եթե Երևանի քաղաքապետարանի կողմից հարցը լուծում չի ստանում, ապա այն ենթակա կլինի լուծման Ծրագրի կառավարման խորհրդի կողմից (ԾԿԽ)՝ ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի թիվ 273-Ն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Քայլ 3

23. ԾԿԽ-ն պետք է նիստի ժամանակ քննարկի բողոքը: Նրա որոշումը պետք է համապատասխան լինի ՀՕՏԻ դրույթներին: Եթե բողոքարկողին չի բավարարում ԾԿԽ-ի որոշումը, ապա նա կարող է հայց ներկայացնել դատարան;
24. Անկախ բողոքների հաստատված մեխանիզմներից և ընթացակարգերից՝ ԱԵԱ-ներն իրավունք կունենան իրենց հայցերը ներկայացնելու դատարան բողոքարկման ընթացքի ցանկացած կետում:

16. ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- **Հնարավո՞ր է արդյոք, որ շինարարությունը սկսվի մինչև փոխհատուցումների տրամադրումը.**

Կապալառուն չի սկսելու շինարարություն Ծրագրի ՀՕՏ ազդեցությունների շրջանակում գտնվող որևէ հատվածում, մինչև՝ ա) ՀՕՏԾ ամբողջական իրականացումը, բ) համաձայնեցված փոխհատուցման տրամադրումը և վերականգնման օժանդակության ապահովումը և գ) ազդեցության ենթակա տարածքների ազատումը:

- **Եթե ես չունեմ բանկային հաշիվ, պարտավո՞ր եմ արդյոք փոխհատուցումը ստանալու համար վճարել բանկային հաշվի բացման համար**

Դուք կարող եք ստանալ փոխհատուցում անմիջապես ձեր անձնական բանկային հաշվեհամարի վրա: Այդ հաշվեհամարը պետք է նշված լինի հողի օտարման պայմանագրում: Եթե ԱԵԱ-ները չունեն բանկային հաշվեհամար, ապա փոխհատուցում ստանալու համար խորհուրդ է տրվում բացել հաշվեհամար: Բանկերն անվճար տրամադրում են ԱրՔա քարտային հաշվեհամար առանց գործառնական վճարների, որը տևում է 3 օր:

- **Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ինչպե՞ս նա կարող է ստանալ փոխհատուցումը.**

Եթե սեփականատերը գտնվում է Հայաստանից դուրս, ապա նա կարող է ուղարկել նոտարով վավերացված լիազորագիր այլ անձի անունով, օրինակ՝ իր հարազատի կամ մոտ ընկերոջ՝ հողի օտարման պայմանագիրը ստորագրելու և փոխհատուցումը ստանալու համար: Կարող եք խորհրդակցել նոտարների կամ ԵԿՆ ԾԻԳ-ի իրավաբանների հետ լիազորագրի ձևի վերաբերյալ: Եթե չկնքվի օտարման պայմանագիրը, ապա ձեր գույքը կօտարվի դատական կարգով, և փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվեհամարին: Դատարանը հետագայում այս փոխհատուցումը կվճարի այն անձին, ով կհաստատի իր իրավական իրավունքը՝ այն ստանալու համար:

- **Եթե սեփականատերը մահացած է, ինչպե՞ս է տրամադրվում փոխհատուցումը:**

Եթե սեփականատերն ունի ժառանգներ, ապա փոխհատուցումը կվճարվի նրանց համապատասխան ժառանգության փաստաթղթերը ձևակերպելուց հետո: Եթե ժառանգներ չկան, ապա փոխհատուցումը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Խնդրում ենք դիմել նոտարներին կամ ԾԻԳ-ի իրավաբաններին փաստաթղթերի ձևակերպման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

- **Ինչպե՞ս է վճարվելու փոխհատուցումը.**

Փոխհատուցման վճարումը ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում կարևորագույն փուլերից մեկն է: Նախատեսված քայլերն են՝

- 1) Տեղափոխման և վերաբնակեցման բյուջեի հատկացումը պետական գանձապետարանին ՖՆ-ի կողմից:

- 2) ԱԵԱ-ների համար լավագույն պայմաններ ապահովող առևտրային բանկերի ընտրությունը (աշխարհագրական տեղանքը և ցածր գործառնական վճարներ կամ առանց վճարի): ԱԵԱ-ները կարող են նաև գործել իրենց ունեցած բանկային հաշիվների միջոցով:
- 3) Գույքի օտարման պայմանագրի ստորագրում:
- 4) Փոխհատուցման գումարի փոխանցումը Ֆինանսների նախարարությունից:
- 5) Փոխհատուցման և նպաստների փոխանցումը ԱԵԱ-ների բանկային հաշիվներին:
- 6) Սեփականության տարածքի ազատումը օտարման պայմանագիրը ստորագրելուց հետո 14 օրվա ընթացքում:
- 7) Հողամասի/շինության սեփականատեր դառնալը Երևանի քաղաքապետարանի կողմից:

➤ **Ի՞նչ պետք է ես ունենամ հողի օտարման պայմանագիրը ստորագրելիս.**

Բոլոր անձինք, ովքեր ունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, պետք է ներկայանան նոտարական գրասենյակ:

Եթե սեփականատերը չի կարող ներկայանալ, ապա պետք է ներկայացվի լիազորագիր մեկ այլ սեփականատիրոջ անունով:

Պետք է ներկայացվեն ստորև նշված փաստաթղթերի բնօրինակները.

1. Անձնագիրը
2. Սեփականության վկայականը
3. Եթե բացի սեփականատիրոջից կան գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող այլ անձինք, ապա պետք է ներկայացվի սեփականության իրավունքի վկայականը (օրինակ՝ վարձակալության վկայականը):
4. Ամուսնության վկայական: Ամուսնու/կնոջ ներկայությունը պարտադիր է (եթե հնարավոր է) անշարժ գույքի օտարման պայմանագիրը ստորագրելու համար կամ պետք է ամուսնու/կնոջ կողմից տրամադրվի լիազորագիր*:

*Ամուսինները համարվում են համասեփականատերեր, եթե գույքը գնվել է նրանց գրանցված ամուսնության ընթացքում, նույնիսկ եթե սեփականությունը նրանցից մեկի անունով է:

➤ **Ի՞նչ կարող է լինել, եթե սեփականատերը հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց.**

Տվյալ դեպքում կկիրառվի հարկադիր օտարման գործընթաց: Ծրագրի համար հարկադիր օտարումներ կկիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ-ի և ԵԲ-ի միջև բոլոր բանակցությունները ծախողվեն: Քաղաքապետարանը չի զբաղեցնի անհրաժեշտ հողամասերը, մինչև.

- 1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դատական գործընթացի նախաձեռնումը,
- 2) դատարանի որոշման ընդունումը և ԱԵՏՏ/ԱԵԱ-ներին այդ մասին պատշաճ ծանուցումը,
- 3) փոխհատուցման / վերականգնման գումարների փոխանցումը դատարանի դեպոզիտային հաշվին:

Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի՝ դատական կարգով սեփականության օտարման գործընթացը հետևյալն է՝

- 4) Ձեռքբերողը/Օտարողը (ԵԲ-ն) պետք է ուղարկի սեփականության օտարման պայմանագրի նախագիծը (ներառյալ վերագնահատումը, եթե կա այդպիսին) գույքի սեփականատիրոջը և բոլոր այն անձանց, ովքեր օտարվող գույքի նկատմամբ ունեն գույքային իրավունք:
- 5) Եթե օտարման պայմանագրի նախագիծը ուղարկելուց հետո 3 ամսվա ընթացքում չի ստորագրվում օտարման պայմանագիրը, ապա Երևանի քաղաքապետարանը կարող է սկսել դատարան դիմելու գործընթացը՝ սեփականության իրավունքի փոխանցման համար:
- 6) Այդ ընթացակարգը սկսելու համար Երևանի քաղաքապետարանը պետք է դատարանի դեպոզիտային հաշվին փոխանցի փոխհատուցման հաշվարկված արժեքը, որ պետք է վճարվի ԱԵԱ-ին: Պետք է նաև այդ մասին ծանուցի սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ

գույքային իրավունքներ ունեցող անձանց: Եթե ԱԵԱ-ն ստանում է դեպոզիտ հանձնված գումարը, ապա սեփականության օտարման պայմանագիրը դատարանի կողմից համարվում է կնքված:

- 7) Եթե սեփականության օտարման պայմանագիրը չի ստորագրվում փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո 7 օրվա ընթացքում, ապա ԵԲ-ն պետք է մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայց ներկայացնի դատարան: Այս դեպքում դատարանի քննարկման առարկա կարող է լինել փոխհատուցման չափի հարցը:
- 8) ԵԲ-ն իրավունք ունի սեփականությունն օտարել միայն դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

➤ ***Որպեղի՞ց ես կարող եմ ձեռք բերել Հողի օտարման և տարաբնակեցման ամբողջ ծրագիրը.***

Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատճենը կարող եք վերցնել Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ից: Փաստաթղթի պատճենը տեղակայված կլինի նաև ԵԲ-ի և ԱԶԲ ինտերնետային կայքէջում: Համապատասխան կոնտակտային տվյալները տրված են սույն բրոշյուրի վերջում:

17. ԾԱԽՍԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐԸ

25. ՀՕՏԾ իրականացման համար հաշվարկված արժեքը կազմում է **780,142,063.25** ՀՀ դրամ, որը համարժեք է **1,902,785.52** ԱՄՆ դոլարին և մանարամասն ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 3-ում: ԵՔ-ն կապահովի հողի օտարման և տարաբնակեցման դիմաց փոխհատուցման գումարների վճարումը: Այն պետք է հաստատվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և ժամանակին հատկացվի ՀՕՏԾ իրականացման նպատակով:

Աղյուսակ 67. Ամփոփ բյուջեի ծախսերը

Միավորը	Ֆինանսավորման աղբյուրը	Ընդամենը/ՀՀ դրամ
1. Փոխհատուցման բյուջեն, ներառյալ՝ նպաստները		
Փոխհատուցում սեփականության իրավունքով տնօրինվող հողամասի համար (ներառյալ 15% օժանդակություն)	ԵՔ	21,088,906.37
Փոխհատուցում վարձակալներին	ԵՔ	2,680,828.61
Վերականգնման նպաստ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի համար	ԵՔ	60,200,148.77
Փոխհատուցում բնակելի շինությունների օտարման համար (ներառյալ 15% օժանդակություն)	ԱԶԲ վարկ	94,553,000.16
Փոխհատուցում ոչ բնակելի շինությունների համար	ԱԶԲ վարկ	242,679,458.18
Փոխհատուցում վերանորոգման ծախսերի համար	ԱԶԲ վարկ	304,275.00
Փոխհատուցում ցանկապատերի համար	ԱԶԲ վարկ	3,387,027.25
Փոխհատուցում բարելավումների համար	ԱԶԲ վարկ	20,169,520.00
Փոխհատուցում մշակաբույսերի համար	ԱԶԲ վարկ	507,140.18
Փոխհատուցում նորատունկերի համար	ԱԶԲ վարկ	1,000,500.00
Փոխհատուցում դեռևս ոչ բերքատու ծառերի համար	ԱԶԲ վարկ	1,524,053.00
Փոխհատուցում բերքատու ծառերի համար	ԱԶԲ վարկ	121,384,157.00
Փոխհատուցում փայտանյութ տվող ծառերի համար	ԱԶԲ վարկ	717,570.00
Փոխհատուցում դեկորատիվ ծառերի համար	ԱԶԲ վարկ	432,800.00
Փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության կորուստի համար	ԱԶԲ վարկ	12,146,490.94
Փոխհատուցում զբաղվածության կորուստի համար	ԱԶԲ վարկ	1,601,760.00
Նպաստ զգալի ազդեցության ենթարկված տնային տնտեսությունների համար	ԱԶԲ վարկ	26,050,694.55
Նպաստ սոցիալապես խոցելի անձանց համար	ԱԶԲ վարկ	5,400,000.00
Տրանսպորտային ծախսեր և կենսապահովման նպաստներ	ԱԶԲ վարկ	1,023,500.00
Ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքերի և շինությունների տրանսպորտային ծախսեր	ԱԶԲ վարկ	1,096,250.00
Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար տուրք (հողեր)	ԵՔ	72,000.00
Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար տուրք (շինություններ)	ՀՀ կառավարություն	524,000.00
ԱԱՀ՝	ՀՀ կառավարություն	616,287.65
Ենթաընդհանուր	-	619,160,367.66
2. Վարչական ծախսեր		
Ուղղակի վարչական ծախսեր (Ենթաընդհանուրի 5%-ը)	ԱԶԲ վարկ	30,958,018.38
Ընդամենը	-	650,118,386.04
Զնախատեսված ծախսեր 20%	ԱԶԲ վարկ	130,023,677.21
Ընդհանուր ՀՕՏ բյուջեն (ՀՀ դրամ)	-	780,142,063.25
Ընդհանուր ՀՕՏ բյուջեն (1 ԱՄՆ դոլար= 410 ՀՀ դրամ)	-	1,902,785.52
<i>Արդարժույթի փոխարժեքը 2013 թ. -ի հուլիսի 26-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ</i>		

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՄՉՀ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	3
1.1	Փաստացի չափագրում	3
1.2	Չափագրման ընթացակարգ	3
1.2.1	Հողամասի չափագրում	3
1.2.2	Կառույցների չափագրում	4
1.2.3	Գույքի քանակական և որակական հաշվառում	4
1.3	Չափագրման արդյունքները	4
2.	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ ՏԵՂԱԶՆՆՈՒՄ	4
2.1	Անշարժ գույքի տեղազննում	4
2.2	Մշակաբույսեր և ծառեր	5
2.2.1	Պտղատու ծառեր ու թփատեսակներ	5
2.2.2	Դեկորատիվ ծառեր, փայտանյութ տվող ծառեր և թփատեսակներ	5
2.2.3	Մշակաբույսեր	5
3.	ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ	5
3.1	Գործընթացը կարգավորող փաստաթղթերը	5
3.2	Գնահատման շրջանակը	6
4.	ՀՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
4.1	Ընդհանուր մոտեցում	6
4.2	Հողամասի փոխարինման արժեքի գնահատում	7
4.3	Գնահատման ընթացակարգը	7
4.4	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի համար նպաստների սահմանման մեթոդաբանություն	10
5.	ՇԵՆՔԻ/ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	12
5.1	Ընդհանուր մոտեցում	12
5.2	Շենքերի/շինությունների փոխարինման արժեքի որոշում	12
6.	ԾԱՌԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	16

6.1	Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի գնահատում	16
6.1.1	Տնկիների գնահատման ընթացք	16
6.1.2.	Ոչ պտղատու ծառերի գնահատման ընթացք	16
6.1.3	Պտղատու ծառերի գնահատման մեթոդաբանություն	17
6.1.4	Փայտանյութ տվող ծառերի գնահատման մեթոդաբանություն	18
6.1.5	Մշակաբույսերի/բերքի գնահատման մեթոդաբանություն	19
7.	ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ	20
8.	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	20
9.	ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	20
9.1	Մարդահամար	21
9.2	Սոցիալ-տնտեսական հետազոտություն	21
9.2.1	Որակական հետազոտության մեթոդաբանություն	21
9.2.2	Քանակական հետազոտության մեթոդաբանություն	21
10.	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ	22

1. ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՄԶՀ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1 Փաստացի չափագրում

Չափագրումն իրականացվել է՝ Ասիական Չարգացման Բանկի (ԱԶԲ) քաղաքականության և ՀՀ ԿԱ առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 283-Ն հրամանի հավելված 1-ի (հրահանգ անշարժ գույքի չափագրման (հաշվառման) վերաբերյալ, այսուհետ՝ Հրահանգ) պահանջների համաձայն:

ԱԶԲ քաղաքականության պահանջների համաձայն, հողամասի վիճակի գնահատումը հիմնվել էր չափագրման պահին ԱԵՏՏ-ի կողմից օգտագործվող գույքի փաստացի չափսերի վրա: Եթե ստացված չափագրման տվյալները համապատասխանել են ԱԳԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայականի պարամետրերին (հաշվի առնելով ԱԳԿՊԿ-ի կողմից սահմանված շեղումների թույլատրելի չափը), ապա կազմվել են գույքային հատակագծեր ԱԳԿՊԿ ներկայացնելու համար:

Եթե ստացված չափագրման տվյալները չեն համապատասխանել ԱԳԿՊԿ-ի կողմից տրված սեփականության վկայականի պարամետրերին (հաշվի առնելով շեղումների թույլատրելի չափը), ապա տվյալ գույքի սեփականատերը տեղեկացվել է այդ մասին: Վերջինիս ցանկության դեպքում նոր հատակագիծ է կազմվել ԱԳԿՊԿ ներկայացնելու համար: Սեփականության վկայականում համապատասխան ուղղումից հետո, գույքի օտարման պայմանագիր կնքելուց առաջ, անշարժ գույքի վերաձևակերպման համար վերջնական հատակագիծ է կազմվել՝ ԱԳԿՊԿ ներկայացնելու նպատակով:

1.2 Չափագրման ընթացակարգը

Չափագրումներն իրականացվել են ԱԵԱ-ների ներկայությամբ: ԱԵԱ-ները չափագրման օրվա և ժամի մասին տեղեկացվել են հեռախոսով՝ տեղանքային այցելությունից մեկ օր առաջ: Սույն ընթացակարգն ապահովել է ԱԵԱ-ների կողմից չափագրման գործընթացի վերահսկումը:

1.2.1 Հողամասի չափագրում

Հողամասերի չափագրման համար կիրառվել են հետևյալ քայլերը՝

1. Հողամասի սահմանները գծագրվել են,
2. Հողամասի բոլոր հատվածները՝ ներառյալ շրջադարձային կետերը, կորորդինատները, սահմանագծերի բեկման կետերը նշվել, համարակալվել և արձանագրվել են,
3. Սեփականատերերի անունները, ազգանունները (և սեփականության իրավունքը, եթե հայտնի են) արձանագրվել են,
4. Եթե տարածքը ցանկապատված էր, չափագրման համար ցանկապատի սահմանագիծն է հաշվի առնվել: Ցանկապատի բացակայության պարագայում հողամասի սահմանները հաստատվել են հողամասն օգտագործող ԱԵԱ-ների կողմից:

1.2.2 Ծինությունների չափագրում

Ծինությունները չափագրվել են հետևյալ քայլերով՝

" Շինությունները չափագրվել են թե՛ արտաքին (շինության դրսից), թե՛ ներքին (շինության ներսից) կողմերից: Արտաքինից չափագրված շինության ուղվապատկերը գծագրվել է՝ ըստ հողամասում գտնվելու տեղադրության: Այնուհետև շինությունների ներսում գտնվող տարածքներն են չափագրվել: Ներքին չափագրումները կատարվել են շինությունների հատակից 1,20-1,30 մետր բարձրությամբ:

" Չափագրվել են յուրաքանչյուր տարածքի երկարությունը, լայնությունը, ներքին բարձրությունը, ինչպես նաև կրող պատերի և միջնապատերի հաստությունները: Նշագրվել է դռների և պատուհանների տեղադրությունը: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները, ինչպես նաև բազմաբնակարան շենքում գտնվող ոչ բնակելի տարածքները, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտները չափագրվել են միայն ներքին չափերով: Չափագրվել են նաև պարիսպները և հողամասի վրա գտնվող բարելավումները:

1.2.3 Գույքի քանակական և որակական հաշվառում

Հողամասերը և դրանց վրա կառուցված շինությունները նկարագրվել են քանակական և որակական տեսանկյունից՝

ա. Քանակական տվյալները ներառել են երկարությունը, լայնությունը, բարձրությունը, մակերեսները և ծավալները:

բ. Որակական տվյալները ներառել են հողամասի գործառնական նշանակությունը (հողամասեր) և հողամասի փաստացի օգտագործումը: Արձանագրվել են շինությունների փաստացի օգտագործումը, կառուցման տարեթիվը, արտաքին հարդարումը, ավարտվածության աստիճանը, շինանյութի տեսակները (պատեր, միջհարկային ծածկ, տանիք) և այլ բնույթի տվյալներ:

1.3 Չափագրման արդյունքները

Հիմք ընդունելով չափագրումների արդյունքում ստացված տվյալները՝ կազմվել են նախնական հատակագծեր, որտեղ պայմանական նշաններով առանձնացվել են ընդհանուր գույքը, ազդեցության ենթարկված մասերը, ինչպես նաև գույքի իրավական կարգավիճակը (սեփականություն, վարձակալություն): Սեփականության վկայական ունեցող գույքերի համար, ի լրումն նախնական հատակագծի, կազմվել են նաև չափագրված հողամասերի և շինությունների հատակագծեր՝ համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ 284-Ն հրամանով հաստատված հատակագծերի օրինակելի ձևերի և հատակագծերին ներկայացվող պարտադիր պահանջներին:

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ, ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԾԱՌԵՐԻ ՏԵՂԱԶՆՆՈՒՄ

2.1 Անշարժ գույքի տեղազննում

Գնահատողի կողմից հասարակ տեսողական զննությամբ և ԱԵԱ-ներին հարցման ենթարկելու միջոցով լրացվել են հողամասերի և շինությունների հիմնական բնութագրիչները արտացոլող տեղազննման ձևաթերթերը: Հետևյալ նկարագրություններն են ընդգրկվել՝

1. Գույքի ընդհանուր բնութագիրը

" ենթակառուցվածքների առկայությունը, այդ թվում՝ խմելու ջրի, էլեկտրական հոսանքի, կոյուղու, հեռախոսագծերի, բնական գազի և այլնի հասանելիությունը,

- " հիմնական ծառայություններին հասանելիության հնարավորությունը, այդ թվում՝ մետրոյից, առողջապահական հաստատություններից և առևտրային սրահներից հեռավորությունը,
- " ճանապարհի առկայությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի գնահատումը:

2. Հողամասի բնութագիրը

- " նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը,
- " իրավունքի տեսակը, օր.՝ սեփականություն հանդիսացող, վարձակալված կամ անօրինական կերպով օգտագործվող,
- " լայնությունը, երկարությունը և երկրաչափական կառուվածքը,
- " տրանսպորտի առկայությունը և երկաթգծին հասանելիությունը,
- " դիրքը, տեղադրությունը, քարքարոտությունը և այլն,
- " բարելավումների առկայությունը և նկարագրությունը:

3. Շինությունների և բարելավումների նկարագրությունը

- " շինության անվանումը, նպատակային, գործառնական և փաստացի նշանակությունը,
- " ենթակառուցվածքների առկայությունը,
- " հիմքի, միջհարկային ծածկերի, արտաքին պատերի համար օգտագործված նյութերը,
- " դռների և պատուհանների առկայությունը
- " տեղափոխման ենթակա կահույքի և կենցաղային իրերի առկայությունը և այլն:

Այս փուլում իրականացվում էր գույքերի ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ կամ անշարժ լինելու կարգավիճակի որակումը: Անշարժ են որակվել այն գույքերը, որոնք անհնար է հողամասից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու: Մնացած գույքերը համարվել են ապամոնտաժման ենթակա տարբեր կոնստրուկցիաներ ունեցող շենքեր և շինություններ:

Այս փուլում իրականացվել է հողամասերի, ինչպես նաև արտաքին և ներքին շինությունների ֆոտոլուսանկարումը: Բոլոր տեղագնման ձևաթերթերը լրացվել և ստորագրվել են ԱԵԱ-ների (կամ օրինական հիմքերով լիազորված ներկայացուցիչների) և գնահատողի կողմից:

2.2 Մշակաբույսեր և ծառեր

Որակավորում և փորձառություն ունեցող գյուղատնտեսը հաշվառել է առկա ծառերը և մշակաբույսերը հողամասի ազդեցության ենթակա հողամասերում: Հաշվառվել են բոլոր մշակաբույսերը, թփերը, պտղատու, դեկորատիվ, ինչպես նաև փայտանյութ տվող ծառերը:

2.2.1 Պտղատու ծառեր ու թփատեսակներ

Պտղատու ծառերի տարիքը որոշվում է փորձառու գյուղատնտեսի փորձագիտական կարծիքի հիման վրա, որից հետո ծառերը դասակարգվում են՝ ըստ հետևյալ խմբերի.

- ա. տնկիներ,
- բ. ոչ պտղատու ծառեր,
- գ. պտղատու/կրող ծառեր:

2.2.2 Դեկորատիվ ծառեր, փայտանյութ տվող ծառեր և թփատեսակներ

Գյուղատնտեսը չափել է փայտանյութ տվող ծառերի բնի հաստությունը, ինչպես նաև դեկորատիվ ծառերի, գեղազարդ թփերի ու ծառերի, պտղատու թփերի բարձրությունը:

2.2.3 Մշակաբույսեր

Քանի որ մանրամասն չափագրման հետազոտությունները ձեռնարկվել են 2012 թ. դեկտեմբերից 2013 թ. մարտ ամիսներին, միամյա մշակաբույսերի իդենտիֆիկացումը խնդրահարույց է դառնում: Որոշ դեպքերում գյուղատնտեսը, ըստ մնացած արմատների, կարողանում էր ճանաչել նախորդ տարի ցանված մշակաբույսի տեսակը: Նման դեպքերում չափվում էր մշակաբույսերի ցանքի մակերեսը: Այլ դեպքերում, երբ մշակաբույսի նախկին իդենտիֆիկացումը հաստատապես վճռելի չէր, օգտագործվում էր տվյալ մշակաբույսի վերաբերյալ նախնական ՀՕՏ-ում ներկայացված տեղեկատվությունը:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Չափագրման, տեղագնման, մշակաբույսերի և ծառերի հաշվառման, ֆոտոլուսանկարման աշխատանքներից առաջ իրականացվել են փոխհատուցվող գույքի գնահատման աշխատանքները:

3.1 Գործընթացը կարգավորող փաստաթղթերը

Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.

ա. Անվտանգության քաղաքականության հաշվետվություն/հայտարարագիր, Ասիական զարգացման բանկ, 2009

բ. ՀՀ կառավարության 07.03.2012թ. թիվ 273-Ն 'Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի՝ հողամասի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման առանձին տեսակների հաշվարկման կարգը հաստատելու մասին՝ որոշում (ՀՈՏՇ)

գ. 2005 թվականի հոկտեմբերի 1-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենք (ՀՕ-189-Ն)

դ. Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ

ե. ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008 թվ. «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» թիվ 09-Ն հրաման

3.2 Գնահատման շրջանակը

Ծրագրի շրջանակներում գնահատվել են՝

ա. Ազդեցության ենթակա սեփականության իրավունքով տնօրինվող բոլոր հողամասերը, ինչպես նաև այն համայնքային հողամասերը, որոնք վարձակալական հիմունքներով կամ ինքնակամ օգտագործվում են անհատների կողմից: Չօգտագործվող համայնքային հողամասերը գնահատվել են միայն Արգավանդ և Գետափնյա համայնքներում: Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող շենքը, շինությունները, պարիսպները,

բ. Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող բարելավումները,

գ. Ազդեցության ենթակա հողամասի օտարվող և ընդհանուր մասի վրա գտնվող մշակաբույսերը, պտղատու, դեկորատիվ և գեղազարդ ծառերն ու թփատեսակները:

4. ՀՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Ընդհանուր մոտեցում

ՀՕՏՀ-ի համաձայն՝ Ազդեցության ենթակա հողի դիմաց փոխհատուցում կստանան հողամասի սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման, և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողները: Յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փոխհատուցման հաշվարկի հատուկ մոտեցում: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև՝

Գծապատկեր 1

Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցում

Սեփականատեր	Հողօգտագործողներ, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման	Ապօրինի հողօգտագործող
• փոխարինման արժեք+ 15%	• փոխարինման արժեք+ 15% (օրինական կարգավիճակ ստանալուց հետո)	• փոխարինման արժեքի 25%
Վարձակալներ		
Վարձակալության մնացած տարիների համար		
- մինչև 1 տարի - (փոխարինման արժեք+15%) *0.05 - մինչև 15 տարի (փոխարինման արժեք+15%) *0.14 - մինչև 25 տարի (փոխարինման արժեք+15%) *0.20 25 և ավելի տարի (փոխարինման արժեք+15%) *0.25		

4.2 Հողի փոխարինման արժեքի գնահատում

Հողի գնահատումն իրականացվել է փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական սակագները: Շուկայական սակագները գնահատվել են համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանված է կառավարության կանոնակարգերով: Սույն մեթոդի հիման վրա որոշվել է հողի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայություն և նույն կիրառման նպատակ/հատկանիշներ ունեցող վերջերս վաճառված առնվազն երեք համեմատման ենթակա հողամասերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատիչներ առկա չէին, մեկ կամ ավելի համեմատման ենթակա հողամասեր են գծագրվել այլ վայրից:

Գնահատվող հողամասի և համեմատման ենթակա հողամասի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով համեմատման ենթակա հողամասերի միջին շուկայական վաճառքները ճշգրտվել են՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

4.3 Գնահատման ընթացակարգը

Հողի գնահատման համեմատական մեթոդը կիրառվել է հետևյալ կերպով.

- 1) Համանման անշարժ գույքի շուկաները վերլուծվել են:
- 2) Առնվազն երեք համեմատության միավորներ են սահմանվել:
- 3) Տարբերակվել են համեմատության անհրաժեշտ տարրերը:
- 4) Համեմատության միավորների արժեքը ճշգրտվել է՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների:
- 5) Ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ:
- 6) Սահմանվել է հողի գինը:

Քայլ 1

Համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով Գնահատողը օգտվել է հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից ձեռքբերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա Գնահատողը օգտագործել է ամենահամադրելի / համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

Քայլ 2

Սկզբունքորեն համեմատիչ արժեքների աղբյուր են հանդիսացել կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողամասի համար արձանագրությունները չեն ներառել օգտագործելի համեմատիչներ, ապա օգտագործվել են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված գույքի ցանկի շուկայական գները կամ հողամասի վաճառքի առաջարկները (նորությունների թերթերում ու կայքերում)՝ համեմատիչների ձևավորման նպատակով: Յուրաքանչյուր գնահատված հողամաս համադրվել է առնվազն (3) երեք համեմատման ենթակա հողամասերով:

Քայլ 3

Համեմատման հողամասերի իդենտիֆիկացումից հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի են առնվել՝ գնահատված հողամասերի և համեմատման հողամասերի

հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

Վաճառքի պայման և շուկայի վիճակ

Սրանք շուկայական գնի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել համեմատվող հողամասերի շուկայական վաճառքների և գնահատման ժամանակահատվածի միջև: Գնահատողը նաև հաշվի է առել գույքի՝ տարածամկետ վճարման պայմանով գնվելու հանգամանքը: Քանի որ անշարժ գույքի իրականացված վաճառքների շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է թարմ և ճշգրտված տեղեկատվության հիման վրա, և տարածամկետ վճարման պայմանով դեպքեր չեն եղել, կիրառվել է 1,0 գործակիցը:

Նպատակային և գործառնական նշանակությունը

Այս տարրերը ցույց են տալիս, թե ինչպես կարելի է օգտագործել տվյալ հողամաս՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, գյուղատնտեսական նպատակով և այլն: Գնահատողն ուղղում չի կատարել, քանի որ համաձայն ԱԶԲ քաղաքականության, գնահատումն իրականացվում է՝ փաստացի նշանակությունից ելնելով:

Փաստացի նշանակություն

Սա ցույց է տալիս, թե ինչպես է օգտագործվում տվյալ հողամասն իրականում՝ անկախ դրա կադաստրային, նպատակային և գործառնական նշանակությունից: Գնահատողն ուղղում չի կատարել այն դեպքերում, երբ օրինակ գնահատվող հողամասի փաստացի նշանակությունն այգի էր, սակայն հողամասը պաշտոնապես դասակարգվել էր որպես բնակելի կառուցապատում, քանի որ գնահատողը հողամասերը դիտարկել է որևէ բարելավումներից ազատ, ինչպես նաև ծառերից ու մշակաբույսերից: Հողամասի փաստացի նշանակությունն այգի որակելով՝ Գնահատողը ցանկանում է նշել, որ տվյալ հողամասի վրա ծառեր են առկա:

Ծառերի և մշակաբույսերի գնահատումն իրականացվում է առանձին և գումարվում է փոխհատուցման արժեքին: Դա հնարավորություն է ընձեռում խուսափել ծառերի կրկնահաշվարկից՝ ԱԵԱ-ների համար ստեղծում է սոցիալապես արդար և հավասար պայմաններ: Այն դեպքում, երբ հողամասը գնահատման ընթացքում համեմատվել է փաստացի այգիով հողամասերի հետ, վերջինիս գինը նաև ներառել է ծառերի արժեքը՝ որպես հողամասի բարելավում:

Տեղադրություն և դիրք

Գնահատվող և համեմատման հողամասերը ներկայացվել են ըստ թաղամասերի: Գլխավոր ճանապարհից հեռավորությունը նույնպես ցույց է տրվել: Տվյալ դեպքում կիրառվել են 20 % քայլով նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

Տրանսպորտի հասանելիություն

Սույն գործակիցը բնութագրել է գնահատվող և համեմատման հողամասերի հեռավորությունը տրանսպորտային գլխավոր հանգույցներից: Պարզվել է, որ տրանսպորտի հասանելիությունը նույնն էր գնահատվող և համեմատման հողամասերի համար, և որևէ գործակից չի կիրառվել:

Ընդհանուր մակերեսը

Ազդեցության ենթակա հողամասերի ընդհանուր մակերեսն ազդեցություն չի ունեցել հողամասի գնի վրա, քանի որ այն նման էր համեմատման հողամասերի մակերեսներին:

Ճակատային մաս

Սա ցույց է տալիս, թե տվյալ հողամասը գլխավոր ճանապարհի վրա քանի մետր ճակատային մաս ունի: Քանի որ ճակատային մասի մակերեսները համապատասխանել են շուկայում ձևավորված չափանիշներին, ուղղիչ գործակից չի կիրառվել:

Ենթակառուցվածքների առկայությունը

Բնութագրում է գնահատված հողամասի հեռավորությունը գլխավոր ենթակառուցվածքներից (ճանապարհ, ոռոգման և խմելու ջրատար, էլեկտրական հոսանքի գիծ, գազատար, կոյուղի): Եթե ենթակառուցվածքները մոտ էին հողամասին կամ առկա էին հողամասում, ապա նշվել է, որ տվյալ հողամասին ենթակառուցվածքները հասանելի են կամ հողամասը համարված է տվյալ ենթակառուցվածքով:

Եթե հողամասը գտնվում էր այնպիսի թաղամասում, որտեղ բացակայում էր տվյալ ենթակառուցվածքը, և դրա առկայությունը քաղաքաշինական խնդիր է, ապա նշվում էր, որ հողամասը չունի տվյալ ենթակառուցվածքը: Առաջին համեմատման հողամասը ենթակառուցվածքների առկայության տեսակետից ավելի նպաստավոր դիրք ուներ, և Գնահատողը 15 տոկոսի ուղղում է կիրառել:

Թեքություն

Շուկայի համակարգված դիտարկումները ցույց են տալիս, որ թեքություն ունեցող և չունեցող հողամասերը տարբեր գներ ունեն: Քանի որ գնահատվող և համեմատման հողամասերը հարթ էին, տվյալ տարրի շտկման անհրաժեշտությունը չի եղել:

Գույքային իրավունքներ

Կախված նրանից՝ տվյալ հողամասի նկատմամբ իրավունքը սեփականություն է թե վարձակալություն, կամ ընդհանրապես տվյալ հողօգտագործողը որևէ իրավունք չունի տվյալ գույքի նկատմամբ (<< օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում), հողամասի գները տարբերվել են: Գնահատողն իրավունքների ճշգրտման գործակից չի կիրառել, քանի որ համաձայն 273-Ն որոշման (<OSԾ>) հողամասերը գնահատվել են որպես սեփականություն, այնուհետև, կախված գույքի նկատմամբ առկա իրավունքի տեսակից, որոշվել է փոխհատուցման չափը:

Բարելավումներ

Սա ցույց է տալիս, թե ինչ բարելավումներ ունի տվյալ հողամասը՝ բացի հիմնական շինություններից և ծառերից, օրինակ՝ մետաղական, փայտյա կամ քարե պարիսպ, բետոնապատված կամ ասֆալտապատ տարածք և այլն: Սակայն այս տարրով Գնահատողը ուղղում չի կատարել, քանի որ տվյալ բարելավումների արժեքն առանձին է հաշվարկվում և գումարվում է փոխհատուցման արժեքին:

Քայլ 4

Հողամասերի շուկայական գնի միավորը ճշգրտվել է՝ ըստ թվարկված համեմատության տարրերի: Ճշգրտման տրամաբանությունը ներկայացված է ստորև աղյուսակի միջոցով՝

Աղյուսակ 68. Ընդհանուր հողամասի 1 քմ արժեքի հաշվարկը

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ օբյեկտ	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ օբյեկտ 2	Համանման անշարժ գույք 3
Մեկ քմ գին (<< դրամ)		30,064	13,333	12,933
Սակարկում (Վաճառքի պայման)		Վաճառք	Վաճառք	Վաճառք
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը << ողամում		0	0	0
Ժամանակ (Շուկայի միջանկ)	02.2013	11.2012	02.2012	02.2012
Ճշգրտման գործակից		1.00	1.00	1.00
Ճշգրտումը << ողամում		0	0	0

Նպատակահիմն նշանակություն	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր	Բնակավայր
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Գործառնական նշանակություն	Այլ	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Փաստագի նշանակություն	Առահ	Բնակ. կառ.	Բնակ. կառ.	Բնակ. կառ.
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Տեղադրություն	Լավ	Գերազանց	Գերազանց	Գերազանց
Ճշգրտման աղծակնից		0.80	1.20	1.20
Ճշգրտում ՀՀ ռոամով		-6.013	2.667	2.587
Դիրք	Գերազանց	Գերազանց	Լավ	Լավ
Ճշգրտման աղծակնից		1.00	1.20	1.20
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	2.667	2.587
Տրանսպորտի հասանելիություն	Լավ	Լավ	Լավ	Լավ
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00

Համեմատության տարրեր	Գնահատվող անշարժ	Համանման անշարժ գույք 1	Համանման անշարժ գույք 2	Համանման անշարժ գույք 3
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Ֆիզիկական մեղքագրեր՝ այդ թվում				
Ընդհանուր մակերես (քմ)	400.0	266.10	300.0	300.0
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Ճակատային մաս (մ)	9.65	14.50	12.0	12.0
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Ենթակառուցվածքների առկայություն	Բավարար	Լավ	Բավարար	Բավարար
Ճշգրտման աղծակնից		0.85	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		-4,510	0	0
Թեքություն	Հարթ	Հարթ	Հարթ	Հարթ
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Գույքային իրավունքներ	Չգրանցված	Սեփականույթ	Սեփականույթ	Սեփականույթ
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Բարելավումներ	Առկա չեն	Առկա չեն	Առկա չեն	Առկա չեն
Ճշգրտման աղծակնից		1.00	1.00	1.00
Ճշգրտում ՀՀ ռոամով		0	0	0
Ընդհանուր ճշգրտում (ՀՀ դրամ)		-10,522	5,333	5,173
Ճշգրտված մեկ քմ գին (ՀՀ դրամ)		19,542	18,666	18,106
Կշռային գործակից		0.33	0.34	0.33
Գնահատվող անշարժ գույքի մեկ միավոր արժեք	18,770			

Քայլ 5

Անշարժ գույքի արժեքի վերաբերյալ վերջնական որոշումը սահմանվել է վաճառքների համեմատության միջոցով՝ վերլուծելով անշարժ գույքի համեմատման ենթակա վաճառքների ճշգրտված գները: Գնահատողը երեք համանման հողամասերի ճշգրտված գները միջինացրել է, քանզի գտնում էր, որ բոլոր երեք համանման հողամասերը գնահատվող հողամասին նմանություն ունեն, և տվյալների ստացման աղբյուրներն արժանահավատ են:

Քայլ 6

Այս մեթոդով ստացված շուկայական արժեքը համեմատվել է կադաստրային արժեքի հետ: Այն դեպքերում, երբ համեմատական մեթոդով ստացված շուկայական արժեքն ավելի բարձր էր, քան հողամասի կադաստրային արժեքը՝ հիմք են ընդունվել համեմատական մեթոդով ստացված գները:

Քայլ 7

Այնուհետև հաշվարկվել է հողամասի շուկայական արժեքը հետևյալ բանաձևով՝

$$Հ_{\Sigma U} = Հ_U \times \mathbf{U}_{\Sigma U}$$

որտեղ՝

$\mathbf{H}_{\Sigma U}$ –ն հողամասի շուկայական արժեքն է,

$\mathbf{H}_U$ -ն հողամասի մակերեսն է,

$\mathbf{U}_{\Sigma U}$ -ն համանման հողամասերի 1 քմ շուկայական ճշգրտված արժեքն է:

4.4 ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի համար նպաստների սահմանման մեթոդաբանություն

1. Ընդունված ՀՕՏԾ-ի համաձայն՝ Ք - ն պարտավորվում է բոլոր ԱԵԱ-ներին վերականգնողական նպաստներ տալ Երևան համայնքում ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող ագլեցության ենթակա հողամասերի համար: Սույն նպաստը նպատակամղված է աջակցելու ԱԵԱ-ներին ապրուստի վերականգնման հարցում:
2. ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող ագլեցության ենթակա հողամասեր ունեցող անձանց ցուցակ է կազմվել տեղանքային աշխատանքների /չափագրման և հետազոտության/ ընթացքում: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործման առումով, ՀՕՏԾ 1-ի հիմքերով ընդունվել է, որ նման ԱԵԱ-ներն անձինք են, ովքեր չափագրման հետազոտությունների ընթացքում ներկայացել են որպես ընթացիկ օգտագործողներ այն հողամասի, որի նկատմամբ նրանք օրինական սեփականության իրավունք չունեն, և այդ փաստը հաստատվում է հարևանների կողմից: Նման ԱԵԱ-ների ցանկը շարունակաբար թարմացվել է և վերջնական տեսքի է բերվել մի քանի այցելություններից հետո: Չափագրումների հիման վրա ստեղծված քարտեզները և ցուցակներն ուսումնասիրվել են տեղական համայնքային իշխանությունների կողմից՝ տեղեկատվության ճշտման և հստակեցման, ինչպես նաև իրական հողօգտագործողներին հայտնաբերելու նպատակով:
3. Ճշտումները հիմնվել են հավաստագրված ձևերի վրա, որոնք տրվել են ԱԵԱ-ներին հարևան օգտագործողների և մոտակայքում ապրող վկաների ստորագրությունների հավաքագրման նպատակով: Յուրաքանչյուր ԱԵԱ-ից պահանջվում էր հինգ վկաների ստորագրություններ հավաքել, որոնք հաստատում էին, որ նա է հողամասի՝ ագլեցության ենթակա մասի օգտագործողը: Ստորագրված ձևերի ճշտությունը հաստատվել է տեղական համայնքի ներկայացուցիչների կողմից: Տեղական իշխանությունները համաձայնել են վկայականներ տրամադրել անօրինական հողօգտագործողներին Արշակունյացի դեպքում, սակայն հրաժարվել են անել նույնը Արտաշատի դեպքում: Իշխանությունները պնդել են, թե նրանք իրականում վստահ չեն խորհրդատուի հավաքագրած տվյալների ճշգրտության հարցում: Նրանք նաև վտանգներ նկատեցին առ այն, թե մյուս ԱԵԱ-ները կարող են գալ և փոխհատուցում պահանջել, քանի որ գույքի հանդեպ նրանց իրավունքները հիմնավորող փաստաթղթեր չկան:
4. Սեփականության իրավունք չունեցող հողօգտագործողների համապատասխանությունը փոխհատուցման համար որոշվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝
 1. **Այն հողամասերը, որոնց համար չկա փաստացի օգտագործման որևէ ապացույց**, այսինքն՝ չկան առկա կառույցներ (այդ թվում՝ ցանկապատ) և / կամ ծառեր (պտղատու, դեկորատիվ, փայտանյութ տվող), մշակաբույսեր և այլ գյուղատնտեսական կամ այլ աշխատանքների նշաններ, բարելավումներ, կրացառվեն փոխհատուցելի ԱԵԱ-ների ցուցակներից:

2. **Հողամասեր, որտեղ օգտագործումն ակնհայտ է՝** այսինքն այն հողամասերի համար, որտեղ եղել են առկա շինություններ (այդ թվում՝ ցանկապատեր) և / կամ ծառեր (պտղատու, փայտանյութ տվող և դեկորատիվ ծառեր), մշակաբույսեր կամ այլ գյուղատնտեսական արտադրանք, կամ աշխատանքների այլ նշաններ, ԱԵԱ-ները կփոխհատուցվեն:
3. **Միայն առկա շինությունն (օրինակ՝ խանութ) է օգտագործվում հողամասում՝** այս դեպքում կփոխհատուցվի մակերեսի միայն այն մասը, որ զբաղեցրել է նման շինությունը, ինչպես նաև դրա սպասարկման (վերցվում է, որպես առկա առևտրային/արտադրական շինության արտաքին մակերեսին համարժեք) համար անհրաժեշտ տարածքը: Օրինակ՝ եթե շենքի արտաքին մակերեսը 100 մ² է, ապա դրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործողն իրավունք կունենա փոխհատուցվել 200 մ² հողամասի համար:
4. **Որոշ պտղատու, փայտանյութ տվող կամ դեկորատիվ ծառեր ունեցող հողամասեր, որոնց դեպքում բնակիչների կողմից մնացյալ հողամասի օգտագործումն ակնհայտ (կասկածելի) չէ՝** նման դեպքերում պտղատու, դեկորատիվ կամ փայտանյութ տվող ծառերի առկայությունը համարվել է հիմնավոր ապացույց առ այն, որ հողամասը փաստացի օգտագործվում է: Տեղական գյուղատնտեսական ստանդարտը³ ծառերի տարբեր տեսակների համար տարբեր մակերես է նախատեսում: Սույն ստանդարտով ընկուզենիներին ամենամեծ տարածքն է անհրաժեշտ՝ 72 մ²: Բարդ հաշվարկներից և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասում աճող ծառի յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ վեճերից խուսափելու նպատակով ԵԶ-ն որոշել է յուրաքանչյուր ծառի համար փոխհատուցել հողամասի 100 մ²-ը: Հողամասի փոխհատուցման ենթակա չափաբաժնի սահմանման նպատակով որպես ստանդարտ է հաստատվել 100 մ² հողամասը յուրաքանչյուր ծառի համար: Օրինակ՝ եթե ամբողջ հողամասի տարածքը 600 մ² է, և կան 3 պտղատու ծառեր, ապա յուրաքանչյուր ծառն իրավունք կապահովի ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործողին փոխհատուցել 100 մ² հողամասի դիմաց, այսինքն՝ 100 մ² x 3 = 300 մ²: Հետևաբար 600 մ² հողամասից, ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործող ԱԵԱ-ին կվճարվի 300 մ² հողամասի դիմաց փոխհատուցում:
5. **Հողամասը փոքր է 100 մ²-ից և ունի մեկ կամ ավելի ծառեր՝** ճշգրիտ տարածքը կփոխհատուցվի՝ անկախ հողամասում ծառերի թվաքանակի: Օրինակ, եթե հողամասի տարածքը 90 մ² է, և պտղատու 2 ծառեր կան հողամասում, միայն 90 մ² -ը ենթակա կլինի փոխհատուցման:
6. **Առկա բնակելի շենք է կանգնեցվում և օգտագործվում հողամասում,** շենքի արտաքին մակերեսը պետք է բազմապատկվի 2-ով՝ հաշվարկելու հողամասի փոխհատուցման մակերեսը: Օրինակ՝ եթե բնակելի շենքի տարածքը 100 մ² է, ապա փոխհատուցման ենթակա հողամասը կկազմի 200 մ². Հողամասատարածքի ազդեցության ենթակա մասը հաշվի կառնվի փոխհատուցման առնչությամբ՝ մինչև 1000 մ²:
7. **Արդյունաբերական շենք է կանգնեցվում և օգտագործվում հողամասում՝** շենքի արտաքին մակերեսը պետք է բազմապատկվի 3-ով՝ հաշվարկելու հողամասի փոխհատուցման մակերեսը: Օրինակ՝ եթե բնակելի շենքի տարածքը 100 մ² է, ապա փոխհատուցման ենթակա հողամասը կկազմի 300մ². Հողամասի ազդեցության

ենթակա մասը հաշվի կառնվի փոխհատուցման առնչությամբ՝ մինչև 1000 մ²:

5. ՇԻՆՈՒԹՅԱՆ /ՇԵՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

5.1 Ընդհանուր մոտեցում

Օտարվող շինությունների համար փոխհատուցումը հաշվարկվել է ինչպես օրինական շինությունների սեփականատերերի, այնպես էլ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող շինությունների համար: ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 273-Ն որոշումը յուրաքանչյուր խմբի համար սահմանում է փոխհատուցման հաշվարկի իր մոտեցումը: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև նկարում:

Աղյուսակ 69. Բնակելի և ոչ բնակելի շինությունների փոխհատուցում

Օրինական և ինքնակամ կառուցված ԲՆԱԿԵԼԻ շինություններ	Օրինական ՈՉ ԲՆԱԿԵԼԻ շինություններ	Ինքնակամ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ շինություններ օրինական հողի վրա	Ինքնակամ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ շինություններ ինքնակամ օգտագործվող հողի վրա
• փոխարինման արժեք+ 15%	• փոխարինման արժեք+ 15%	• փոխարինման արժեք	• փոխարինման արժեք- օրինականացման ծախսեր /ոչ ավել քան 20 %

5.2 ՇԵՆՔԵՐԻ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԺԵՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Շենքերի/շինությունների գնահատումն իրականացվել է +15% փոխարինման արժեքով ՀՀ Քաղաքաշինության նախարարության գնագոյացման տեղեկատվության և հաշվարկման կենտրոնի (ՓԲԸ) կողմից առաջարկված մեթոդաբանության/չափանիշների հիման վրա: Այստեղ փոխարինման արժեքը հասկացվում է որպես ընդհանուր ծախս՝ վերականգնելու համար այնպիսի շենք/շինություն, որն իր մակերեսով, նյութերով և առանձնահատկություններով համարժեք կլինի փոխարինվող շենքին/շինությանը առանց ամրոտիզացիոն մասհանումների և գործառնական ծախսերի: Փոխարինման արժեքի հաշվարկումը հիմնված է հետևյալ գործոնների վրա.

- ա. նյութերի տվյալ պահի շուկայական արժեքը,
- բ. նյութերի տեղափոխման տվյալ պահի արժեքը,
- գ. աշխատուժի ներկայիս արժեքները և
- դ. ազդեցությանը ենթակա շենքերի, կառուցվածքային/գեղագիտական առանձնահատկությունների արժեքը:

Հաշվարկները կատարվել են ամբողջ ՀՀ տարածքի համար հաստատված պաշտոնական չափագրման ցուցիչների և ճշգրտման գործակիցների, ինչպես նաև Շինարարական Աշխատանքների համար նախատեսված պաշտոնական ամբողջական ցուցիչներով (ՇԱԳՊ) սահմանված շինարարական աշխատանքների գնահատման ցուցանիշների համապատասխան:

Շենքերի և շինությունների փոխարինման արժեքները որոշվել են՝

ա. համապատասխան մասնագիտացված նորմատիվային տեղեկագրերում (ՇԱԽՑ) ներկայացված կամ հավաստի այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա,

բ. շուկայական պայմաններում նմանատիպ շենքերի և շինությունների կառուցման համար շինարարության պայմանագրերում նշված արժեքի տվյալների հիման վրա:

Անշարժ գույքի գնահատման նպատակով շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը հաշվարկվում են՝ որպես ուղղակի, անուղղակի ծախսերի և ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթի հանրագումար: Նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$N_{\sigma} = N_{\text{հ}\sigma} + U_{\sigma} + \Delta C$$

որտեղ՝

N_{σ} -ն նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերն են

$N_{\text{հ}\sigma}$ - ն ուղղակի ծախսերի հանրագումարն է,

U_{σ} -ն անուղղակի ծախսերի հանրագումարն է,

ΔC -ն ձեռնարկատիրական (կառուցապատողի) շահույթն է:

Ուղղակի ծախսերը ներառում են շինարարության հետ անմիջականորեն կապված հետևյալ ծախսերը.

ա. նյութերի, արտադրանքների և ինժեներական ցանցերի ու համակարգերի ձեռք բերման ծախսերը,

բ. շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսերը,

գ. ժամանակավոր կառուցված շենքերի և շինությունների հետ կապված ծախսերը, անվտանգության գծով միջոցառումների, պահեստատրանսպորտային և տեղական շուկայում որպես նորմատիվ ընդունված այլ ծախսերը,

դ. շինարարության ֆինանսավորման հետ կապված ծախսերը և

ե. կապալառուի վերադիր ծախսերն ու շահույթը:

Անուղղակի ծախսերի չափը որոշվում է տվյալ իրավիճակում շուկայում ձևավորված աշխատանքների և ծառայությունների սակագների հիման վրա: Անուղղակի ծախսերը ներառում են շենքերի, շինությունների կառուցմանն ուղեկցող, սակայն շին-մոնտաժային աշխատանքների արժեքի մեջ չներառվող հետևյալ ծախսերը՝

ա. նախագծման, նախահաշվի կազմման, տեխնիկական և այլ վերահսկողության ծախսերը,

բ. խորհրդատվությունների, իրավաբանական, հաշվապահական և աուդիտորական, ծառայությունների վճարները,

գ. գովազդի, շուկայի մարքեթինգի և օբյեկտի վաճառքի հետ կապված ծախսերը,

դ. ձեռնարկատիրոջ վարչական և այլ ծախսերը:

Ձեռնարկատիրական շահույթի մեծությունը որոշվում է շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա: 273-Ն որոշման (<ՕՏՀ-ի) համաձայն՝ մաշվածության չափով նվազեցումներ չեն իրականացվում: Այն պարագայում, երբ համեմատական մեթոդով շինությունների քառակուսի մետրի շուկայական գինն ավելի բարձր է եղել, քան դրա փոխարինման արժեքը, կիրառվել է շինությունների գնահատման համեմատական մեթոդը:

Շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով.

$$U_{\sigma} = C_{\sigma} \times N_{\sigma}$$

որտեղ՝

Վ -ն շենքերի և շինությունների վերարտադրման (կամ փոխարինման) ծախսերն են,
Շ -ն գնահատվող շենքերի և շինությունների մակերեսն է,
Ն -ն նմանատիպ օգտակարությամբ և նշանակությամբ անշարժ գույքի 1քմ ստեղծման համար անհրաժեշտ ծախսերն են:

Ստորև ներկայացված է շինության վերարտադրման/փոխարինման ծախսերի հաշվարկի օրինակը.

Աղյուսակ 70. Բնակելի շենքի փոխարինման ծախսի հաշվարկի օրինակը

[illegible]

ԲՃԺՄ ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, 15-րդ բաժին, աղյուսակ 5-Հ 1-3-րդ տողերի միջին թվաբանական		
18	Շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո գոյացած (ոչ ընթացիկ) աղբի i »Օ ÷ áĒŮ Y³ ßĒ³ i³ YüY»ñĈÍ³ Ēē»ñ * (%)	0.15
19	18 տողը բացարձակ մեծությամբ (7x18)	146
ԲՃԺՄ ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, 16-րդ բաժին, աղյուսակ 6		
20	Օբյեկտի տեխնիկական հսկողության ծառայության ծախսեր * (%)	1.41
21	20 տողը բացարձակ մեծությամբ (7x20)	1,374
ԲՃԺՄ ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, 17-րդ բաժին, աղյուսակ 7-Հ 1-7-րդ տողերի միջին թվաբանական		
22	Օբյեկտի հեղինակային հսկողության ծառայության ծախսեր * (%)	0.5
23	22 տողը բացարձակ մեծությամբ (7x22)	487
ԲՃԺՄ ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, 18-րդ բաժին, աղյուսակ 8-Հ 1-ՀԳ՝ 2-ն¹ i áŌ»ñĈŮĈՀՀԳ՝		
24	Ů³ Ē³ · í³ Y³ Ē³ Ñ ß³ ŮՀԳ ÷³ ēī³ ÁŌÁ»ñĈŮŮ³ İŮ³ YÑ Ů ñ³ YÑ³ Á»ß í³ Ēē»ñ *	3.18
25	24 տողը բաժն³ ñŌ İ մեծությամբ (7x24)	3,098
ԲԾ ն³ Ō ն³ ßՀáŌÁŮ Y Y³ Ē³ ñ³ ñĈ Ñ³ Ů Y 15.02.2008Ա. ԱՂԻ N 19-Ս ն³ Ō ն³ ßՀԳ³ İ³ Y ÷³ ēī³ ÁŌÁ»ñĈ (İñ³ · ñ³ ŮՀԳ · ×³ ññ³ ñ³ á »i³ ßՀԳ³ ñ³ ñ³ İ³ Y) ŮŮ³ İŮ³ Y³ ßĒ³ i³ YüY»ñĈ³ ñÁ»ñĈ Ñ ß³ ñİŮ³ Y İ³ ñ· Á Ñ ēī³ i »ĒáŌ Ů ēՀԳ (² ŮáŌñ»i · ³ Ō ßՀԳ. Y³ Ē³ ñ³ ñĈ N 19-Ս, 15.02.2008Ա. Ñ³ Ů YŌ, Ñ í»Ē³ İĈ ³ ŌáŌ³ İ 8-Հ 1-13-ն¹ i áŌ»ñĈ³ ŮáŌñ»i · 1-5-րդ սյունյակների միջին թվաբանական		
26	Խորհրդատվությունների, իրավաբանական, հաշվապահական և աուդիտորական, í³ á³ ŮáŌÁŮáŮY»ñĈí³ ×³ ñY»ñĈÍ³ Ēē»ñ	0
Հղում՝ Ստանդարտ 7.7.4 բաժնի 1-ին կետի բ. »YÁ³ İ»i		
27	բՀԳ³ ñ³ ñáŌÁŮ YՀՀԳ³ Yē³ í áñŮ³ Y Ñ»i í³ á í³ í í³ Ēē»ñ	0
Հղում՝ Ստանդարտ 7.7.4 բաժնի 1-ՀԳİ»i Հ· . »YÁ³ İ»i		
28	Գովազդի, շուկայի մարքեթինգի և օբյեկտի վաճառքի հետ կապված ծախսեր	0
Հղում՝ Ստանդարտ 7.7.4 բաժնի 1-ՀԳİ»i Հ¹ . »YÁ³ İ»i		
29	ŌēY³ ñİ³ i ՀñáՀ í³ ñá³ İ³ Y·³ Ůİ³ Ēē»ñ	0
Հղում՝ Ստանդարտ 7.7.4 բաժնի 1-ՀԳİ»i Հ» . »YÁ³ İ»i		
30	áY³ Ē³ i »ēī³ İ İ³ Ēē»ñ * (%)	3.5
31	30 տողը բացարձակ մեծությամբ (7x30)	3,410
ԲՃԺՄ ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, ³ ŌáŌ³ İ 1, 1-ին բաժնի գ., դ., ե., գ., 2-ն¹ բաժնի ա., բ., գ. և դ. կետերի միջին թվաբանական		
32	Սարքավորումների արժեք (օդափոխության, ջնրուղման և այլն) (բացարձակ մեծություն)	10,000
ԲՃԺՄ Բ² ĒŌ 2009, ÁY Ñ YáŌ¹ ñáŌÁY»ñ, 3-ն¹ İ»i 1.1 »ÁY³ İ»i		
33	Բ ñİ»ñ² ² Ծ* (%)	20
34	33 տողը բացարձակ մեծությամբ (7x33)	19,485
ԲՃԺՄ Բ² ĒŌ 2009, ÁY Ñ YáŌ¹ ñáŌÁY»ñ, 3-ն¹ İ»i 1.1 »ÁY³ İ»i , ԸՆՅ Ն 16.06.2008Ա. ԱՂԻ N 41-Ս, 12-րդ բաժին, ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին, 6-ն¹ Ñá í³ İĈ		
35	ŌēY³ ñİ³ i Հñ³ İ³ Yß ÑáŌ (%)	0
36	35 տողը բացարձակ մեծությամբ (7+9+11+13+15+17+19+21+23+25+26+27+28+29+31+32+34) ×35	0
Հղում՝ Ստանդարտ 7.7.4 բաժնի 3-ն¹ İ»i , i »ñĒáŌ áŌÁŮáŮY		
37	i »ñ³ ññ³ ¹ ñŮ³ Y(İ³ Ů ÷ áĒ³ ñĈYŮ³ Y) í³ Ēē»ñ (7+9+11+13+15+17+19+21+23+25+26+27+28+29+31+32+34+36)	140,083

6. ԾԱՌԵՐԻ և ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1 Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի գնահատում

Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրամադրվի ներդրված գումարի հիման վրա. Գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները.

- ա. ծառատեսակ,
- բ. ծառի տարիք,
- գ. ծառի գտնվելու տարածաշրջանը:

6.1.1 Տնկիների գնահատման գործընթացը

Տվյալ ծառատեսակի տնկիի գինը հստակեցվել է: Տնկիների շուկայական գինը որոշվել է ՀՀ-ում տնկիների շուկայական միջին գների հիման վրա: Իրականացվել է գների ուսումնասիրությունն Առինջ գյուղի մուտքի մոտ գտնվող տնկիների շուկայում, այնուհետև տեղեկություններ են ձեռք բերվել մի քանի վաճառողներից, ինչի հիման վրա ձևավորվել է միջին գին:

Տնկիների գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\text{ԾՏ} = \text{ՏՀԱ} + \text{ՏԾ}$$

որտեղ՝

- ԾՏ** - Տնկիի (կանգուն) շուկայական արժեք,
- ՏՀԱ** - Տնկիի շուկայական արժեք (առանց տնկելու),
- ՏԾ** - Տնկիի տնկման ծախսեր:

6.1.2. Ոչ պտղատու ծառերի գնահատման գործընթաց

ոչ պտղատու ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\text{Ծ}_{\text{ոչ}} = \text{Տ}_{\text{ՀԱ}} + \text{Պ}_{\text{ՀԱ}} \times \text{Տ}_{\text{բ}}$$

որտեղ՝

- Ծ_{ոչ}** - Հասուն ոչ պտղատու ծառի շուկայական արժեք,
- Տ_{ՀԱ}** - Տնկիի շուկայական արժեք,
- Պ_{ՀԱ}** - Հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսեր,
- Տ_բ** - Հասուն ոչ պտղատու ծառի տարիք:

Սահմանված ծառատեսակի տնկիի գինը որոշելուց հետո հաշվարկվել են հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսերը: Այդ ծախսերը սահմանվեցին որպես այդ տարածքում ընդունված ծախսերի միակցություն, ինչն արտացոլված է ստորև աղյուսակում.

#	Գործողությունը	Տարեկան քանակը
1.	Ծառի էտ	1 անգամ
2.	Ծառի ընկ սպիտակեցում	1 անգամ
3.	Ոռոգում	3-8 անգամ (կախված տարածաշրջանից)
4.	Պարարտագում	1 անգամ

5. Կուտիվացիա	1 անգամ
6. Ծառի սրսկում	1 անգամ
7. Բաժանների փխրեցում	1 անգամ

6.1.3 Պտղատու ծառերի գնահատման մեթոդաբանություն

Պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրամադրվի այնքան, որքան կազմում է մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքը՝ բազմապատկած այն տարիների քանակով, որքան անհրաժեշտ է նոր լրիվ պտղատու ծառ աճեցնելու համար: Պտղատու ծառերի գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները.

- ա. ծառատեսակ,
- բ. ծառի արդյունաբերական բերք տալու տարիք,
- գ. բերքատվությունը,
- դ. բերքի արժեքը,
- ե. ծառի գտնվելու տարածաշրջանը:

Քայլ 1 Տարիք, երբ ծառը տալիս է բերք արդյունաբերական չափով

Մասնագիտացված հաստատությունների կողմից իրականացված հետազոտությունները, մասնավորապես՝ Հայաստանի աղգային գյուղատնտեսական համալսարանի և մասնագիտական գրականությունը, օգտագործվել են տվյալ ծառի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ տարիների քանակը որոշելու համար:

Քայլ 2 Մեկ կիլոգրամ մրգի շուկայական արժեքը

Մրգատու ծառի տարեկան զուտ արժեքը սահմանվել է որպես շուկայական եկամուտ ծառից ստացված տարեկան բերքից: Այսպիսով՝ որոշվել է տվյալ ծառատեսակից ստացվող 1 կիլոգրամ մրգի գինը: Հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել մի քանի գործոններ.

1. Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին տարեկան (ըստ 7480 գյուղացիական տնտեսությունների հետազոտությունների տվյալների) գների վերաբերյալ վերջին 7 տարիների (2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012թթ.) տեղեկատվությունը:
2. Ագրուրատու տասնօրյա թերթի (Հիմնադիր հրատարակիչ՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն ՓԲԸ) 2012թ. և 2013թ. տվյալ պահի բոլոր համարներում հրապարակված գյուղատնտեսական մթերքների միջինացված մանրաձախ գները:

Քայլ 3 Ծառատեսակի բերքատվությունը

Որոշվել է ծառի բերքատվությունը: Բերքատվությունը որոշվել է՝ հիմք ընդունելով մասնագիտական գրականությունը, ինչպես նաև տարբեր մասնագիտացված հաստատություններին հարցումները (օրինակ՝ Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան):

Քայլ 4 Փոխհատուցման հաշվարկումը

Բերքատու ծառերի գնահատման համար կիրառվել է հետևյալ բանաձևը.

$$\text{ԾԲ} = \text{ՏԲ} \times \text{ՏՇՀԵ}$$

Որտեղ՝

ԾԲ – Բերքատու ծառի շուկայական գինը

ՏՔ – Այն տարիների քանակը, որն անհրաժեշտ է նոր ծառը լիարժեք պտղատվության տարիքին աճեցնելու համար

ՏՇԶԵ – Տարեկան շուկայական զուտ եկամուտը

6.1.4 Փայտանյութ տվող ծառերի գնահատման մեթոդաբանություն

Փայտանյութ տվող ծառերը պետք է գնահատվեն տարիքի կարգի հիման վրա (տնկիներ, միջին հասունության ծառեր, հասուն ծառեր), ինչպես նաև փայտի որակի ու ծավալի հիման վրա: Փայտանյութ տվող ծառերի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալներն են.

- 1) ծառատեսակ,
- 2) ծառի տրամագիծը սմ-ով՝ չափված գետնից 1,3 մ բարձրությամբ, կեղևի հետ միասին
- 3) վերամշակման ենթակա բնի երկարությունը (բարձրությունը) (մ):

Քայլ 1 Ծառի ծավալի սահմանում

Ելակետային տվյալների հիման վրա փայտանյութ տվող ծառերը դասակարգվում են՝ ըստ ծավալի և տեսակի (շինարարության փայտանյութ և վառելիքի փայտանյութ): Ծավալը որոշելու նպատակով ծառերը դասակարգվում են՝ ըստ տրամագծի.

- 1) մանր (տնկիներ)՝ 3,0-11,0 սմ,
- 2) միջին (միջին հասունության ծառեր)՝ 12,0-24,0 սմ,
- 3) խոշոր (հասուն ծառեր)՝ 25,0 սմ և ավել բնի հաստություն ունեցող ծառեր:

Ծառի դասակարգումը ցույց է տրված ստորև աղյուսակում: Թափոնները որոշվում են՝ որպես հատման մնացորդների և կեղևի ծավալների գումար: Փայտանյութ տվող ծառերի վառելափայտի ծավալը հավասար է կեղևով բնի ծավալից հանած փայտանյութի և թափոնների ծավալները (սյունյակ 3-(7+8)):

Եթե ծառը լրիվ վառելափայտ է, բնի ընդհանուր ծավալը սյունյակ 3-ից տեղափոխվում է 9-րդի տակ: Այդպիսի ծառի ծավալը (11) կազմվում է բնի (9) և սաղարթի ծավալի (10) գումարից: Իսկ փայտանյութ տվող ծառի ընդհանուր ծավալը՝ ընդհանուր լիկվիդը՝ (11) կազմվում է 7-րդ, 9-րդ և 10-րդ սյունակների գումարից:

Ծառի բնի			Հոծ ծավալը խորանարդ մետրերով							
D1,3	H	V կեղևով	Փայտանյութ				Թափոններ	Վառելափայտ		
			խոշոր	Միջին	Մանր	Ընդամենը		Բնից	Սաղարթից	Ընդհանուր լիկվիդ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
12	15	0,084	-	-	0,03	0,03	0,03	0,02	0,01	0,06
Սյունակ 1- ծառի բնի տրամագիծն է՝ կրծքավանդակի բարձրությունից հաշված. D1,3, այսինքն՝ գետնից 1,3 բարձրությամբ տրամագիծը՝ արտահայտված սմ-ով Սյունակ 2- ծառի բնի բարձրությունն է, H՝ մ-ով Սյունակ 3- ծառի բնի ծավալն է կեղևով՝ V, խորանարդ մետրով Հղում. “Անտառապահի համառոտ ձեռնարկը”, Հայկ Հախինյան, Վանաձոր, 1996										

Քայլ 2 Փայտանյութի շուկայական գնի սահմանումը

Փայտանյութի շուկայական գինը սահմանվել է գնահատման պահի դրությամբ ՀՀ-ում փայտանյութի շուկայում առկա միջին արժեքի հիման վրա: Կատարվեց Մալաթիա-Սեբաստիա և Էրեբունի համայնքների վառելանյութ հանդիսացող փայտի շուկայական գնի ուսումնասիրություն, և այն միջինացվեց մի քանի տարբեր վաճառողներից ստացված տեղեկությունների հիման վրա:

Քայլ 3 Փոխհատուցման հաշվարկ

Փայտանյութ տվող ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$\text{ՓԾԸԳ} = \text{ՓԽԸԳ} \times \text{ՇՕԾ} + \text{ՎԾԽ} \times \text{ՎՓԾ}$$

Որտեղ

ՓԾԸԳ – Փայտանյութ տվող ծառի շուկայական գինը

ՓԽԸԳ – Շինարարության համար օգտագործվող 1 խորանարդ մետր փայտանյութի շուկայական գինը,

ՇՕԾ - Շինարարության համար օգտագործվող փայտանյութի ծավալը,

ՎԾԽ – Վառելանյութ հանդիսացող 1 խորանարդ մետր փայտի շուկայական գինը,

ՎՓԾ – Վառելանյութ հանդիսացող փայտի ծավալը

6.1.5 Մշակաբույսի գնահատման մեթոդաբանություն

Մշակաբույսի փոխհատուցումը որոշվում է մշակաբույսի տարեկան զուտ շուկայական արժեքի հիման վրա: Ստորև բերված են գնահատված մշակաբույսի համար օգտագործված անհրաժեշտ ելակետային տվյալները.

- 1) մշակաբույսի տեսակը,
- 2) բերք,
- 3) մշակաբույսի արժեքը,
- 4) այն տարածաշրջանը, որտեղ մշակաբույս կա:

Քայլ 1. Մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքի սահմանումը

Մշակաբույսի մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքը մշակաբույսից ստացվող մեկ տարվա բերքի շուկայական արժեքն է: Մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքի որոշման համար նախ որոշվում է տվյալ մշակաբույսից ստացվող բերքի 1 կգ շուկայական արժեքը: Հաշվարկները կատարելիս հաշվի է առնվել հետևյալը.

- 1) Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին տարեկան (ըստ 7480 գյուղացիական տնտեսությունների հետազոտությունների տվյալների) գների վերաբերյալ վերջին 7 տարիների (2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012թթ.) տեղեկատվությունը,
- 2) Ագրոլրատու տասնօրյա թերթի (<Հիմնադիր հրատարակիչ՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն ՓԲԸ) 2012թ. և 2013թ. տվյալ պահի բոլոր համարներում հրապարակված գյուղատնտեսական մթերքների միջինացված մանրածախ գները:

Քայլ 2 Մշակաբույսի բերքի սահմանումը

Բերքը սահմանվում է՝ հիմնվելով հետևյալի վրա.

- 1) մասնագիտական գրականություն,
- 2) միջին հաշվով բերքի ցուցիչներ՝ հրատարակված⁸ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայության կողմից, որի վերլուծությունները կատարվել են վերջին⁷ տարիների (2006-2012) համար, ինչպես նաև
- 3) հետազոտություններ տարբեր մասնագիտացված հաստատությունների հետ, ինչպես օրինակ՝ Հայաստանի ազգային գյուղատնտեսական համալսարանն է: 1 կգ մշակաբույսի շուկայական գինը բազմապատկվում էր բերքի ցուցիչով:

Քայլ 3 Փոխհատուցման հաշվարկ

Մշակաբույսերի գնահատման համար կիրառվում էր հետևյալ բանաձևը.

$$\text{ՄՇԳ} = \text{ՄՄԶԳ} \times \text{Մ}$$

որտեղ

ՄՇԳ – Մշակաբույսի շուկայական գինը

ՄՄԶԳ – Մեկ միավորի տարեկան եկամտի զուտ շուկայական գինը

Մ – Մշակաբույսեր ցանելու տարածքի մակերեսը

7. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

Տրանսպորտային ծախսերը որոշվում էին՝ շուկայում առկա մի քանի բեռնափոխադրող ընկերությունների առաջարկած ծառայությունների միջին գնի հիման վրա: Գներն այնպես էին հաշվարկվում, որ ԱԵԱ-ները կարողանան իրենց գույքը տեղափոխել 20 կմ շառավղի շրջանակներում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նմանատիպ կազմակերպություններն առաջարկում են բեռնատար փոքր մեքենաներ (ԳԱԶԵԼ) և մեծ բեռնատար մեքենաներ (ԳԱԶ-52 կամ ԶԻԼ 131՝ կահույք և կենցաղային իրեր տեղափոխելու համար, ՄԱԶ մակնիշի ավտոկոտնակ և ԿԱՄԱԶ մակնիշի քարշակ՝ ՕԴԱԶ մակնիշի կիսակցորդով՝ ոչ ստանդարտ եզրաչափքեր ունեցող գույք տեղափոխելու համար): Ծառայության արժեքը հաշվարկվել է հետևյալ չափանիշների հիման վրա.

- 1) երթուղիների քանակը,
- 2) տեղափոխման ենթակա ակտիվների/գույքերի քանակը,
- 3) բնակարանի հարկը,
- 4) վերելակի առկայությունը,
- 5) մեկ գույքի չափը:

8. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Գործարքին առնչվող ծախսերը հաշվվում են անշարժ գույքի պետական գրանցման իրականացման դրույքաչափերի հիման վրա, որոնք հաստատված են՝ նոտարական գրասենյակներում սահմանված ՀՀ օրենսդրության, վճարումների և պետական պարտականությունների համաձայն: Նաև հաշվի է առնված մի կտոր ակտիվ/գույքի՝ 2-3 մասերի բաժանվելու (ակտիվների/գույքերի մասնակի օտարման արդյունքում) հավանականությունը:

9. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

9.1 ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Մարդահամարի նպատակն էր ապահովել ազդեցության ենթակա տնային տնտեսությունների մանրամասն նկարագրությունը՝ սեռը, տարիքը և էթնիկ խումբը: Խոցելիության մասին տվյալները ներկայացվեցին Հասարակական գործերի նախարարություն՝ խոցելի ԱԵՏՏ-ների ցանկի հաստատման համար: Հետազոտության ժամանակ Իրավունքների սխեման բաժանվեց բոլոր ուսումնասիրված ԱԵՏՏ-ներին:

9.2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՄՏՀ-ի նպատակն է նկարագրել ԱԵՏՏ-երի՝

- 1) սոցիալ-տնտեսական վիճակը,
- 2) մուտքը դեպի հասարակական սպասարկման միջոցներ և տրանսպորտ, եկամուտ և ծախս, օրինական, վարձակալած և ինքնակամ օգտագործվող հողամասերի և շինությունների օգտագործումը,
- 3) բնակարանի վիճակն ու ընդհանուր պայմանները, վերաբերմունքը ծրագրի նկատմամբ, տարաբնակեցման հետևանքների մասին ընկալումները և այլն:

Մի շարք առանձին հարցեր անդրադառնում են ԱԵՏՏ-ների փոխհատուցման ընկալումներին, կենսապահովման հարցերին և հավելյալ օժանդակության հնարավոր կարիքին: Համակողմանի պատկեր ստեղծելու համար ՄՏՀ-ն իրականացվում էր թե՛ որակական, թե՛ քանակական մեթոդաբանության կիրառման միջոցով:

9.2.1 Որակական հետազոտության մեթոդաբանություն

Խորին հարցազրույցների և ֆոկլուս խմբային հարցազրույցների միջոցով հարցման են ենթարկվել հետևյալ խմբերը.

- 1) հիմնական և ժամանակավոր ձեռնարկատիրական գործունեության հնարավորություն կորցնողներ,
- 2) հիմնական աշխատանք կորցնողներ,
- 3) խոցելի ԱԵՏՏ-ներ,
- 4) բնակելի շինություններ կորցնողներ:

Բոլոր հարցազրույցները ձայնագրվել և սղագրվել են: Հարցազրույցի տևողությունը տատանվել է 25 րոպեից մինչև 1.5 ժամ: Ստորև աղյուսակում ներկայացված են իրականացված հարցազրույցների քանակն՝ ըստ հարցվողի տեսակի:

Հարցվողի տեսակ և մեթոդ	Քանակ
Խորին հարցազրույցներ մշտական և ժամանակավոր կորուստ ունեցող անհատ ձեռնարկատերերի կամ տնօրենների հետ	5
Խոցելի տնային տնտեսությունների ներկայացուցիչների հետ խորին հարցազրույցներ	3
Մշտական աշխատանքի կորուստ ունեցող աշխատողների հետ ֆոկլուս խումբ	1
Բնակելի շինություններ կորցնողների հետ ֆոկլուսխմբային հարցազրույց	1
Ընդամենը	10

9.2.2 Քանակական հետազոտության մեթոդաբանություն

ՄՏՀ-ն անցկացվել է Արշակունյացի և Արտաշատի հատվածների 107 ԱԵՏՏ-ների հետ: Հարցումներն անցկացվել են 2013 թվականի, փետրվարի 23-ից մարտի 10-ն ընկած ժամանակահատվածում:

Հարցման են ենթարկվել սեփականատերերի, վարձակալների, ինքնակամ օգտագործողների, մշտական ազդեցություն կրող փոքր բիզնեսի ներկայացուցիչները, ինչպես նաև մշտական և ժամանակավոր ազդեցություն կրող ձեռնարկատիրական գործունեության շրջանկաներում ընդգրկված աշխատողները: Հարցման ենթակա անձ են հանդիսացել ընտանիքի սոցիալ-տնտեսական իրավիճակին առավել ծանոթ անձինք: Հարցազրույցն իրականացվել է հետևյալ 4 հարցաթերթերով համապատասխան կորուստ ունեցող ԱԵՏՏ-ի հետ.

1. ԱԵՏՏ հարցաշար՝ ազդեցության ենթակա հողամասերի, շենքերի և այլ գույքի սեփականատերերի, վարձակալների և օգտագործողների համար:
2. ԱԵՏՏ հարցաշար այն ԱԵՏՏ-ների համար, որոնք աշխատանք են կորցրել ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության պատճառով:
3. ԱԵՏՏ հարցաշար այն ԱԵՏՏ-ների համար, որոնք կորցրել են ազդեցության ենթակա փոքր և միջին բիզնես:

4. ԱԵՏՏ հարցաշար այն արձագանքողների համար, որոնք կորցրել են ազդեցության ենթակա խոշոր բիզնես:

Բոլոր հարցաթերթերն անցել են տրամաբանական ստուգում՝ դաշտից վերադառնալու հաջորդ օրը: Տրամաբանական ստուգման արդյունքում վերհանված անհամապատասխանությունները ստուգվել են հարցվողի հետ հեռախոսազանգով: Միայն տրամաբանական ստուգում անցած հարցաթերթերն են մուտքագրվել: Տվյալների մուտքագրումն իրականացվել է Excell ծրագրի միջոցով: Տեղեկատվության բազայի տրամաբանական ստուգման (մաքման) գործընթացի ժամանակ առաջացած յուրաքանչյուր շեղում ուղղվել է՝ ըստ հարցաթերթի մեջ նշված տեղեկատվության: Այնուհետև մուտքագրված տվյալները վերլուծվել են SPSS ծրագրով և ելքային աղյուսակները պատրաստվել են համաձայն նախապես սահմանված ձևաչափերի:

10. ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Նկարագրությունների արձանագրությունները կազմվել են (մանրամասն չափագրման ուսումնասիրություն-մարդահամարի միջոցով հավաքած տվյալների հիման վրա) ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1275-Ն որոշմամբ հաստատված ձևով: Կազմվել են հողամասերի, շինությունների և ձեռնարկատիրական գործունեության նկարագրության արձանագրություններ: Արձանագրություններ են կազմվել թե՛ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տնօրինվող, թե՛ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող գույքերի համար:

Երևանի Շինարարական ծրագրի իրականացման գրասենյակը 12.04.2012-ին կազմեց ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տնօրինվող գույքերը նկարագրող արձանագրություններ, որոնք ստորագրվեցին սեփականատերերի և վարձակալների կողմից: Կազմվեց նկարագրության արձանագրություն (անհրաժեշտության դեպքում), որը ծրագրված ընթացակարգով ստորագրվեց սեփականատերերի կողմից:

Ծրագիր մշակվեց արհեստավար ծրագրավորողների կողմից՝ արձանագրությունները մեխանիկորեն կազմելու համար: Այս մոտեցումն ապահովում էր, որպեսզի արձանագրությունների տեղեկատվությունը նույնացված լինի ՀՕՏԾ-ի տեղեկատվության հետ, և ՀՕՏԾ-ի իրականացման արտաքին և ներքին մոնիտորինգի ընթացքում օգտագործվող տվյալների բազան նույնացված լինի ԱԵԱ-ին ուղարկվող արձանագրության տեղեկությունների հետ:

Այն դեպքերում, երբ սեփականատիրոջը /օգտագործողին/ վարձակալին հնարավոր չէր հանդիպել, կազմվեց արձանագրության ստորագրման ձախողման վերաբերյալ ակտ, որտեղ պետք է մատնանշվեր ստորագրման ձախողման պատճառը:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ
ՏՎՅԱԼՆԵՐ

Եթե Դուք ունեք հարցեր կամ Ձեզ հարկավոր է խորհրդատվություն, խնդրում ենք դիմել ԵԿՆ ԾԻԳ կամ ԱԶԲ ներկայացուցիչներին

**Քաղաքային կայուն
զարգացման ներդրումային
ծրագիր ՊՈԱԿ
Ծրագրի իրականացման
մասնագետների խումբ**

0001, Երևան, Հայաստան
Հեռ: + 374 10 56 54 87

www.yerevan.am



Բյուզանդի 1/3, 5-րդ հարկ

**Ասիական
Զարգացման Բանկ**
**Հայաստանում ռեզիդենտ
առաքելություն** Վազգեն
Սարգսյան 10, Piazza Grande,
3-րդ հարկ, գրասենյակներ
79, 80, 81
0010, Երևան, Հայաստան
+374
10
54
63
73
ww
w.a
db.
org



**Երևանի արևմտյան օդակաձև ճանապարհ
Արշակունյաց պողոտա – Արտաշատի խճուղի
Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության աշխատողների հետ հարցազրույցի
հարցաշար
Հարցաշար N _____**

Հարգելի պարոն/տիկին,

ՀՀ կառավարությունը և Ասիական զարգացման բանկն իրականացնում են երկու մայրուղիների ենթաճրագրի շրջանակում ճանապարհային հանգույցների վերակառուցման ծրագիր: Ծրագրի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու և ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վերականգնման համար ծրագիր մշակելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել հետազոտություն: Ձեր կարծիքը մեծ նշանակություն ունի Ծրագրի համար: Մենք բարձր կգնահատենք, եթե պատասխանեիք մեր մի քանի հարցերին ձեր տնային տնտեսությունների վերաբերյալ, ներկայացնեիք ձեր տեսակետները, կարծիքներն ու առաջարկությունները, որպեսզի մենք կարողանանք առաջարկել համապատասխան ռազմավարություն Ծրագրի համար: Անհրաժեշտ անձնական տվյալները կօգտագործվեն միայն հետազոտության վիճակագրական վերլուծության համար: Մենք վստահեցնում ենք ձեզ, որ անձնական ոչ մի տվյալ չի տրվի կամ չի բացահայտվի որևէ երրորդ կողմի՝ անկախ հանգամանքներից: Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

	Ազդեցության տեսակը	1.Այո 2.Ոչ
1	Ձեռնարկատիրական գործունեություն	
2	Եկամտի կորուստ/աշխատող/	
3	Եկամտի կորուստ /գյուղատնտեսություն/	
4	Բնակելի շինություն	
5	Ոչ բնակելի շինություն	
6	Այլ	

Անվանումը՝

Ազդեցության ենթակա գույքի հասցեն _____
/ՅՈՒՅՈՒՄ՝ հասցեի բացակայության պարագայում նշել 98/

ԱԵԱ-ի բնակության հասցեն _____
Տվյալների բազայում նույնականացման համարը /ՅՈՒՅՈՒՄ՝ լրացնում է ստուգողը/ _____
Ազդեցության ենթակա հողամասի լուս կողը _____
Պատասխանողի հեռախոսահամարը _____
Հարցազրուցավարի կողը _____
Հարցազրույցի ամսաթիվը/օր, ամիս, տարի/ _____
Հարցազրույցի սկիզբը _____
Հարցազրույցի ավարտը _____

1 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Ես կցանկանայի կազմել ձեր տնային տնտեսության (SS) բոլոր ներկա կամ տանից հեռու ապրող անդամների ցուցակը: Տնային տնտեսություն ասելով՝ նկատի ունենք միևնույն տանիքի ներքո և միևնույն ընտանեկան քյուջեով ապրող անձանց: Եկեք սկսենք գրանցել տվյալները SS ղեկավարի, ապա նաև վերջինիս կողակցի, երեխաների և SS այլ անդամների վերաբերյալ:

1.1 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

No	1.Անուն, ազգանուն	2.Կապը SS	3.Ազգությունը	4.Ծննդյան	5.Սեռը	6.Ամուսնական	7.Կրթությունը
----	-------------------	-----------	---------------	-----------	--------	--------------	---------------

		ղեկավարի հետ		տարեթիվը /օր, ամիս, տարի/		կարգավիճակը	
		1.ՏՏ ղեկավար 2.Ամուսին/կին 3.Դուստր 4.Որդի 5.Մայր 6.Հայր 7.Քույր 8.Եղբայր 9.Տատիկ 10. Պապիկ 11. Հարս 12. Փեսա 13.Թոռ 14.Թոռնուհի 15.Ամուսնու մայր/սկեսուր 16. Ամուսնու հայր/սկեսրայր 17. Զոքանչ 18. Անեք 99.Այլ _____	1.Հայ 2.Եզդի 3.Ռուս 99.Այլ _____		1.Արական 2. Իգական	1.Ամուսնացած 2.Չամուսնացա ծ 3.Այրի 4.Բաժանված 98. Կիրառելի չէ /մինչև 18 տարեկան /	1.Տառաճանաչ չէ 2. Տարրական 3.Ութամյա (թերի միջնակագ) 4. Տասնամյա (Միջնակարգ/միջին դպրոց) 5. Տասներկուամյա (Ավագ դպրոց) 6. Միջնակարգ մասնագիտական 7. ԲՈՒՀ-ի ուսանող (ստացիոնար) 8. ԲՈՒՀ-ի ուսանող (հեռակա) 9. Բարձրագույն 11.Թերի բարձրագույն 10. Հետբուհական /ասպիրանտ 98. Կիրառելի չէ /մինչև 6 տարեկան
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							
11							
12							
13							

1.2.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ/ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐԸ

No	1. Գրել Աղյուսակ 1.1-ի հերթական համարը)	2. Զբաղվածության կարգավիճակը		3. Զբաղվածության ոլորտը		4. Աշխատանքի տեսակը		5. Վերջին 6 ամսվա ընթացքում եկամտի աղբյուր		6. Ամսական միջին եկամտի չափը /վերջին 6 ամսվա ընթացքում		7. Սոցիալական խումբը	
		1. Զբաղված/աշխատող 2. Տարիքային թոշակառու → 5 3. Ուսանող, աշակերտ → 5 4. Չի աշխատում և աշխատանք չի փնտրում → 5 5. Չի աշխատում և աշխատանք է փնտրում → 5 6. Ժամկետային զինծառայող → 7 7. Աշխատունակ չի → 5 8. Այլ _____ 98. Կիրառելի չէ մինչև 6 տարեկան 7		1. Պետական, քաղծառայող 2. Մասնավոր հատվածի աշխատող 3. Ինքնագրաված 4. Ձեռներեց/գործատու 5. Սեփական գյուղատնտեսությամբ զբաղված 6. Այլ գյուղատնտեսությամբ զբաղված 99. Այլ 98. Կիրառելի չէ		1. Մշտական 2. Սեզոնային 3. Ժամանակավոր 4. Ժամանակ առ ժամանակ 98. Կիրառելի չէ		1. Աշխատավարձ 2. Տարիքային թոշակ 3. Կրթաթոշակ 4. Այլ թոշակ 5. Սոցիալական նպաստ 6. Դրամական օգնություն արտերկրից 7. Դրամական օգնություն Հայաստանից 8. Եկամուտ վարձակալությունից 99. Այլ				1. Հաշմանդամ 1-ին կարգ 2. Հաշմանդամ 2-րդ կարգ 3. Հաշմանդամ 3-րդ կարգ 4. Բնածին հաշմանդամ 5. Ծնողազուրկ երեխա 6. Միայնակ ծնող 7. Միայնակ թոշակառու 8. Փախստական 98. Նշվածներից ոչ մեկը	
		1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
1													
2													
3													
4													
5													
6													
7													
8													
9													
10													

(Խնդրում ենք լրացնել տվյալներ SS բոլոր անդամների վերաբերյալ)

1.3. Խնդրում ենք նշել այն եկամտի աղբյուրները, որոնք ընդհանուր են ձեր տնային տնտեսության համար համար:

	5. Վերջին 6 ամսվա ընթացքում եկամտի աղբյուր	6. Ամսական միջին եկամտի չափը / վերջին 6 ամսվա ընթացքում
	1. Աշխատավարձ 2. Տարիքային թոշակ 3. Կրթաթոշակ 4. Այլ թոշակ 5. Սոցիալական նպաստ 6. Դրամական օգնություն արտերկրից 7. Դրամական օգնություն Հայաստանից 8. Եկամուտ վարձակալությունից 99. Այլ	
1		
2		
3		
4		
5		

1.4 Ո՞վ է ձեր տնային տնտեսությունում ապահովում ֆինանսական միջոցների մեծ մասը ընտանեկան բյուջեում:
ՅՈՒՅՈՒՄ. մուղքագրել ընտանիքի համապատասխան անդամի հերթական համարը՝ արտացոլված աղյուսակ 1.2 –ում:

1.5. Ինչպիսի՞ պետական աջակցություն եք դուք կամ ձեր ընտանիքի անդամները ստացել 2012 թվին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻՆ – ԸՆԴՈՒՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Սոցիալական աջակցություն	1. Այո	2. Ոչ
1. Ծերության կենսաթոշակ		
2. Հաշմանդամության թոշակ		
3. Կերակրողին կորցնելու դեպքում թոշակ		
4. Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ		
5. Երեխայի ծննդյան նպաստ		
6. Աղքատության ընտանեկան նպաստ		
7. Գործազրկության նպաստ		
8. Միանվագ նպաստ, օգնություն		
99. Այլ /նշել/		

1.6. Ցանկության դեպքում ի վիճակի եք դուք կամ ձեր ՏՏ անդամները

	1. Այո	2. Ոչ
1 Ապահովել տան բավարար ջեռուցումը		
2 Վճարել տարեկան կտրվածքով մեկ շաբաթյա հանգստի համար		
3 Փոխել մաշված կահույքը		
4 Գնել բոլորովին նոր հագուստ		
5 Գնել միս, հավ, ձուկ առնվազն երկու օրը մեկ		
6 Հյուրընկալել ընկերների /առնվազն ամիսը մեկ անգամ		
7 Գնել երկու զույգ կոշիկ ամեն եղանակի համար		
8 Իրականացնել տան արտաքին հարդարում		

1.7. Ներկայումս ունե՞ք որևէ վարկ կամ պարտք:

1. Այո	1.1 Գումարի չափը	1.2 Արժույթը 1. Հայկական դրամ 2. ԱՄՆ դոլար 3. Եվրո 4. Ռուսական ռուբլի	1.3 Աղբյուրը /Հնարավոր է մի քանի պատասխան/ 1. Բանկային /վարկային կազմակերպություն 2. Ֆիզիկական անձ 99. Այլ _____		
2. Ոչ					

1.8. Ունե՞ք արդյոք անձնական օգտագործման/ կամ ձեր ընտանիքի անդամների կողմից օգտագործվող/ ավտոմեքենա:

1. Չունենմ
2. Ունենմ մեկ մեքենա
3. Ունենմ երկու մեքենա
4. Ունենմ երեք և ավել մեքենա

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՁԵԼԻՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՍԵՌԻ

2.1 Ձեր տնային տնտեսությունից քանի կին է հաճախում/հաճախել հետևյալ հաստատությունները (խնդրում ենք վերցնել շրջանակի մեջ)	Ոչ մեկ	1	2	3	4	5
1. Մանկապարտեզ	0	1	2	3	4	5
2. Միջնակարգ դպրոց	0	1	2	3	4	5
3. Պետական միջնակարգ մասնագիտական հաստատություն (քոլեջ, մասնագիտացված դպրոց)	0	1	2	3	4	5
4. Մասնավոր միջնակարգ մասնագիտական հաստատություն (քոլեջ,	0	1	2	3	4	5

2.1 Ձեր տնային տնտեսությունից քանի կին է հաճախում/հաճախել հետևյալ հաստատությունները (խնդրում ենք վերցնել շրջանակի մեջ)	Ոչ մեկ	1	2	3	4	5
մասնագիտացված դպրոց)						
5. Պետական ինստիտուտ/համալսարան	0	1	2	3	4	5
6. Մասնավոր ինստիտուտ/համալսարան	0	1	2	3	4	5
99. Այլ (խնդրում ենք նշել)						

2.2 Ձեր տնային տնտեսությունից քանի տղամարդ է հաճախում/հաճախել հետևյալ հաստատությունները (խնդրում ենք վերցնել շրջանակի մեջ)	Ոչ մեկ	1	2	3	4	5
1. Մանկապարտեզ	0	1	2	3	4	5
2. Միջնակարգ դպրոց	0	1	2	3	4	5
